

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

## Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: [info@artsakhlis.am](mailto:info@artsakhlis.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



Ամսալիս  
Գրիգորյան

ԱԶԱՏԱՄԱՐՏԻ  
ԱՐՑԱԽՅԱՆ ՊՈԵԶԻԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԶԱՏԱՄԱՐՏԻ  
ԱՐՑԱԽԻՑԱՆ ՊՈԵԶԻԱՆ  
Գրականագիտություն

Հեղափոխությունների ու  
հեղաշրջումները կարող են կարարվել մեկ  
օրում, մեկ ամսում, բայց իբրև պարմական  
իրադարձություններ երակի անցնում են  
զաղափառական և արապարհասպառության  
մի գուտական շրջան, հաճախ ներդնելով  
ոչ միայն մեկ, այլև երկու կամ ավելի  
սերունդների մաքառում:

Մերգեց Ասրինցան  
Ակադեմիկոս

Ստեփանակերտ  
«Վաշագան Բարեպաշտ», 2015

ՀՏ 821.19.0  
ԳՄ 83.3Հ  
Գ 888

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ»  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ԵՐԱԾԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

### ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

**Գիրքը նվիրում են սիրելի պապին՝  
Ալեքսանդր Գրիգորյանին**

**Գրիգորյան Ամայա**  
Գ 888 Ազատամարտի արցախյան պոեզիան/ Ա.  
Գրիգորյան.- Ստեփանակերտ:  
«Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2015.- 172 էջ:

Ամայա Գրիգորյանի «Ազատամարտի արցախյան պոեզիան» գրականագիտական աշխատությունից առանձին հատվածներ տպագրվել են Հայաստանի և Արցախի գիտական պարբերականներում ու առանձին գրքովկով։ Հետազոտությունն առաջին անգամ է հրատարակվում ամբողջական գրքով։

Հեղինակն իր ուսումնասիրության մեջ հանգամանորեն և ընդգրկուն ձևով անդրադառնում է ազատամարտի արցախյան պոեզիային, Արցախի գրական կազմակերպության (Խախախորհրդային շրջանից մինչև մեր օրերը) գործունեության մոլոր ու անհայտ էջերի լուսաբանմանը, կատարում գիտական դիտարկումներ, վերլուծություններ ու հետաքրքիր եզրահանգումներ։

Գիրքը նախատեսվում է բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողների և դասախոսների, դպրոցների գրականության ուսուցիչների, ինչպես նաև ընթերցողական լայն լսարանների համար։

ՀՏ 821.19.0  
ԳՄ 83.3Հ

ISBN 978-9939-1-0215-3

© Ամայա Գրիգորյան, 2015



## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Երևոյթների բազմակողմանի վերլուծությունը՝ դրանց համադրման և համեմատության միջոցով, խորքով ու էռությամբ, գիտական Ճշգրիտ հետևությունների հանգումը բնորոշ են Ամայա Գրիգորյանի մտածողությանը։ Լա կարողանում է դիտարկվող խնդրին մոտենալ անսպասելի եզրից՝ ապահովելով հետազոտական անսխալ արդյունք։ Սա երիտասարդ գիտնականի «Ազատամարտի արցախյան պոեզիան» գրքի ընթերցանությունից ստացած իմ առաջին տպավորությունն է։

Խոստովանեմ, որ այս գրքի ծնունդը սպասված էր։ Գոնե՝ ինձ համար։ Հեղինակը պահանջված գործ է դրել ընթերցողի սեղանին։ Տարիների ընթացքում Ամայա Գրիգորյանն ուսումնասիրությունների հարուստ նյութ է ժողովել՝ դիմելով նաև ոռու և համաշխարհային գրական ու գեղագիտական մտքի նորույթներին։ Աշխատել է դանդաղ, անշտապ, տքնաջանորեն։ Գործի հաջողությանը, բնականաբար, նպաստել է Ամայայի գիտական նախասիրությունների ու հետաքրքրությունների մեծ շրջանակը՝ Արիստոտելից մինչև Հեգել ու Տեն, մինչև Էկո, Կանկե ու Սարինյան... Եվ դա, ինչպես երևում է աշխատանքից, հեղինակին հնարավորություն է ընձեռել համեմատությունների, գիտական մեկնություննե-



ոի ու դիտարկումների միջոցով հասնել առաջադրված խնդրի լուծմանը, վեր հանել ազատամարտի արցախյան պոեզիայի գեղարվեստական և գաղափարական առանձնահատկությունները, կանգ առնել գրողների լեզվամտածողության, ոչի, նրանց ստեղծած կերպարների, եզերքային բնավորությունների ու կոլորիտի, ընդհանրապես պոետիկայի և այլ էական հարցերի վրա: Հարկ է ընգծել, որ Գրիգոր Ներսիսյանի, Աշոտ Գրաշու, Բոգդան Զանյանի, Գուրգեն Գաբրիելյանի, Հրաչյա Բեգլարյանի, Սոկրատ Խանյանի, Մովսես Յախշունցի, Լվարդ Ավագյանի, Ռոբերտ Եսայանի և մյուսների ստեղծագործությունների վերաբերյալ (նկատի ունեմքննության առարկա գործերի թեմատիկ ուղղվածությունը) ասպարեզի վրա մինչ այդ չի եղել գիտական լուրջ ու ամբողջական ոչ մի ուսումնասիրություն, և Ամայա Գրիգորյանի գիրքը նոր լույս է սփռում Արցախի գրական կյանքի դեռևս անհայտ ու մութ էջերի վրա: Մի հանգամանքի մասին ևս, որ հատուկ է այս գրքին, ուզում եմ շեշտել. գրական ու պատմական երևույթներն ու փաստերն այստեղ դիտարկվում են մեկ միասնական հարթության վրա, ժամանակի ոգին ու պատմության խորհուրդը ներկայացվում են իրական գույնների մեջ, կոնկրետ փաստերով ցույց է տրվում դժվարին ժամանակներում հոգևոր մշակույթի, առանձնապես՝ գրականության, անփոխարինելի դերը ժողովրդի անկախության և պետականության, ազգայինի պահպանման ու զարգացման գործում:

Գիրքն աչքի է ընկնում հարցադրումների հրատապությամբ ու արդիականությամբ: Այն, հիրավի, արժեքավոր ներդրում է ժամանակակից մեր գիտական մտքի ձեռքբերումների մեջ:

**ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**



Տակ Մայակովսկին կամ Նիկոլենկ  
որդեւոյն ց իմանալ, թե  
ինչ երանություն է՝ չճանաչված երկրի խաղաքայի  
եւ, առաջել եւս՝ բանապետի լինելը:

Վարդան Հակոբյան

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արցախյան ազգային-ազատագրական պայքարը մեր ժողովրդի դժվարին պատմության ամենալուսավոր էջերից է: Եվ, բնականաբար, այն իր արժանի արտացոլումն է գտել հայ գրականության մեջ: Ստեղծվում է գեղարվեստական տարեգրություն՝ ազգային ավանդույթների ամուր հիմքերի վրա: Բարձրարժեք գործեր են թռղել հայ գրականության դասականներ Րաֆֆին, Պեշիկթաշյանը, Նալբանդյանը, Խահակյանը... Գրականագիտությունը, թեև ոչ ամբողջական ու բազմակողմանիորեն, սակայն, պատշաճ ձևով անդրադարձել է նրանց ստեղծագործությունների մեկնությանն ու քննությանը: Իսկ եթե այդ գործում նկատվում են ինչ-ինչ բացթողումներ, ապա դրանք բացատրելի են խորհրդային տիրապետության գաղափարախոսության համատեքստում, քանի որ այդ շրջանում կային, այսպես ասած, ոչ ցանկալի թեմաներ, որոնց ձեռք մեկնելը վտանգներ էր պարունակում իր մեջ: Չնայած դրան, այնուամենայնիվ, եղել են գրականագետներ, ովքեր խիզախել են, ինչպես, օրինակ՝ Էդ. Զրբաշյանը, Հր. Թամրազյանը, Ս. Աղաբաբյանը, Ս. Սարինյանը՝ տալով իրենց ձշմարիտ գնահատականը: Գեղարվեստական խոսքի զարգացումը որոշակիորեն աշխուժացավ անկախության տարիներին, մի կողմից ազատ մտածողության հնարավորությունը խաղաց իր վճռորոշ դեր, մյուս կողմից ընդհանուր գործերի վրա խիստ բարերար ազդեցություն թողեց մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նոր՝ արցախյան փուլը: Արցախը դարձավ աշխարհի ամենատաք կետը, դա «արցախյան ֆենոմենի ինքնագիտակցման ժամանակն էր, որ ազդարարը եղավ հայոց ազգային ոգու արթնացման և խորհրդանիշն ազգային ազատագրական շարժման հոգևոր վերելքի մակընթացության»<sup>1</sup>: Արցախյան ազատամարտին նվիրված գեղարվեստական գործերով հանդես եկան Համո Սահյանը, Սիլվա Կապուտիկ-

<sup>1</sup> Սարինյան Ս., Բանաստեղծի հայտնությունը, Ստեփանակերտ, «Արցախ» հրատարակչություն, 1998, էջ 17:

յանը, Վահագն Դավթյանը, Հրաչյա Հովհաննիսյանը և ուրիշներ: Գրական գործը սկսեց անևախադեպ վերելք ապրել Արցախում, ուր և ծնունդ առավ ազատամարտի արցախյան բանաստեղծությունը՝ գեղարվեստական ուրովով որակով ու մակարդակով, ազատության ու անկախության պայքարի բովում թրծված: Առաջին հայացքից իրար հետ կապ չունեցող այս հասկացությունները՝ պետություն, անկախություն, ազատություն, գրականություն, օրգանական մի ամրոջություն են կազմում և, անշուշտ, մեկնելի են մեկը մյուսի ընդհանուր համատեքստի մեջ: Անդրադառնալով այս հարցերին՝ ակադեմիկոս Ս. Սարինյանը հանգել է միանգամայն նոր ու ինքնատիպ եզրահանգման, որը մեր գրականագիտական մտքի պատմության մեջ կարևոր շեշտադրումներ է մտցնում: Ահավասիկ. «Հայրենիքը նույն պետությունն է, և պատկերացնել պետություն հասկացությունն առանց առարկայացված մշակութային այս արժեքների՝ անհնարին է: Այդ արժեքները ստեղծագործում է գրականությունը (բանահյուսությունը): Եվ այստեղ է, որ գրականությունն ու պետությունը դառնում են համարժեք: Կարելի՞ է պատկերացնել Հունաստան առանց իր դիցարանի, չե՞ որ հենց այս միֆերն են, որ կազմավորում են Հունաստանի պետական-էթնիկական դիմանկարը, տեղայնացնում երկիրը: Կամ փորձենք Հունաստան ազատել Հոմերոսից, և նա կդիմագրկվի, կկորցնի իր անունը՝ այնքան նույնարժեք են Հունաստան-Հոմերոս խորհրդանիշները»<sup>2</sup>:

Հիրավի, դիտարկումը ձից է կատարված՝ առանց գրականության չկա պետություն: Եվ հենց այս ելակետի վրա է, որ մենք փորձում ենք կառուցել «Ազատամարտի արցախյան պոեզիան» գրականագիտական աշխատանքը՝ իիմք ընդունելով ինչպես հայ, այնպես էլ ոուս և համաշխարհային իրականության անվանի դեմքերի (Ֆ. Հեգել, Ս. Սարինյան, Վ. Կանկե, Էդ. Զրբաշյան, Ռ. Ուելլեք, Խ. Օ.

<sup>2</sup> Սարինյան Ս., «Այց գրականության երկու դարը, գիրք չորրորդ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակություն, 2004, էջ 20:

Ուորրեն, Խ. Օրտեգա-ի-Գասեթ, Ալ. Թոփչյան և ուրիշներ) գիտական աշխատանքներում առաջադրված դրույթներն ու մոտեցումները:

Մեր գրականագիտական աշխատանքի երեք գլուխներից առաջինը, որը կրում է «Ազատամարտի արցախյան պոեզիայի պատմական ուրվագիծը» վերնագիրը, Նվիրված է Նախախորհրդային շրջանից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածում գրականության զարգացման խնդիրներին, նրա գաղափարական-գեղարվեստական ուղղություններին ու հայտնություններին: Այստեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ինչպես գրականության զարգացման, այնպես էլ ժողովրդական ազգային ոգու պահպանմանը, երևույթը դիտվում է մեկ միասնության մեջ: Եվ, հայկական Նախիջևանի ու Լեռնային Ղարաբաղի օրինակով, ցույց ենք տալիս այն մեծ և անուրանալի դերը, որ կատարեց գրականությունը Արցախում ազգայինի, հայության պահպանման գործում: Այս համապատկերում վերլուծվում, դիտարկվում են Գ. Ներսիսյանի, Ա. Գրաշու, Թ. Հուրյանի, Բ. Զանյանի, Հր. Բեգլարյանի, Գ. Գաբրիելյանի, Վ. Հակոբյանի, Ա. Հարությունյանի և ուրիշների ստեղծագործությունները, որոնք հայրենասիրական ոգին, հայոց ազգային տրամադրությունները բարձր են պահում հասարակության մեջ, մեծապես նպաստում մարդկանց հայեցի, ազգային միասնության գաղափարներով դաստիարակելուն: Գեղարվեստական որոնումները պակվում են հաջողությամբ, գրական գործը վերելք է ապրում: Եվ ամենաբնորոշ առանձնահատկությունը, որ որդեգրում է արցախյան բանաստեղծությունը, դա գեղարվեստական Հշմարիտ խոսքին հատուկ դիմամիզմն է ու պոլեմիկան, իսկ դրամատիկական այն շեշտերը, որոնցով կարելի է բնութագրել Արցախում ծնվող ցանկացած բանաստեղծություն՝ անկախ նրա գեղարվեստական մակարդակից, դա բացատրվում է իինավորց հայկական այս եզրքին բաժին հասած Ճակատագրով ու դժվարին պայմաններով, մեկը մյուսին հաջորդող տխուր իրադարձություններով:

Երկրորդ գլխում «Բանաստեղծի և բանաստեղծության ձայն հայրենականը», առավել ընդգրկուն ձևով անդրադառնում ենք ազգայինի ու ավանդականի վրա ստեղծվող նոր շրջանի բանաստեղծությանը, ավելի կոնկրետ՝ Ազատամարտի արցախյան պոեզիային՝ այս դիտարկելով ինչպես հայ, այնպես էլ ոռու և համաշխարհային գրականության ձեռքբերումների ընդհանուր ֆոնի վրա։ Աշխատանքում ցոյց են տրվում ազատամարտի արցախյան պոեզիայի բնութագրական գծերը, նրա զարգացման միտումները, մանավանդ հանգամանորեն վերլուծվում են անվանի գրողներ Գ. Գաբրիելյանի, Հր. Բեգլարյանի, Վ. Հակոբյանի, Յու. Սահակյանի, Ա. Հարությունյանի, Մ. Ցախոշունցի, Ն. Ավագյանի, Ռ. Եսայանի և ուրիշների ստեղծագործությունները, նրանց անհատական խառնվածքին բնորոշ գեղարվեստական միջոցներն ու կողմերը։ Եթե Գ. Գաբրիելյանի, Հր. Բեգլարյանի, Մ. Ցախոշունցի պոեզիային հատուկ են ժողովրդական պարզությունն ու ազգային բանահյուսական տրամադրությունները, ապա Վ. Հակոբյանի, Ա. Հարությունյանի ու Ռ. Եսայանի ստեղծագործություններն աչքի են ընկնում ժամանակի ինտելեկտուալ մտածողությամբ, նորարարական հայտնություններով։ Արցախյան ազատամարտն ոչ միայն թեմատիկ առումով, այլև գեղարվեստական միջոցների, հնարավորությունների, գաղափարական շեշտադրումների տեսանկյունով զգալիորեն հարստացրեց Արցախում ստեղծվող պոեզիան, որն, անշուշտ, զարգացման ներքին աղերսներ ունի համաշխարհային գրականության նորօրյա հայտնությունների հետ։ Ինչպես ասում են, արցախյան պոեզիան չի տապակվում սեփական յուրի մեջ։ Ազատամարտն արցախյան պոեզիային նոր ռիթմեր հաղորդեց։ Արցախյան հիմնահարցը հստակ պահանջներ առաջադրեց գրողներին։ Տեղի է հիշելու Պ. Սևակի հանրահայտ միտքը՝ «իմնդիրն է ստեղծում իր գրողին»:<sup>3</sup> Իսկ ահա Սիլվա Կապուտիկյանը երևույթին մոտենում է մեկ

<sup>3</sup> Սևակ Պ., Երկերի ժողովածու, հատոր 5, Երևան, «Հայաստան» հրատարկչություն, 1974, էջ 270։

այլ տեսանկյունով՝ ներկայացնելով պատմության դժվարին քառուղի-ներում ձևավորված հայ գրողի նկարագիրը. «Խոսքս ուզում եմ սկսել Եվգենի Եվտուշենկոյի հրապարակախոսկան հոդվածներից մեկում վերջին տարիներս հաճախակի հիշվող այսպիսի մի արտահայտությամբ. «Պոետը Ռուսաստանում միայն պոետ չէ»: Ես կասեի, որ հայ բանաստեղծը կրկնապես ավելին է: Եվ այսօրվա առիթով ուզում եմ ընգծել՝ Ղարաբաղի բանաստեղծը Եռակի բանաստեղծ է, շատ ավելին է, քան բանաստեղծը»:<sup>4</sup> Ի դեպ, Նշենք, որ «Արցախյան պոեզիա» ձևակերպումն ամենակին էլ միտում չունի այն տարանջատելու մայր գրականությունից: Խնդիրն այստեղ սահմանային տարանջատումներ «գծագրելու մեջ չէ, այլ միտված է արցախյան գրականության վերլուծությանը՝ որպես տվյալ տարածքում կայացող պատմական երևույթների արձանագրողի»<sup>5</sup>:

Արցախյում ստեղծվող պոեզիային իր հոդվածներից մեկում անդրադարձել է նաև գրականագետ Արք. Նիկողոսյանը. «Արցախյան հերոսամարտն, այդ առումով, իր հաղթական ու ողբերգական դրվագներով՝ տիեզերական իրադարձություն է Վարդան Հակոբյանի ընկալումներում, որը միում է Էպիկական ուժի ընդհանրացումների, իսկ Արցախը սոսկ ծննդավայր չէ նրա համար, այլ գոյարանական կենսատարածք, որը և առարկայական է դարձնում տիեզերական շարժումների էքֆիստենցիալ սարսափների զգացողությունը, և բացահկության հպարտություն շնորհում թեկուզ խորքում կրկին դրամատիկ շեշտադրումներով».

*Իսկ Մայակովսկին կամ Ուիթմենը  
որտեղից իմանան, թե  
ինչ երանություն է՝ չՃանաչված երկրի*

<sup>4</sup> Սոլոմոնյան Տ., Տաճարի Ճանապարհին կամ մենարանի ուխտավորը, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Կաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, Էջ 8:

<sup>5</sup> Հակոբյան Հ., Գրականություն՝ Արցախ, Granish.org:



բաղաքացի և, առավել ևս՝  
բանաստեղծ լինելը»<sup>6</sup>:

Ըսդհանրապես, պիտի ասել, որ պատերազմական թեմատիկայի նկատմամբ ոչ միայն մեր, այլև համաշխարհային իրականության մեջ հետաքրքրությունը մեծ է: Եվ պատճառներն, իհարկե, շատ են: Դրանցից մեկը, անշուշտ, բացատրվում է կյանքի ու մահվան սահմանագծում էքստրեմալ պայմաններում, ինչպես ասում են, ծավալված անզիջում պայքարով, ավելի վառ արտահայտված մարդկային հատկանիշների, բնավորության գծերի, նպատակադրումների գործոնով, գործողությունների տաք ու բուռն ընթացքով, որոնք և չեն կարող իրենց արտացոլումը չգտնել գրական գործերում: Եվ գրականությունն իր մեջ ավելի շատ պատմություն է կրում, քան ինքը պատմությունը: Անդրադառնալով արցախյան ազատագրական պայքարին՝ իր «Դսկսված և չափարտված պատերազմը» գրքում, գրականագետ Վարդան Դսրիկյանը գրում է. «Արցախում մղվող ներկադաժան պատերազմի ընթացքում ևս ժողովուրդը ոչ միայն ծնեց իրենց նահատակությանն ընդառաջ գնացող հերոսների, այլև նրանց նվիրեց սրտի իր խոսքը, որն անկեղծ պողոթկումով է ինչում երկրամասի գրեթե բոլոր բնակավայրերում»<sup>7</sup>:

Հանրահայտ է, որ ազգային-ազատագրական շարժումը խորհրդային բռնապետության մեջ սկսվեց Արցախից և միանգամից միշագգային արձագանք գտավ ամբողջ մոլորակում: Մի կարևոր հանգամանք ևս, որին անդրադառնում ենք աշխատության այս գիխում ազատամարտի արցախյան պոեզիան հաղուստ է նաև գործերով, որոնց հեղինակները համաշխարհային գրականության մեջ արդեն հայտնի դեմքեր են: Հարցին յուրովի է անդրադարձել բանաստեղծ

<sup>6</sup> Հակոբյան Վ., Փակիր աչքերդ չերևաս, Երևան, «Ակտուալ Արվեստ» հրատարակչություն, 2011, էջ 6:

<sup>7</sup> Դսրիկյան Վ., Դսկսված և չափարտված պատերազմը, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2014, էջ 349:



Ալեն Գինզբերգն իր «Հրեշտակային սև անցքեր» բանաստեղծության մեջ.

*Հրեշտակային քաղաքը նայում է սև անցքերի միջով,  
նայիր ներքև, երկրին, և տես հրկիզված*

*Լեռնային Ղարաբաղը:  
Ինչքան դեռ կտևի թունելը ցավի<sup>8</sup>:*

Գինզբերգի այս տողերը ներքին աղերսներ ունեն Օ. Մանդելշտամի «Ֆայտոնչին» բանաստեղծության հետ, որտեղ սակայն ոչ թե ավերված քաղաքը «սև անցքերի միջով» է նայում աշխարհին, այլ՝ ակնախոռոչներով։ Եթե Գինզբերգն ակնարկում է այսօրվա, ապա Մանդելշտամն անցյալ դարի 30-ական թվականների ավերների ու սարսափների մասին է խոսում, որոնց «հեղինակը» նույն թուրքերն են։

*Ես Ղարաբաղն եմ հիշում լեռնային-  
Գազանաբարո Շուշի քաղաք,  
Ուր Ճաշակել եմ սարսափներ մահի՝  
Հոգուս խոռոչին համանվագ։  
Քառասուն հազար մեռյալ լուսամուտ-  
Ակնախոռոչներ անթիվ-անվերջ.  
Դառը տքնակի բռժոժը հմուտ  
Թաղված է այնտեղ՝ լեռների մեջ<sup>9</sup>։*

Իհարկե, անհատականացված խոսքի, մոտեցումների ու պատկերավորման միջոցների համայիր դիտարկումը, գեղարվեստական տարբեր հնարավորությունների ու գաղափարական լուծումների բազմազանության առկայությունը մեզ հնարավորություն են տալիս ավելի հստակ գծերով ներկայացնել այն կարևոր առանձնահատկու-

<sup>8</sup> Հարությունյան Ա., Ընտրանի ամերիկյան և անգլիական պոեզիայի, Երևան, «Ապոլոն» հրատարակություն, 2000, էջ 361։

<sup>9</sup> Մանդելշտամ Օ., Մեգանոմ, Երևան, «Ապոլոն» հրատարակություն, 1993, էջ 65։



թյուններից մեկը, գուցե և՝ ամենազլխավորը, որն ունի Արցախում ստեղծվող պոեզիան: Դա պոետական խոսքի՝ որպես գեղարվեստական երևոյթի հավաստիության խնդիրն է, որն, առաջին հերթին, բացատրվում է նրանով, որ հեղինակը մասնակիցն է ազատամարտի կամ ականատեսը: Հանգամանք, որ պոեզիայի մեջ անմիջականության և խոսքի համոզչականության ապահովման լավագույն միջոցներից է, այս գուգահետի վրա ի հայտ է գալիս և ազգային ցավի տաք զգացողությունը: Այսպես, ազատության համար նահատակված հերոսի մասին գրված իր «Կարոտի երգ» բանաստեղծության մեջ Հր. Բեգլարյանն այսպիսի տողեր է գրում.

*Քո սև ու սաթ զանգուրներին  
Ուրց է, նարոտ է,  
Սոյուծ տղա, ել, տուն արի,  
Ճամփադ քարոտ է:*

*Կարոտել եմ, կարոտել եմ,  
Ինչու չես գալիս,  
Կարոտներից կրակվել եմ,  
Իմ սիրտն է լայիս<sup>10</sup>:*

Ասելիքի հստակությունը նաև խոսքի պարզ կառուց է հուշում բանաստեղծին, որը և խոսքը դարձնում է առավել վարակիչ և հուզական, գեղարվեստական փաստը՝ համոզիչ:

Գիտական վերլուծության ենթարկելով ազատամարտի արցախյան պոեզիան՝ մենք կանգ ենք առնում մի էական հարցի վրա նոյնպես: Դա այն է, որ գոյապայքարն արտացոլող բոլոր ստեղծագործություններում առաջին խնդիրը ոչ միայն Արցախ երկրամասի, այլև հայոց աշխարհի լինելության, ամբողջականության, չմասնատվածության գաղափարն է: Այս մասին հետաքրքիր ձևակերպում ունի Գա-

<sup>10</sup> Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ստեփանակերտ, «Պոլիգրաֆ» հրատարակչություն, 2000, էջ 31:

րեգին Նժդեհը. «Հայաստանն ինչ ցուցանակ էլ որ կրելու լինի, չի կարող գոյություն ունենալ առանց Ղարաբաղի ու Զանգեզուրի»<sup>11</sup>:

Արցախյան ազատամարտի պոեզիան քաղաքական ու քաղաքացիական հստակ շեշտադրումներ ունի, որոնք և արցախցու, հայի բնավորության մեջ ընդում են նրա վճռական համոզմունքները, դիրքորոշումները, առաջին հերթին՝ նրա նվիրվածությունը հայրենիքին: Իսկ մեր թշնամին՝ թուրքը, չի ուզում հավատալ, որ «Ղարաբաղն ինքնիշխան ժողովրդի հայրենիք է»<sup>12</sup>:

Իհարկե, գիտական աշխատանքի մեջ ընդգծվում է, որ խնդիրն ավելի ընդգրկուն է, քան այն կարելի է պատկերացնել: Եվ ազատամարտի թեման չի ենթադրում սոսկ ռազմական գործողությունների, պատերազմական իրավիճակների նկարագրություն: Այստեղ գրական-գեղարվեստական նյութը բավականին մեծ է ու տարողունակ և իր մեջ ամփոփում է հայ ժողովրդի անցյալի, ներկայի ու ապագայի, արդարության, ազգային անկախության և այլ կարևոր հիմնախնդիրների մի ամբողջ համակարգ:

Ազատամարտի արցախյան պոեզիայի ժանրային առանձնահատկություններին ենք անդրադառնում աշխատության երրորդ՝ «Պատմության դասերը» գլխում: Այստեղ հիմնականում վերլուծության են ենթարկվում գրողների մեծակտավ գործերը՝ պոեմներ, ասքեր, չափածո պատումներ, որոնք հնարավորություն են տալիս հանգամանորեն ծավալվել բանաստեղծների թեմատիկ նախասիրությունների, կերպարների ստեղծման հնարավորությունների, խոսքի պատկերավորման միջոցների, ավանդականի և նորի համադրման, պոետիկային վերաբերող հարցերի շուրջ: Եվ, որ ամենագլխավորն է, գիտական հետազոտման են ենթարկվում պատմության հուշած այն դասե-

<sup>11</sup> Ուղուարյան Բ., Արցախյան գոյապայքարը, Երևան, «Գիր գրոց» հրատարակչություն, 1994, էջ 164:

<sup>12</sup> Մաթևոսյան Հ., Սպիտակ թոյթի առօն, Երևան, «Հայգիտակ» հրատարակչություն, 2004, էջ 299:

րը, որոնք յուրատիպ գեղարվեստական մարմնավորում են գտել գրողների մեծակտավ գործերում և որոշակիորեն կրում են Արցախի պատմության առանձնահատկության կնիքը: Ինչի մեջ է պատմության այդ հատկականությունը: Թերևս այն հանգամանքը, որ Արցախն իր պետականությունը մշտապես պահպանել է՝ մելիքությունների ձևով (անգամ այն ժամանակ, երբ մայր Հայաստանը կորցրել էր իր պետականությունը), դա որոշակիորեն կապ ունի հայկական հինավոր այս եզերքի ու Նրա մարդկանց ինչ-ինչ էական գծերի հետ, որոնք, ի վերջո, Ներկայանալով որպես ազգային բնավորություն, դառնում են նաև գեղարվեստական ինքնատիպ կերպար: Թ. Ելիոթը, խոսելով պատմական կերպարների նկատմամբ գեղարվեստագետի և, մասնավորապես, բանաստեղծի վերաբերմունքի մասին՝ «Ավանդույթ և անհատական տաղանդ» հոդվածում, կարևորում է գրողի պատմականության զգացումը, սակայն՝ ուրույն մոտեցումներով: Ըստ Նրա, «պատմականության զգացումը պահանջում է ձանաչել ոչ միայն անցյալի անցյալությունը, այլև Նրա ներկայությունը»<sup>13</sup>: Այս միտքը գեղարվեստական բավականին հետաքրքիր ձևակերպում է ստացել Գ. Գաբրիելյանի մի բանաստեղծության մեջ, որը նվիրված է Արցախին: «Դու՝ բիբլիական իմ ինություն// Եվ նորություն՝ իմ նորօրյա»<sup>14</sup>:

Աշխատության երրորդ գլխում վերլուծության են ենթարկվում Հր. Բեգլարյանի «Խաչենաբերդ», Վ. Հակոբյանի «Ղարաբաղ», «Երկնային պատիճ», «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում», «Տաճարն Աստծո», «Քրիստոսի ծաղկիները», Ս. Խանյանի «Արցախի արծիվը», «Լահատակ Լուսո», Ռոբերտ Եսայանի «Ուեքվիեմ», Ն. Ավագյանի «Բանալին», «Տիրոջ հետ», Ա. Արսենիի «Լոռության րոպե», Ա. Հարությունյանի «Լամակ Նոյին» մեծակտավ գործերը: Բոլոր ստեղծագործու-

<sup>13</sup> Ելիոթ Թ., Սեղալ Երկիրը, Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 1991, էջ 106:

<sup>14</sup> Գաբրիելյան Գ., Արցախյան նվազարան, Երևան, «Չանգակ-97» հրատարակչություն, 2002, էջ 103:



թյունների միջով, ինչպես ընդունված է ասել, կարմիր թելի պես անցնում է մի գաղափար՝ մեր ազգի փրկությունը մեր ժողովրդի միասնականության մեջ է, ազգային ներքին համերաշխության, սիրո մեջ, երկրին ու ժողովրդին բոլորանվեր ծառայելու, հայոննի հողու ու տունը շենացնելու մեջ: Մեր աշխատանքում մենք ցուց ենք տալիս, թե այս և նման գաղափարներն ինչպիսի գեղարվեստական մարմնավորումներ են գտել բանաստեղծների կերտած կերպարների մեջ, մանավանդ, որ այդ կերպարներից շատերն իրական դեմքեր են, ժողովրդական հերոսներ, որոնք անցել են հայոց ազատագրական պատերազմների բովով: Եվ կենդանի հերոսներին ստեղծագործությունների գլխավոր կերպարներ դարձնելը ևս ազատամարտի արցախյան պոեզիայի գլխավոր առանձնահատկություններից է: Մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում նաև ստեղծագործությունների լեզվական խնդրին, մանավանդ, որ այն հաճախակի անդրադարձներ է ունենում դեպի արցախյան հարուստ բարբառը (ինչպես, օրինակ, Գ. Գաբրիելյանի «Ղարաբաղի <որովելը» գործում), նպաստում ոչ միայն ասելիքի պարզության ու խորությանը, անմիջականությանը, այլ նաև կոլորիտային կերպարների ստեղծմանը:

Աշխատության «Եզրակացություն» բաժնում անդրադառնում ենք ազատամարտի արցախյան պոեզիայի յուրահատկություններին, հայ քնարերգության մեջ նրա ունեցած ուրույն տեղին, թեմատիկ-բովանդակային, գաղափարական ու գեղարվեստական առանձնահատկություններին, զարգացման գլխավոր միտումներին ու դերին՝ մեր ազգային պոեզիայի զարգացման ընդհանուր պրոցեսի մեջ:





## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Խնեղացնոր թմբիր է իգել հիմա հիւկանդ իմ հոգում,  
Սկսն անկյանք շրիմլերի խուզք երգիչն եմ, որ էլի  
Ծքած աշխուզտ աղմովները կենսաթրթիու ժիորի.  
Հետ եմ դարձել գերեզմանված այս խաղաքը հայրենի...

Գլուխ Ներսիսյան

ԱՉԱՏԱՄԱՐՏԻ  
ԱՐՑԱԽՅԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ  
ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՐՎԱԳԻԾԸ

Կովկասյան տարածաշրջանում խաղաղության պահպանման և ժողովուրդների սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի զարգացմանն առնչվող խնդիրներին անդրադառնալիս, աշխարհի մեծ ու փոքր տերությունների ներկայացուցիչները, պատմաբաններն ու քաղաքական գործիչները՝ վերջին տասնամյակների ընթացքում, ասես պարտադիր ձևով խոսում են նաև արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման անհրաժեշտության մասին, կատարում բազմապիսի առաջարկություններ: Ասել է թե՝ արցախյան հիմնախնդիրը վաղուց արդեն միշագգային նշանակություն է ձեռք բերել, քանի որ Նրա ելքով են պայմանավորվում տարածաշրջանային գրեթե բոլոր ոլորտների (տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և այլն) զարգացումները: Եվ, այդուհանդերձ, Արցախի հիմնախնդիրն առայսօր իր խորքով ու էությամբ ամբողջապես ուսումնասիրված չէ, բացթողումները զարմանալիորեն շատ են նաև հայ իրականության մեջ: Եվ գուցե հենց բազմաթիվ պատճառներից մեկն էլ դա է, որ, ինչպես ասում են, սայլը տեղից չի շարժվում: Այս առումով հիմնահարցերի վրա նոր լուս են սփռում Կիմ Ղահրամանյանի «Իրավակարգի 1500-ամյա ակունքներն Արցախում» և «Արցախ. Խեղաթյուրված և անտեսված հարցեր» աշխատությունները: Հեղինակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման վերաբերյալ միանգամայն հետաքրքիր դրույթ է առաջադրում: «Ինչպես պատահեց,- գրում է նա,- որ ԽՍՀՄ դաժան ռեժիմի պայմաններում մի բուր ժողովուրդ կարողացավ ոտքի կանգնել հանուն իր ինքնության պահպանման: Իսկ երբ Աղրբեջանը, լայնորեն օգտվելով մուկովյան իշխանությունների ռազմական ու քաղաքական աջակցությունից, պատերազմ սանձագերծեց ազգային ինքնորոշման պայքարը խեղեկու, երկրամասը հայաթափելու համար, խայտառակ պարտություն կրեց»<sup>1</sup>: Կ. Ղահրամանյանի կարծիքով իրա-

<sup>1</sup> Ղահրամանյան Կ., Իրավակարգի 1500-ամյա ակունքները Արցախում, Երևան, «ԴԱԼ» հրատարակություն, 2010, Էջ 5:

դարձություններն ունեն «պատմական և իրավական արմատներ», որոնք սկիզբ են առնում Վաչագան Բարեպաշտի «Կանոնական սահմանադրություն»-ից<sup>2</sup>:

Իր «Արցախ. խեղաթյուրված և անտեսված հարցեր» աշխատության մեջ պատմաբանը՝ գիտական վերլուծությունների ու պատմական ճշգրիտ փաստերի դիմելով, առաջ է քաշում ժամանակի պահանջներից բխող նոր գաղափարներ, որոնք հնարավիրություն են տալիս ավելի հստակ ու ամբողջական տեսնել երևոյթները, նորովի մեկնաբանել դրանք: Ինչպես ասում են, «գաղափարները նման են դիտաշտարակի, որի բարձունքից մենք ուսումնասիրում ենք աշխարհը»<sup>3</sup>: Կիմ Ղահրամանյանի հետևությունը խիստ արդիական է բոլոր ժամանակների համար: Ահավասիկ. «Հայ ժողովրդի գոյությունն իր պատմական հայրենիքում թուրքիայի կողմից դիտվում է անընդունելի: Այդպես եղել է 300 տարի առաջ, այդպես է եղել 100 տարի առաջ, այդպես է եղել քառորդ դար առաջ, երբ սկսվել էր Արցախ-Ղահրաբաղի ազատագրական պայքարը: Այդպիսին է վերաբերմունքը նաև այսօր, երբ Աղրբեջանում հերոսացնում են թեկուզ բուժապետում, թեկուզ քնած՝ հայ սպանողին, իսկ Ստամբուլում հայկական թերթի խմբագիր Հրանտ Դինքին սպանում են՝ հենց միայն հայ լինելու պատճառով: Ու համոզված ենք՝ այդ վերաբերմունքը չի փոխվի երբեք, որովհետև դա այդ ցեղի գոյության ձևն է, նրա էթնիկական հիմնական հատկանիշներից է բխում»<sup>4</sup>: Հիրավի, այդպիսին է իրադրությունը, այդպիսին է Ճշմարտությունը: Եվ ահա թե ինչու մեր ժողովրդի պատմությունը՝ սերնեսերունդ, մաքառումների, ազգային ազատագրական շարժման, պայքարի ու հերոսապատման

<sup>2</sup> Կաղանկատվացի Մ., Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1969, էջ 65:

<sup>3</sup> Օրտեգա-Ի-Գասեթ Խ., Մշակույթի փիլիսոփայություն, Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 1999, էջ 164:

<sup>4</sup> Ղահրամանյան Կ., Արցախ. խեղաթյուրված և անտեսված հարցեր, Երևան, «ԴԱՀՀ» հրատարակչություն, 2013, էջ 154:



տարեգրություն է հիմնականում:

«Մտավորականությունը և արդի ազգային շարժումը» հոդվածում ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը նշում է, որ «Հեղափոխություններն ու հեղաշրջումները կարող են կատարվել մեկ օրում, մեկ ամսում, բայց իբրև պատմական իրադարձություններ նրանք անցնում են գաղափարական նախապատրաստության մի տևական շրջան, հաճախ ներդնելով ոչ միայն մեկ, այլև երկու կամ ավելի սերունդների մաքոռումը»<sup>5</sup>: Մեր կարծիքով նույնը վերաբերում է նաև արցախյան ազատագրական պայքարի ձևավորմանը:

Ինչպես հայտնի է, 20-րդ դարի 20-ական թվականների սկզբին Սովետական Միության հանրապետությունների կազմավորման ընթացքում բոլշևիկյան Ռուսաստանի կառավարության և անձամբ Ստալինի թելադրանքով Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը անջատվեցին Հայաստանից և բռնակցվեցին Ադրբեյջան կոչված հանրապետությանը: Եվ այսպես, Նախիջևանի ինքնավար հանրապետության և Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Ճակատագրերը դրվեցին փորձության առաջ՝ Ադրբեյջան կոչված հանրապետության գաղութային քաղաքականության հանդեպ: Գաղութացման մի քաղաքականություն, որը քողարկված էր ազգերի բարեկամության վերաբերյալ կոմունիստական կուսակցության ազգաձուլման գաղափարախոսությամբ: Եվ երկու ինքնավարությունների ճակատագիրն այլ ընթացք ունեցավ: Այստեղ արժե վկայակոչել մի հպանցիկ երկխոսություն՝ ՀԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի և ՀՀ գրողների միության Նախագահ Լևոն Անանյանի միջև: Երբ խոսք բացվեց Արցախի հիմնահարցի մասին, Սարինյանը, կիսակատակ հարց է տալիս Անանյանին, թե ինչու, այնուամենայնիվ, Նախիջևանի դանդաղորեն հայաթափվեց, իսկ Ղարաբաղը դիմադիր եղավ և պահպանեց իր

<sup>5</sup> Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գիրք չորրորդ, Երևան, «Տիգրան Մեծ», հրատարակություն, 2004, էջ 41:

ազգային դիմագիծը: Անանյանն իր հերթին կիսակատակ պատասխան տվեց. «Որովհետև Նախիջևանը բանաստեղծություն չուներ»:

Որքան էլ կիսակատակ, մեկնաբանում է Սարինյանը, Անանյանի պատասխանը, մասնավոր իմաստով, Ճշմարտության մասին է ակնարկում: Ճշմարիտ է, որ սոցիալ-ազգային ավելի հիմնավոր պատճառների հետ էական էր նաև այն հանգամանքը, որ Նախիջևանի հայկական համայնքը մշակույթ ու մշակութային հաստատություններ չուներ:

Ընդունված Ճշմարտություն է, որ մշակույթն ազգակազմի հատկություն ունի: Նա ազգի պատմության հիշողությունն է: Մշակույթը նաև լեզու է, որ միավորում է ազգը՝ հաղորդակցության միջոցներով: 1922 թ. Ստեփանակերտում սկսում է լուս տեսնել «Խորհրդային Ղարաբաղ» թերթը, որտեղ լուսաբանվում է մարզի կյանքը: Սկսում են գործել նաև հայկական դպրոցներ, որոնք կրթական համակարգ են ստեղծում նոր սերնդի մտավոր ձևավորման համար:

Քսանական թվականներին նշանակալից քայլեր են կատարվում մարզի գրական կյանքը կազմակերպելու ուղղությամբ: Աստիճանաբար ձևավորվում է ԼՂՀ գրողների միության մարզային բաժանմունքը: Այս գործում էական դեր է կատարում Գրիգոր Ներսիսյանը: Ծննդով շուշեցի լինելով՝ նա հանգամանքների բերումով գրական ու հասարակական գործ էր կատարում Խորհրդային Միության տարբեր քաղաքներում: 1926-ին վերադառնում է Լեռնային Ղարաբաղ և Նվիրվում մարզի գրական և լուսավորական գործի ծավալմանը: Նա արդեն հայտնի բանաստեղծ էր և նոյնիսկ փորձում էր հաստատել իր գուգահեռը Չարենցի նմանողությամբ: Ներսիսյանին կարելի է համարել արցախյան նոր ժամանակների պոեզիայի հիմնադիր: Նրա ստեղծագործության ոգին ու գաղափարը հայրենիքի ազգային ինքնության պահպանությունն է: Գրողի ազգային գործունեությունը վերագրվում է նացիոնալիզմի հակառակակցական թեքումի, և նա թուրք-աղբյուջանական խուզարկուների սադրանքով զոհ է դառնում

1937 թվականի ստալինյան բռնությանը:

Գրիգոր Ներսիսյանի մահից հետո Ղարաբաղի գրական կազմակերպության պահպանման ուղղությամբ գործունեություն են ծավալում Թաթով Հուրյանը, Միքայել Հարությունյանը, Վերոի Վերխաչյանը, Աշոտ Գրաշին: Առավել ակտիվ աշխատանք է սկսում Բոգդան Զանյանը: Վերադառնալով հայրենական պատերազմից՝ նա ձեռնամուխ է լինում մարզային գրողների միության կազմավորմանը, բայց, Աղրբեջանի դեկավարի՝ մուսավարական Միր Զաֆար Բագիրովի անմիջական ցուցումով, նացիոնալիզմի մեղադրանքով աքսորվում է Սիրիո: Վերադառնալով աքսորից՝ Զանյանը համագործակցում է գրողների միության դեկավարի՝ Բագրատ Ուլուբարյանի հետ, որի բնակարանը դարձել էր հայրենասեր Երիտասարդության ուստատեղի:

Ազգային հոգսերով ու տրամադրություններով լեցուն այդ տարիների մասին հետաքրքիր գրառումներ է թողել Բագրատ Ուլուբարյանը. «...Մենք խարկանք ունեցանք կարծելու, թե բացվել են ազատության բոլոր դուները: Արցախի ճանապարհը բանուկ դարձավ Հայաստանի գրողների, մշակույթի մյուս բնագավառների գործիչների համար: Առաջինը Հրաչյա Քոչարն էր, որ 1956-ին ոտք դրեց Ստեփանակերտ, ծանոթացավ մարզի շրջաններին. Թարթառի հովտում գինովցած, արտասուրքը խաժ աչքերում շողացնելով՝ ասաց. «Հայը եթե դրախտ է ունեցել՝ սա՞ է: Ես Էլ մտածում էի, թե Մամեդն ինչո՞ւ ձեռքից բաց չի թողնում»: Ապա Եկան Նաիրի Զարյանը, Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը, Պարույր Սևակը, Հրաչյա Հովհաննսիյանը: Իսկ Համո Սահյանի, Սերո Խանզադյանի, Սուլեն Այվազյանի, Սողոմոն Սողոմոնյանի համար Արցախն արդեն պապուց տուն էր...»<sup>6</sup>:

Ղարաբաղյան մշակույթի գործունեության շրջանակները 40-50-ական թվականներին նկատելիորեն ընդլայնվում են: Բարվում ստեղ-

<sup>6</sup> Ուլուբարյան Բ., Արցախյան գրյապայրարձ, Երևան, «Գիր-Գրոց» հրատարակչություն, 1994, էջ՝ 177:

ծագործում էին գրողների ու մտավորականների ձանաչված դեմքեր՝ Գարեգին Սևունց, Սամվել Գրիգորյան, Աշոտ Գրաշի, Համո Սահյան, Արշավիր Դարբնի, Լեռնիդ Հովունց և ուրիշներ, գործում էր հայկական թատրոնը, լուս էր տեսնում «Կոմունիստ» հայերեն թերթն ու «Խորհրդային գրող» ամսագիրը: Խրուչովյան ռեժիսորմերի տարիներին նոր լիցք է ստանում արցախյան ազատագրական շարժումը: Գյուղերում հայտնվում են ստորագրահավաքներ՝ Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու հանձնարարականով:

Բրեժնևյան ռեստավրացիան վերստին սրում է թուրք-ադրբեջանական տիրապետական ձգտումներն արցախյան ազգային գիտակցության արթևացումների հանդեպ: Ադրբեջանի ղեկավարությունն անցնում է խորամանկ ու նենգամիտ Հեյդար Ալիևին: Ղարաբաղի տիրակալ է Նշանակվում Կոնրադը, որ տեղորի մթնոլորտ է ստեղծում ազգային մտավորականության հանդեպ: Տեղի է ունենում արցախյան հայ մշակույթի տարրալուծման ընթացք: Բարվի և Արցախի գրական մտավորականներն ու գործիչները, խուսափելով հետապնդումներից, ապաստան են գտնում Երևանում: Փակվում է Բարվի հայկական թատրոնը, դադարում են լուս տեսնել «Կոմունիստ» թերթն ու «Գրական Ադրբեջան» ամսագիրը: Եվ սակայն գրական նոր սերունդը՝ Գուրգեն Գաբրիելյան, Հրաչյա Բեգլարյան, Վարդան Հակոբյան և ուրիշներ, կարողանում է հավասարակշռել ուժերի հարաբերությունը և ուղղություն տալ գրողների միության գործունեությանը<sup>7</sup>:

Գրական ժանրերից գեղարվեստական խոսքի մեջ առավել վառ արտահայտություն է գտնում պոեզիան, որը այլաբանորեն շարունակում է հայրենիքի ու բնաշխարհի մոտիվը՝ բեկված ազգային ոգու ազատասիրական անուրջներում:

<sup>7</sup> Ազգային և գրական ընթացքի նկարագրության համար օգտվել եմ Մ. Սարինյանի «Ազգային գաղափարաբանություն» և Հ. Խաչատրյանի կազմած «Գրական տեղեկատու» գրքերից:



Ուրիշ է հիմա աշխարհը, ուրիշ,  
Ուրիշ ձևով են վարդերը ծաղկում,  
Ուրիշ ձևով է արևը ծագում,  
Ծիածանն ուրիշ ձևով է կապում,  
Ուրիշ ձևով է երկինքը ամպում,  
Չյուներն ուրիշ ձևով են հալչում,  
Ուրիշ ձևով է սիրտս թեզ կանչում.  
Այս օրից, ինչ դու մտար իմ հոգին,  
Երկիր ու երկինք ուրիշ են, անգին,  
Ուրիշ ես և դու, դու իմ Սալոմե,  
Երբ դու կաս, սիրո աստվածն էլ ո՞վ է<sup>8</sup>:

(Հ. Բեգլարյան, «Ուրիշ է հիմա»)

Գորբաչովյան «աերեստրոյկան» յուրատեսակ ազգային հեղափոխության ազդարար հանդիսացավ Ղարաբաղի ժողովրդի համար: Թվում է, թե հոչակվում է ազգերի ինքնորոշման իրավունքը և Սովետական Միության ազգությունները պետք է ազատագրվեն ինքնավար կախվածության գաղութային կացությունից և տնօրինեն ինքնուրույն, ազատ ու անկախ գոյության կարգավիճակը: Խորհրդային Միությունում առաջինն Արցախն է, որ համաժողովրդական պայքարի ելավ իր ազատության ու անկախության համար:

Արցախի մտավորականությունը 1988 թվականի փետրվարին նամակ է հղում ՍՍԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին՝ առաջադրելով Ղարաբաղը Ադրբեջանի կազմից անջատելու և Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջ: Նամակը պատրաստվել է ԼՂ գրողների միությունում բանաստեղծներ Վ. Հակոբյանի, Հր. Բեգլարյանի, Գ. Գաբրիելյանի կողմից: Խոսելով Ադրբեջանի հայահալած քաղաքականության, Արցախում հայության բնաշնչմանն ուղղված ազերիների բացահայտ քաղաքականության մասին՝ նամակի հեղի-

<sup>8</sup> Բեգլարյան <., Արցախ-Համե, Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» իրատարակչություն, 2000, էջ 305:

նակները գրում են. «Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզը, թե տնտեսապես, և թե կոլտուրապես կտրված է ազգային արմատներից: ...Առանց արմատի ծառը չորանում, մեռնում է: Սա էլ որերորդ անգամ կացին է բարձրացվում անարդարացիորեն մասնատված մեր ժողովրդի արմատների վրա: Եվ մի՞թե չկա փրկության ելք, կա... ելքը պատմական Հայաստանի ավանդական մի մասը կազմող Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզը խորհրդային Հայաստանին միացնելն է»<sup>9</sup>: Նամակի տակ ստորագրել են գրողներ՝ Վ. Հակոբյանը, Գ. Գաբրիելյանը, Հր. Բեգլարյանը, Մ. Հովհաննիսյանը, Ս. Խանյանը և ուրիշ մտավորականներ:

Նույն թվականի փետրվարի 20-ին Ղարաբաղի մարզային խորհրդի նստաշրջանը, հակառակ Ադրբեյջանի ղեկավարության արգելիչ շանքերին, որոշում է ընդունում Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացելու վերաբերյալ: Սկիզբ է առնում ազատագրական պայքարի բարդ ու տագնապալից մի շրջան, որի ընթացքում Ադրբեյջանը պատերազմ է սանձազերծում Արցախի դեմ: Պատերազմն ավարտվում է Արցախի հաղթանակով և թուրք-ազերիների խայտառակ պարտությամբ: Ազատագրվում են հայկական ավաններն ու գյուղերը, հայոց հողերը: Ազատագրվում է Շուշին՝ ղարաբաղյան ամրոցի խորհրդանիշը:

Եվ ոչ միայն Արցախում: Աշխարհում տեղի են ունենում դարձակազմիկ վերափոխումներ, հեղափոխություններ, ծավալվում են ազատագրական պատերազմներ: Եվ այդ համապատկերում, խոսքի ազատության պայմաններում, հայոց գրական դաշտը ևս իր վրա է կրում ժամանակի շեշտերը, կանգնում նոր պահանջների ու խնդիրների առաջ: «20-րդ դարավերջի ազգային իրականության բույն իրադարձություններն՝ ազգային զարթոնքին, ավերիչ երկրաշար-

<sup>9</sup> Հակոբյան Վ., Երկեր, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» իրատարակչություն, 2008, էջ՝ 300:

ժին, անկախության ու Արցախյան պատերազմին,-գրում է գրականագետ Ժ. Քալանթարյանը,- համընկավ սոցիալիզմի ձամբարի փլուզումը ոչ միայն խորհրդային երկրում, այլև Արևելյան Եվրոպայում, երկրներ միացան (Գերմանիա) ու անջատվեցին-տրոհվեցին (Հարավսլավիա, Չեխոսլավակիա), առաջացան նոր հարաբերություններ և երկրների, և մարդկանց միջև»:<sup>10</sup>

Ազատագրական շարժման տարիներին, որպես հոգևոր գենք, ձևավորվում է ազատամարտի արցախյան պոեզիան, որի ակունքները սկիզբ են առնում 20-րդ դարի 20-ական թվականներից: Այս տեսակետից բացառիկ նշանակություն ունի Գրիգոր Ներսիսյանի (1887-1937 թ.թ.) գրական գործունեությունը: Կենսագրական հանգամանքների բերումով դեգերենտվ այլևայլ վայրերում նա 1926-ին վերադառնում է հայրենի Արցախ և ձեռնամուխ լինում ինքնավար մարզի մտավոր-գրական կյանքի կազմավորմանը: Ծննդով շուշեցի լինելով՝ նա դառը կսկիծով ականատես է լինում երեմնի բարգավաճ քաղաքի վառված փլատակներին և բանաստեղծական իր խոսքն ուղղում բարբարոսական արարքի մեղսակիցներին.

Խելացնոր թմբիր է իշել հիմա հիվանդ իմ հոգում,  
Ասես անկյանք շիրմեների խենթ երգիշն եմ, որ էյի  
Լքած աշխոյժ աղմուկները կենսաթրթիր ժխորի՝  
Հետ եմ դարձել գերեզմանված այս քաղաքը հայրենի...<sup>11</sup>  
(«ԱՎԵՐԱԿՄԵՐՈՒՄ»)

Ապա բանաստեղծը սահմոկեցուցիչ տեսարաններ է ներկայացնում «մահասարսուտ դամբարաններում» «հին գեհենի զավակները լեշ են լափում, մարդկային միս, արևաշաղախ մանկան միս»: Հայությունը գրողի հայրենի քաղաքում ողջակիզվում է, ինչպես սև գե-

<sup>10</sup> Քալանթարյան Ժ., Անդրադարձներ, Երևան, «Զանգակ-97» հրատարակչություն, 2003, էջ 155:

<sup>11</sup> Ներսիսյան Գ., Վերջին երգից առաջ, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2013, էջ 19:



հենում: «Հեռու տարեք ինձ այս ավեր ու անմոռուչ քաղաքից», ասում է բանաստեղծը, քանզի անկարող է ականատես լինել «խելացնոր իր սիրո» հիշատակների «մոխրածածկ դիերի» փոշիացած բեկորներին: Այս բանաստեղծությունն, իրավամբ, կարելի է համարել հայոց եղենապատումի առաջին արձագանքներից մեկը:

«Ամբաստանագիր» բանաստեղծությունում Ներսիսյանը դիմում է աշխարհի դատավորներին, որոնք սոսկ «օրենքի, ձևականության ծառաներն են» և «շուրջով դատում են» գողովարություն, բռնաբարություն և այլ զանցանքներ, պարտավոր են դատելու եղեննի նենգ, խարդախ դներին, որոնք մոխրակույտի են վերածել քաղաքը և «օրիներգել ու երկնել են զագիր այս արյունի ծովը».

*Դատեցեք անդարձ... Ես դատախազ եմ  
Ձեր ահեղ դատի...*

*Թողեք ձեր խոսքը անողոք յինի  
Այս դահիճների ոհմակի համար,  
Թողեք ձեր խոսքը դարերի ձեռքում  
Անսասան զնդան, անկործան մի մուրՃ,  
Մի կոան յինի՝ սրանց հուշերը,  
Սրանց հետքերը հավիտյան ցրող...<sup>12</sup>*

Սակայն հայրենի քաղաքի ավերակները չեն կասեցնում բանաստեղծի ձգտումները երկրամասի մտավոր կյանքի նորոգության ուղղությամբ: Հայրենիքը և հայրենասիրությունը դառնում են նրա ստեղծագործության գլխավոր մոտիվը: Այս տեսակետից ուշագրավ է Ներսիսյանի «Վերադարձ» պոեմը: Պոեմը Ներկայացնում է հսահակյանի «Արու Լալա Մահարի»-ի հերոսի վերադարձը հայրենիք: Հուշագիրները վկայում են, որ հսահակյանը կարդացել է պոեմը և ասել: «Արու-Լալային ես այսպես եմ ուղարկել, որ այլևս ոչ ոք չի կարող նրան վերադարձնել»<sup>13</sup>: Ժամանակակիցները Ներսիսյանին բնութա-

<sup>12</sup> Նոյն տեղում, էջ 21:

<sup>13</sup> Նոյն տեղում, էջ 5:

գրել են որպես «հզոր բանաստեղծի», նշելով, որ «ժամանակը պարզապես կերավ նրան, ինչպես և նրա նման շատերին»<sup>14</sup>: Իրավացի է Վարդան Հակոբյանը, երբ նշում է, որ «Վերադարձ» պոեմում զգալի է գ. Ներսիսյանի ինքնակենսագրական շեշտը՝ «պարզապես ինքը «փոխարինեց» Աբու-Լալա Մահարուն՝ վերցնելով նրա ցուպը»<sup>15</sup>:

Վերադարձի իմաստը հայրենիքի գաղափարն է, հայոց բնաշխարհը, հայոց պատմական հայրենիքը, որ թեև օտարված, բայց որպես մասունք սրբագրծվում է ազգային հոգեբանության մեջ: Անձնական զգացմունքի ներշնչանքով են հնչում հետևյալ տողերը. «Ծքեղ հայրենիք, գեղ ազատության վայր իմ հարազատ, հյուրընկալ եղիր հեռու ափերում անամոք վշտի գրկի մեջ խամրած քո որդու համար…»

Որքան եմ ցավում, որ քեզնից հեռու եմ ապրել այնքան տարիներ, որ ես չեմ տեսել քո հզորացման շքեղ փրկության արշալուսը գեղ»<sup>16</sup>:

Միանգամայն թափանցիկ են նաև բանաստեղծի հավատի խոսքերը հայրենիքի գոյության ու մաքառման վերաբերյալ. «Ոլջույն քեզ, քաղաք, մարդկային կամքի դու շքեղ զնդան, դարբնոց վիթխարի, հավետ պայքարող ու հավետ հաղթող կովի դու մարտիկ արի...»<sup>17</sup>: Գրիգոր Ներսիսյանի տաղանդի փայլն ու ազգային ոգու նվիրումները չեն կարող չշարժել անկիրթ ու գոեհիկ տիրապետողի քենն ու նախանձը. նացիոնալիզմի ու հակակուսակցական օպոզիցիաներին հարելու մեղադրանքով նրան դատապարտեցին մահվան: Նոյն Ճակատագիրն էր Վիճակվելու նաև տաղանդավոր բանաստեղծ, «Ներքին աքսորյալ» Թաթով Հուրյանին (1912-1942), եթե նա չզոհվեր Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատում:

<sup>14</sup> Նոյն տեղում:

<sup>15</sup> Նոյն տեղում, Էջ 9:

<sup>16</sup> Նոյն տեղում, Էջ 163:

<sup>17</sup> Նոյն տեղում, Էջ 160:

## ԾՇԾ

Ասում ենք՝ նոյն Ճակատագիրը, բանզի արդեն նրան նոյնպես հետապնդում էր ազգայնականության պիտակը:

Իսկ բանաստեղծի խոհերում, իրոք, առկայօնում էր հայ հանձարի ազգային ոգին.

Մենք դարերով կերտել ենք մեր արվեստի տունը  
Եվ գիշերները անքուն, և ցերեկները բազում,  
Բյուր ջանքերով մաքրել ենք մեր երգերի հունը,  
Որ ջրերը պարզ հոսեն, եթերի պես լազուր:<sup>18</sup>

Հաճախ պղտորել են հայրենի երգերի հունը կամ պսակագերծել նրա կանգուն սյունը, բայց մշտապես Ճառագել է հայ արվեստի հանձարը և դիմադիր եղել «չարամիտ հողմերի» նզովքին:

Հուրյանը ապրում էր Բաքվում, բայց նրա հայացքը մշտապես ուղղված է եղել դեախ Ղարաբաղ, և նա Ղարաբաղի Ճակատագրի մեջ տեսել է հայոց Ճակատագրի վերելքներն ու անկումները: Իմ հայրենի երկրից չկա չքնաղ ու ջերմ վայր՝ ասում է բանաստեղծը և դեղնենու ծաղկունքին հակադրում իր հոգու թախիծը.

Ծղթա են դրել իմ մտքին, լեզվին,  
Սիրոս կարոտ է հնչյունի, ձենի,  
Հոգուս գետերը կելնեն, կիուզվեն,  
Սիրուն դեղնձենի, ծաղկուն դեղնձենի:

Այս խավար բանտում, խավար աշխարհում  
Այսպես շղթայված ես մնում քանի,  
Ցերեկ չեմ քնում, գիշեր չեմ քնում,  
Սիրուն դեղնձենի, ծաղկուն դեղնձենի<sup>19</sup>:

Բանաստեղծի հուշերում հայոց պատմությունը ներկայանում է թշվառության էջերով, մեր հայրենիքը բանտի է նման, «իսկ մենք՝ գերիներ, խեղճ, վտարանդի», մեր բազուկներին շղթա է դրված, մեր

<sup>18</sup> Հուրյան Թ., Լուսապատճենակ, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1982, էջ 22:

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 81:



լեզվի վրա՝ փականքներ, «մինչև երբ մնանք օտարի գերին», մինչև երբ կրենք օտարի լուծը: Այլ ելք չկա, քան դիմադիր կամքը և պայքարի ոգին:

*Տեքում է ցավից երկիրը բոլոր,  
Սուր է հարկավոր մեր ժողովրդին,  
Խաչի փոխարեն սուր է հարկավոր<sup>20</sup>:*

Այս հավատով թաթով Հուրյանը մասնակից եղավ հայրենական պատերազմին և զոհվեց Ղրիմի ռազմաճակատում անավարտ թողած երգեր ու երազներ.

*Բանաստեղծն է ահա ձեր փեշերին կանգնած՝  
Ձեռքին նոնակներ ու սրտի մեջ կրակ:  
Նա թողել է տունն իր և իր մանկանց սիրած,  
Նա երգեր է թողել անավարտ ու անտիպ,  
Ձեր փեշերին, լեռներ, անվախ ու կրծքաբաց  
Մարտ է մղում նա հիմա...<sup>21</sup>*

#### («Մեկենգևան լեռներում»)

«Արցախյան գրականությունը ստեղծվել է դժվար, անասելի դժվար պայմաններում և նվիրյալ գրական մարդկանց ազնիվ ջանքերով և զոհորություններով... որովհետև նրանցից առաջիններն, իրոք, զոհվել, զոհ են դարձել խարդավանքներին, որոնց մշտական հեղինակները թուրք-ազերիններն են»<sup>22</sup>.- իր հուշերում գրում է Բոգդան Զալյանը և ակնարկում, թե «ղարաբաղյան գրողների բաժանմունքը» ադրբեջանական օրգանների համար միջոց է եղել «նացիոնալիստներ որսալու համար»:

Դառը Ճակատագիր է վիճակվել նաև անվանի բանաստեղծ Բոգդան Զալյանին (1917-2007): «Բոգդան Զալյանը,- բնութագրում են

<sup>20</sup> Լոյն տեղում, էջ 82:

<sup>21</sup> Լոյն տեղում, էջ 17:

<sup>22</sup> Զալյան Բ., <Եռացած հեռուսեր, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2007, էջ 3:

Հրաչյա Բեգլարյանը և Վարդան Հակոբյանը,- Արցախի գրական օջախի նահապետն է, այն գրողներից մեկը, որի ջանքերով 40-ականներին դժվարությամբ վերականգնվեց 37-ի դառնությունները լիովի «վայելած» Ղարաբաղի գրողների միությունը»<sup>23</sup>: Ըստիատումը տեղի ունեցավ Գրիգոր Ներսիսյանի եղերական վախճանից և ապա Հայրենականի տարիների արհավիրքներից հետո: 1945-ին, զորացրվելով բանակից, Զանյանը կարգավորում է գրողների միության մարզային բաժանմունքի ձևավորման ընթացքը, սակայն 1948-ին նացիոնալիզմի մեջադրանքով աքսորվում է Սիրիի: 1954-ին, վերադառնալով աքսորից, նա ակտիվորեն մասնակցում է մարզի մտավոր-գրական կյանքի տեղաշարժերին: Օրերի հետ ավելի ու ավելի են սաստկանում աղբբեջանական գաղութատիրական ձևականություններն ինքնավար մարզի հայկական ոգու արթնացումների դեմ բռնության ու հալածանքի մթնոլորտ ստեղծելով հայրենասեր մտավորականների շորջ: Զանյանը ազերական իշխանությունների կողմից վտարվում է Արցախից, նա 1968-ին տեղափոխվում է Երևան:

Զանյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն լուս է տեսել 1948 թվականին՝ «Իմ լուսաբացը» վերնագրով: Կարելի է ասել, որ իր անդրանիկ գրքում նա գտավ պոետական այն մոտիվն ու միջավայրը, որին հավատարիմ մնաց ստեղծագործական հետագա տարիներին: Դա իր հայրենի Տումին է, Տրտու գետը, Ղարաբաղն իր բնաշխարհով, լեռներով, անտառներով, արահետներով... «Իմ բերածը» բանաստեղծության մեջ Զանյանն այդ ամենի միասնության մեջ խորհրդանշում է Արցախ երկրամասը և նրա կերպարի բացահայտման մեջ որոնում պոետական իր կոչումը.

*Իմ բերածը*

*Մի կտոր է այս աշխարհից,*

*Որ ասում են Հայոց Արցախ,*

<sup>23</sup> Նոյն տեղում, էջ 7:



Մի Տումի է լեռների մեջ  
Ու լեռներին թառած մի վանք,  
Մի խոր, կանաչ հշխանաձոր,  
Մի աղմկոտ հշխանագետ,  
Ոտքի կարոտ մի հին կածան,  
Որ կարոտիս նման անվերջ  
Պատվում է շուրջը նրանց  
Եվ մնում է միշտ նրանց հետ<sup>24</sup>:

«Հայոց Արցախ» արտահայտությունը պատահական վերադիր չէ, այլ հայրենիքի ըմբռնում ի հակադրություն Ղարաբաղ անունը շահարկող տիրապետողի գաղութարար հավակնությունների:

Ես հող ունեի, որ ինձնով էր հող,  
Ես հող ունեի, որ իմ էր դարեր,  
Հողս խլեցին, հողիս տեր դարձան,  
Բայց հողս մնաց առանց ինձ անտեր<sup>25</sup>

(«Տարագիր»)

Բոգդան Զանյանը խորն է վերապրում հեռացումի հոգեբանական տագնապները: Գերի դարձած Արցախի Ճակատագիրը նոյնացնում է իր Ճակատագրին՝ կարծես կորցնելով վերադարձի արահետները: Այս հանգամանքը թախծի ու հուսահատության երանգներ է հաղորդում նրա պոետական զգացողություններին, անվերադարձ կարոտի վիշտը հանգեցնում բողոքի ու ընդվզման տարերքի.

Աչք բացի և քեզ ես խլված տեսա,  
Սևակնած տեսա քո բախտը, Արցախ,  
Քո գոյների մեջ սկը շատ տեսա,  
Եվ սկը սրտիս սև ցավը դարձավ:

<sup>24</sup> Նոյն տեղում, էջ 4:

<sup>25</sup> Նոյն տեղում, էջ 31:



---

Եվ բախտդ, Արցախ, իմ բախտը դարձավ  
Եվ իմը դարձավ պատիվդ հնչեղ,  
Թե քեզ զրկել են, զրկել են և ինձ,  
Թե տաևշել են քեզ, ինձ էլ են տաևշել:

Իմ ունեցածը դու ես մնացել,  
Իմ ունեցածը շատ էր, խլեցին,  
Չլինի<sup>26</sup> վերջին կորուստս դառնաս  
Եվ քեզ հետ փշեմ իմ շունչը վերջին<sup>27</sup>:

Բաևաստեղծի տագնապը կենսագրական ընույթ ունի և համեմատությունը ավելի է սրում տագնապն արցախյան գոյամարտի օրերին՝ ինչ է սպասվում կրակի աքցանի մեջ առնված իր ժողովրդին: Լույն թշնամին է՝ նենգ ու դավադիր, որ մոխրակույտի է վերածել գեղատեսիլ Շուշին և այժմ փորձում է ոչնչացնել հայոց տարրը՝ պանթուրքիզմի գիշատիչ ախորժակով: Զանյանի պոետական խառնվածքին անհարիր են մարտակոչ խոսքերը, նա սրտի դողով էր հետևում իրադարձությունների ընթացքին, ցավագնորեն վերադրում արցախյան գունեղ դաշտերի մոխրացումը.

Հիմա, երբ կովի բոցերի մեջ ես,  
Ծուխ -բոց է շնչում երկինքն էլ քեզ հետ,  
Բոցը արշավում մոխիր է թողնում,  
Հող էիր, կարծես դարձել ես մոխիր...

Մոխիր են դարձել և ծաղիկ, և ծառ,  
Ամեն տեղ այրում, բոց ու արյուն է,  
Բոցը լափել է գույներդ բոլոր  
Եվ թողել միայն արյան թեժ գույնը<sup>27</sup>:

---

<sup>26</sup> Նոյն տեղում, Էջ 33:

<sup>27</sup> Նոյն տեղում, Էջ 40:

Ազատության գաղափարն անբաժանելի է հայրենի օջախի և ազգային ինքնության գիտակցությունից: Առավելապես այս տեսակետից է գնահատելի Զանյանի պոետական ընդվզումը: Իր բանաստեղծությամբ նա կազմավորեց հայրենի եզերքի աշխարհագրությունը՝ բացահայտելով նրա ֆիզիկական ու հոգևոր ինքնության արժեքները: Եվ հատկանշական է, որ հայրենիքի խորհրդանշչներից նա հատկապես նախասիրում է անտառը, քանզի անտառը հավերժական է, առասպելական ու անպարտելի: Անտառը ձանապարհ է, արահետ, բնության իմաստուն արարողություն, կյանք է, շարժում և հավերժական նորոգություն: Բանաստեղծը սուզվում է անտառի լոռության մեջ և լոռությունը նրան հեքիաթ է պատմում կյանքի ու գոյի մասին: Զանյանի պոեզիայում հայրենի եզերքն առավելապես ներկայանում է հուշերի մեջ, և այդ վերհուշերում թանձրամած մի թախիծ կա, որ նույնիսկ անփարատ է մնում հաղթանակից հետո: Վերայցելությունը հայրենի բնօրրան նոյնպես թաթախվում է թախծի մշուշով, որովհետև անորոշ է մնում Արցախի ձակատագիրը դարավոր թշնամու ոխակալ ձգտումների օդակում:

*Երբ հեռուներից, անջատումներից*

*Կարոտիս կանչով ես ետ եմ դառնում,  
Միշտ ոտք եմ դնում այն ձամփին նորից,  
Որ ինձ, ոտքերիս Արցախ է տանում:*

.....

*Լոած ու անցած ձայներ եմ լսում  
Եվ նրանց մեջ էլ բարձր ավելի  
Ու ավելի պարզ որոտն եմ լսում  
Իմ Տրտու գետի ցաւկոտ ջրերի:*

.....

*Լսում եմ, խորհում և տխրում նաև,  
Որ Տրտու գետիս կոիվն անվերջ է,*



Այսքան տարիներ դեռ չի խաղաղվել,  
Հիմա էլ Տրոռուս դեռ կովի մեջ է<sup>28</sup>:

(«Դեռ կովի մեջ է»)

Ժամանակակիցները վկայում են, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին առանձնապես բացահայտ ջերմությամբ էր հնչում դարաբաղյան թեման ժողովրդի հայրենասիրական զգացողություններում: Շրջիկ գուսաններն ամենուրեք արտասանում էին «Ինչ սիրուն է Ղարաբաղը» երգը, և գրեթե երդումի պես էր հնչում դարաբաղյան սիրո բայաթին:

Ես աշուղ եմ, վարդի թաղը,  
Շաքին, Շիրվանն է շարմաղը,  
Այստեղ եթե ոսկի դառնա,  
Դեմ մոռանա Ղարաբաղը.<sup>29</sup>

Հենց այս ընդիհանուր միջնորդություն ձևավորվեց դարաբաղյի նշանավոր բանաստեղծը՝ Աշոտ Գրաշին (1910-1973): Ծննդով լինելով թաղավարդցի՝ նա ակտիվ մասնակցություն ցուցաբերեց հայկական բազմամարդ եզերքի գրական-մշակութային կյանքի և մասնավորապես Ղարաբաղի գրական կազմակերպության առաջընթացին: Գրաշին գեղարվեստական պատկերավորություն տվեց դարաբաղյան թեմատիկ ուղղությանը հայ պոեզիայի պատմության մեջ: Նա ձև տվեց նոստագիկ հայրենասիրության պոետիկային՝ վերհուչների մեջ ուրվագծելով հայրենի բնաշխարհի հմայքն ու կարոտը: Այս իմաստով Գրաշու «Կապույտ լեռներում» շարքը կարելի է համարել հայոց արցախապատումի բանաստեղծական ամենամսայուն էջերից մեկը:

Ես չէի դառնա երբեք պոետ,  
Թե չծնվեի Ղարաբաղում,

<sup>28</sup> Լոյն տեղում, էջ 233:

<sup>29</sup> Սարիկյան Ս., ի հեջուկս, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Վաշագան Բարեպաշտ» հրատակչություն, 2006, էջ 38:

Հոկ լեռներում ես, սիրո, նրբավետ  
Երգերի անթոշ ծաղկունք քաղում:<sup>30</sup>

Այստեղ երգը բխում է իբրև բյուրեղյա ադրյուր, այնտեղ երգում է ամեն մի թուփ, ամեն վտակ, իսկ վեհափառ սարերը հին, բազմավաստակ գուսաններ են: Հին օրերի քերծերը նժույգների են նման, որոնց ոտքերի տակ գերեզմանված են ելուզակները: Ռոմանտիկական հասակի հովվերգական անուղղները վերհուշներում գունավորվում են կարոտի խոհերգությամբ: Կարոտի կանչեր են արձագանքում մանկության ձանապարհները, արշալուսների մշուշը, կաղնիների խշշոցը, առվակների խոխոչը, հովերի կապույտը, որոնք փոշիացել են օրերի հեռավորության մեջ՝ թողնելով, որպես անանց կարոտ, «հայրենական քնքուշ թախիծ»: Այս թախծի խոհափիլխոփայական բարձր արտահայտությունը եղավ «Վերադարձրեք իմ մանկությունը» բանաստեղծությունը.

Այցի եմ եկել ձեզ, սարեր սիրուն,  
Վերադարձրեք իմ մանկությունը,  
Այցի եմ եկել ձեզ, ձորեր սիրուն,  
Վերադարձրեք իմ մանկությունը:  
Առվակներ, ձեզ հետ շատ եմ խաղացել,  
Ձեր ափին շատ եմ ջաղաց կառուցել,  
Աղբյուրներ, եթե ինձ չեք մոռացել,  
Վերադարձրեք իմ մանկությունը...

Իմ մանկությունը հրաշք էր, հեքիաթ,  
Ձեր թևին տարաք, ամպեր լուսակաթ,  
Դեպի բարձունքներն այն ձյունագագաթ՝  
Վերադարձրեք իմ մանկությունը<sup>31</sup>:

<sup>30</sup> Գրաշի Ա., Ծիածանի յոթ երգը, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1961, էջ 156:

<sup>31</sup> Նոյն տեղում, էջ 168:

Գրաշու հայրենի եզերքը ինքնաբավ է, անկախ միջավայրի օտարաշունչ ազդեցություններից: Այդ հանգամանքը, նույնիսկ, կարծես գոյություն չունի: Ճիշտ է, հայրենին հեռու է, բայց նրա պատկերը բանաստեղծի հոգու մեջ է՝ մտերիմ ու ջերմ գորովանքի գրավչությամբ: Նա ազատ ու հավերժական է, քանզի նրա ձևութը տիեզերական է.

Հայրենի հողի գարունքն է երգդ տիեզերքի մեջ,  
Հայրենի հողի ծաղկունքն է երգդ տիեզերքի մեջ,  
Հայրենի հողի բուրմունքն է երգդ տիեզերքի մեջ,  
Հայրենի երկնի աստղունքն է երգդ տիեզերքի մեջ,  
Տիեզերքի պես խորունքն է երգդ տիեզերքի մեջ.<sup>32</sup>

Գրաշու «Կապույտ լեռներում» շարքը ներբողների մատյան է, հայրենասիրության խևական մատյան, որը ներիյուսված է բանաստեղծի անմասցորդ սիրով առ հայրենին, քանզի ինքը ձուլված է հայրենի հողից ու ջրից («Ես քո հողից եմ բուսել, Ղարաբաղ»), և նրա մարմինն ու հոգին բաղադրված են հավերժորեն հպարտ լեռնաշխարհից ու արևաթաթախ հովիտներից: Հենց այս սիրու մեջ է Գրաշու ընդգումն օտարի տիրապետության հանդեպ, քանի որ երկիր հայրենին իրենն է և այդպես կարելի է սիրել միայն իր պատկան երկիրը և այստեղ միայն կարելի է գտնել իր վերջին հանգրվանը.

Երբ ես մահանամ, ինձ խարույկ նետեք,  
Սոխրանամ նրա ուրախ բոցերում,  
Սոխիրս տվեք հովին սրաթև,  
Որ տակի շաղ տա իր ձեռքով թեթև  
Իմ Ղարաբաղի կապույտ լեռներում<sup>33</sup>:

Պաշտամունքը հայրենիքի հանդեպ անկարելի է պատկերացնել առանց ներքին հավատի՝ հայրենիքի հավերժության և ապագայի հանդեպ: Եվ անկասկած է, որ իբրև հոգեկան արժեք, Գրաշու պոե-

<sup>32</sup> Նոյն տեղում, էջ 197:

<sup>33</sup> Նոյն տեղում, էջ 187:

զիան ուսանելի դասեր է տվել ապագա սերունդներին՝ ձանաչելու հայրենիքը և պայքարելու նրա ազատ և անկախ գոյության համար:

«Անհատի պաշտամունքի» քննադատությունից հետո, խրուչչովյան շրջանում, Նկատելիորեն ակտիվանում է ազգային շարժումը Ղարաբաղում: Գյուղերում տեղի են ունենում ստորագրահավաքներ՝ Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզը Հայաստանի Հանրապետության կազմի մեջ միավորվելու համար: Գրողների միությունը՝ Բագրատ Ովուբարյանի ղեկավարությամբ, դառնում է յուրատեսակ կենտրոն՝ ազգային շարժումը գաղափարապես կազմավորելու գործում: Այս հանգամանքը չէր կարող աննկատ մնալ աղրեջանաթուրքական գաղութարարների ուշադրությունից: Սկիզբ է առնում հակահայկական ռեակցիոն արշավ մարզի մտավորականության դեմ, որն ավելի բացահայտ հալածանքի է հասնում Հեյդար Ալիևի քաղաքականությամբ: Կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Նշանակված Կորիկովը՝ որպես թուրքամետ դրածո, ընթացք է տալիս մարզի ապազգայնացման գուեհիկ գործելակերպին: Հենց Ադրբեջանի կոմկուսի ԼԴ մարզային կուսակազմակերպության առաջին պլենումում նա շարդարարական տոն է տալիս իր Ելույթին, մարզի հայ մտավորականությանը մեղադրում նացիոնալիզմի մեջ՝ ընդգծելով, թե գաղափարական, հակակուսակցական այդ ուղղությունը ներթափանցում է Հայաստանից: Եվ, այնուամենայնիվ, ընդհատակյա, թե «Էմիգրանտ» օղակներում շարունակում է մաքառել Արցախի ազատագրական ոգին: Բագրատ Ովուբարյանը հրատարակում է «Խաչենի իշխանությունը 10-15-րդ դարերում», «Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության», «Արցախի պատմությունը» աշխատությունները, լույս են տեսնում արցախյան բարբառի և բանահյուսության վերաբերյալ աշխատություններ, որոնք հիմնավորում են Արցախ աշխարհի՝ որպես տիեզերական սուբյեկտի, ինքնությունն ու բնիկությունը:

Վերելք է ապրում նաև արցախյան բանաստեղծությունը, որի առաջատար դեմքերն են Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյա-

Նը, Վարդան Հակոբյանը:

Ժամանակակից մանկագրության տաղանդավոր դեմքերից է Գուրգեն Գաբրիելյանը: Արցախյան բանաստեղծության արժեքավոր էջերից է նրա մանկական պոեզիան: Այդ պոեզիան իսկական դպրոց է մանուկ սերնդի աշխարհիմացության և մտավոր կազմավորման գործում: Այս տեսակետից հատկապես արժեքավոր են նրա «Այբուբենը Երգերի մեջ», «Ըստիր Երկեր», «Երգող ծառը» ժողովածուները, որոնք մանուկներին ուսուցանում են մայրենի լեզու, արցախյան բնաշխարհի ճանաչողություն և սեր՝ հայրենի օջախի և ազգային ավանդույթների հանդեպ:

Արցախյան բանահյուսության պսակը կարելի է համարել Գուրգեն Գաբրիելյանի «Հորովելը», որտեղ արտացոլված է հայ գեղջուկի անսահման սերը հողի հանդեպ, աշխատանքի, վաստակի, պարզու աստվածահաճո կենցաղավարության փիլիսոփայական խոհը: Միայն բնիկ ժողովուրդը կարող է ունենալ աղոթքի պես մաքուր հոգևոր երգ:

Արցախյան պոեզիայի առաջընթացում նշանակալից եղավ Վարդան Հակոբյանի ներկայությունը՝ թե՛ իբրև բանաստեղծ, թե՛ որպես գրական, հասարակական գործիչ: Նրա գրական մուտքն այսպես ողջունեց արցախյան ազգային-ազատագրական շարժման ղեկավար, պատմաբան ու գրող Բագրատ Ովուրբայանը. «Վարդան Հակոբյանի պոեզիայի ընդգրկումները համարյա անսահման են՝ այսօրերգությունից մինչև միջնադար, Ամարաս, որ մեր սրբազն հավատք ակունքն է: Մեր Արցախին Վարդանն էր պետք, և նա կա՝ երիտասարդ, առույգ, տաղանդավոր»<sup>34</sup>: 1965-1986 թվականների ընթացքում Վ. Հակոբյանը հրատարակեց բանաստեղծությունների մի քանի ժողովածուներ, որոնք նոր երանգներ են գծում ժամանակի պոեզիայում: Նա նկատելիորեն ընդլայնում է արցախյան պոեզիայի

<sup>34</sup> Սողոմոնյան Տ., Տաճարի Ճանապարհին կամ մենարանի ուխտավորը, Ստեփանակերտ, Լ ՀՀ ԳՄ «Կաչագան Բարեպաշտ» հրատարակություն, 2007, էջ 11:



ընդգրկումները, բնաշխարհը հանդես է զայիս նոր երանգներով, նկատելիորեն թանձարանում է նաև խոհափիլխոփայական ներգայում: Երկրորդ շարքը, որը «Սեր և ժպիտ» խորագիրն է կրում, ունի այսպիսի բնաբան:

*Ծիծեռնակի բոյնի նման  
Սրտի դողով,  
Հոգու շորով  
Ու հողով է հյուսվում երգը,  
Բայց նրա մեջ ծվարում է տիեզերքը...<sup>35</sup>*

Այս բնաբանն ակնկալում է ստեղծագործական աշխարհի մի անեզր տարածություն, որ գրականագետ Սարինյանը բնորոշում է «մեղեդիներից մինչև առասպեկտ» հասկացությամբ: Մեր նպատակից դուրս է անդրադառնալ Հակոբյանի պոեզիայի գաղափարական ու գեղարվեստական առանձնահատկությունների հանգամանալից քննությանը: Տվյալ պարագայում մեզ հետաքրքրում է նրա պոեզիայի այն երակը, որն ուղակիորեն կապվում է ազատամարտի արցախյան պոեզիային: Նկատելի փաստ է, որ եթե իր բանաստեղծական առաջին շարքում («Մեղեդիներ») նա բնաշխարհի երգիչ է՝ ոռմանտիկական ներշնչանքով, ապա երկրորդ շարքում, հենց սկզբից, հայտնվում է հայրենիքի բնապատկերը՝ «Հպարտություն» բանաստեղծությամբ: Դա ինքնազոհ անհատի հպարտություն չէ, այլ գոյական հպարտություն, քանզի «կրծքի տակ հնքն է հայրենի երկրի» և «սրտի տերը հայրենի սերն է», հպարտ է, քանզի հպարտությունը հայրենիքինն է, Արցախինն է, «Արբացած պարտք է՝ Արևապատկ օրը երգելու»: Դրան հաջորդում է «հայրենի հողի» պաշտանմունքը, նրա անկուսական զորությունը՝ հոգեկան թոփքի համար, որ կարծես՝ ի հեջուկս տիրողի թերարժեքության, զգայում է դարի հնքը.

<sup>35</sup> Հակոբյան Վ., Երկեր, Ա, Ստեղծանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2006, էջ 42:



Իմ օրը դարի հկրով է բացվում,  
Դարերի աչքով նայում աշխարհին,  
Դուք իմ սլացքում որոնեք երգն այն,  
Որ երակներում եռացող արյան նվազի տակ է

Միշտ ծնունդ առնում,  
Եվ սուրբ հայրենյաց սիրո պահանջով  
Դարիս խորհուրդը երկինք է տանում<sup>36</sup>:

Հայրենյաց սերը «Նյութականանում է», և բանաստեղծը իր նորե-  
լուկ մանկանը հուշում է հողի իմաստուն խորհուրդը.

Վաղը արդեն ոտքերիդ տակ,  
Նոր Ճանապարհ պիտի դառնա,  
Քնքանք դիր քայլերիդ մեջ,  
Մեր ու գորով,  
Հողը, որդիս, քո պապիկն է<sup>37</sup>:

Հողի պաշտպանմունքը վերաճում է երգի («Հողերգ»), հավիտե-  
նության խորհուրդ է հուշում պապի այգին, պապ, որ իր այգին հավ-  
քերին թողեց ու ինքը գնաց: Հողը և պապը խորհրդանիշ են դառ-  
նում Հակոբյանի պոեզիայում. հողը՝ հայրենիքի խորհրդանիշ, պա-  
պը՝ հավերժության.

Կանգնել ահա ու նայում եմ մեր օջախին,  
Օջախի մեջ պար է բռնել  
Պապիս պապի

Նախապապի  
Զեռքով վառած անմարելի,  
Անմեռնելի

Կրակը հիւ<sup>38</sup>:

<sup>36</sup> Նոյն տեղում, էջ 45:

<sup>37</sup> Նոյն տեղում, էջ 214:

<sup>38</sup> Նոյն տեղում, էջ 243:

Վարդան Հակոբյանի պոեզիայի ժամանակը համընկնում է կոնրկովյան տարիների քաղաքական ռեակցիայի մղջավանշին և միանգամայն ակներս է բանաստեղծի ներքին օպոզիցիան՝ մարզը սեփականացնելու այլայան ծրագրի հանդեպ: Նա հոգում թաքցնում է հայրենական վիշտը և վեհանում հպարտության զգացումով, թե «Երսի լեռն թռո կամ ծոռ եմ ես// իմ մեջ անմեռ է ոգին վեհության», քանզի «Իմ տունն այստեղ է, իմ Դարաբարում»: Սակայն իր «Արյան կանչում» Ավարայրում թափված արյունն է և «Թրի դեմ գրիչ» մաշտոցյան սուրբ այբուբենի լուսը, և բանաստեղծն՝ ունկնդիր ժամանակի ոգուն, այլ հնչյունների մեջ փորձում է որոնել հավատամբի իր բառը.

Ժամանակը ձգվում է լարի պես,  
Նվազը երգ է գտնում իր համար,  
Կարկաչն աղբյուր է գտնում իր համար,  
Առվակը ձոր է գտնում իր համար,  
Իսկ ես մաքառման անունն եմ փնտրում:  
Ժամանակը թռչում է հավքի պես,  
Երկինքը թև է գտնում իր համար,  
Թախիծը վարդ է գտնում իր համար,  
Հողը երազ է գտնում իր համար,  
Եվ ես անունն եմ դառնում մաքառման<sup>39</sup>.

Բանաստեղծի յուրաքանչյուր բառ ունի ապրումների, զգացումների, փիլիսոփայական ընդհանրացումների անսահմանություն, որը և նրա խորը դարձնում է դինամիկ: Նրա բանաստեղծություններում բառն իսկապես «շատ բարդ և բազմակողմանի մի երևոյթ է»<sup>40</sup>, - ինչպես ասում են:

<sup>39</sup> Նոյն տեղում, էջ 256

<sup>40</sup> Բախտին Մ., Դոստուկու պոետիկայի հիմնախնդիրները, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակություն, 2010, էջ 171:



Վարդան Հակոբյանի պոեզիան մաքառման պոեզիա է, մաքառում հանուն հայրենի Արցախի ինքնության ու ազգային գոյության, պատմության հուշերի ավանդակցության, հոգևոր հանձարի ստեղծումներով։ Գրողն իր էությամբ ձուլված է Ղարաբաղին և աղիթ ունի ասելու «մարքսիզմի չստեր հագած ֆիլիստերներին», թե «ես երգ չունեմ Ղարաբաղի մասին», քանզի.

Ղարաբաղը ծառ է իմ արմատի վրա,  
Ղարաբաղը սեր է իմ հավատի վրա,  
Ղարաբաղը տեր է իմ կարոտի վրա...<sup>41</sup>

Դիմադրական շարժման առաջատար դեմքերից է Հրաչյա Բեգլարյանը։ Իզուր չէ նա իր երկերի հատորները անվանել «Արցախ-Լամե», որովհետև նրա ամբողջ ստեղծագործությունն ասք ու պոեմ է Արցախի մասին։ Բեգլարյանի բանաստեղծությունների առաջին խոկ ժողովածուներում («Կամուրջ» «Լեռան աղբյուր», «Կապույտ լեռների երգը») հայրենի Արցախ բնաշխարհին է, նրա պատմությունն ու հոգևոր հանձարի հուշարձանները։ Հատկանշական է, որ իր բազմահատոր «Արցախ-Լամեն» Բեգլարյանը բացում է «Հրաշք երկիր, իմ Ղարաբաղ» և «Ղարաբաղցին» հիմներգերով։

Չքնար ես դու ու միշտ ջահել,  
Հրաշք երկիր, իմ Ղարաբաղ,  
Ո՞վ է այդպես քեզ զարդարել,  
Հրաշք երկիր, իմ Ղարաբաղ.<sup>42</sup>

(«Հրաշք երկիր, իմ Ղարաբաղ»)

Ապա.

Պատվել գիտե միշտ իր հյուրին,  
Գիտե գինը աղ ու հացի,

<sup>41</sup> Բեգլարյան Հ., Արցախ-Լամե, Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2000, Էջ 313:

<sup>42</sup> Նոյն տեղում, Էջ 11:



Միշտ հյուրասեր ու միշտ բարի,  
Միշտ սրտաբաց դարաբաղջին:<sup>43</sup>

(«Դարաբաղջին»)

Հետաքրքրական է, որ Հր. Բեգլարյանը հստակ նվիրում ունի դարաբաղյան բանահյուսության հանդեպ: Այսպես է նա Ճանաչում իր հայրենի Արցախը: Իսկ դա իմացական ամուր հիմք ունի, քանի որ բանահյուսության մեջ ավելի, քան խոսքի այլ ձևերում, արտացոլվում է ժողովրդի էթնիկական ինքնությունը, ավանդակեցությունը, կենցաղավարությունը, բնիկությունը: Եվ այսպես, իբրև բանահյուսություն, Բեգլարյանի պոեզիայում հանդես են գալիս արցախյան լեռները, գետերը, անտառները, աղբյուրները, որոնք անօրինակ են, անկրկնելի ու գեղեցիկ:

Աղբյուրներն այստեղ մաքուր են ու պաղ,  
Օդը ծաղկունքի բույրով հագեցած,  
Երկինքը լազուր ծովի պես խաղաղ,  
Ամպերն առագաստ ծովի պես փոված:  
Հսկա ժայռերը ուս-ուսի տված,  
Կնճոտել են Ճակատները վես,  
Մտքերի անհոն ծովի մեջ սուզված  
Իմաստովին պես խորհում են ասես<sup>44</sup>:

Մի առանձնահատկությամբ Բեգլարյանի պոեզիան կարծես լրացնում է արցախյան բանաստեղծության ներաշխարհը: Դա բացահայտ ու անմասցորդ զգացմունքայնությունն է, սերը՝ որպես հոգեկան վիճակ՝ շնորհված հայրենի բնաշխարհի վկաներին, ասելիքի պարզությունը: «Արվեստների արվեստը, գեղարվեստական ձևի բարձրագույն արժանիքը,- գրել է Ու. Ուիթմենը,-գրականության արևը՝ պարզությունն է»<sup>45</sup>: Հրաշյա Բեգլարյանի պոեզիայում այն, ինչ դարաբաղյան է, սիրելի է ու պաշտամունքի առարկա, կարծես սերը

43 Նոյն տեղում, էջ 13:

44 Նոյն տեղում, էջ 80:

45 Ուիթմեն Ու., Խոսի տերևները, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2012, էջ 11:



և կարոտը տրված են լեռների, առուների, հովիտների, արահետների բնական պարզության ու էությանը. «Այս ծաղկահոտ սարերից, կանաչ նարոտ սարերից կարոտս չի հագենում»<sup>46</sup>: Այս սերը յուրատեսակ վահան է հայրենիքի ինքնությունը պահպանելու համար, զգացմունքի մի հայրենասիրություն, որ չի թաքցնում ներքին բռնկումը վայրագ թշնամու հանդեպ.

Դու՝ դաջված գազան,

Ինչ իրավունքով մեր դարին հասար,

Որ մարդ սրիկան քեզ ազգ անվանեց,

Դու՝ թուրք խաշևարած,

Ով մեր ուսերին քո բեռը դրեց...<sup>47</sup>:

Այս մարտահրավերով Հրաշյա Բեգլարյանն արձագանքեց գոյամարտի արցախյան բանաստեղծությանը:

Աշխատության ներածությունում մենք ակնարկեցինք, որ ազատամարտի պոեզիան բարդ համակարգ է ներկայացնում և կառուցվածքային, և բովանդակային իմաստով: Լինելով Համազգային երևույթ՝ այն միաժամանակ համաշխարհային արձագանք ունի և ենթակա է ոչ միայն ազգային-գաղափարական, այլև սոցիալական, հոգեբանական, բարոյաբանական չափանիշների: Դա էապես աշխարհայցք է, փիլիստիվայություն, հայացքների վերստուգում:

Չպետք է անտեսել այն հանգամանքը, որ մինչ անկախության հոչակագիրը, Հայաստանը և Ղարաբաղը գտնվում էին Խորհրդային Միության կազմում: Տակավին փլուզված չէր «սովետական իմպերիան» և գործում էին միութենական, կայսերապետական օրենքներն ու սահմանադրությունը: Չպետք է անտեսել նաև այն փաստը, որ անկախ ազգային շահերի ներհակությունից, տասնամյակներ շարունակ կոմունիստական գաղափարախոսությունը քարոզել էր բարեկամության և իրավահավասարության հիմքի վրա դրված ազգային

<sup>46</sup> Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» հրատարակություն, 2000, էջ 47:

<sup>47</sup> Նոյն տեղում, էջ 104:

քաղաքականություն, որը, այսպես թե այնպես, ստացել էր ազգային համագործակցության բնույթ: Դա արտահայտվել է մշակույթի և գրականության մեջ և ունեցել է տխուր ու անցանկալի հետևանքներ: Բոլոր այս կարգի ազդեցություններից ու կապերից ազատվելու համար անհրաժեշտ էր հոգեբանական որոշ նստվածքների հաղթահարում: Պատահական չէր Հրանտ Մաթևոսյանի ասույթը Խորհրդային Միության վիլուգման վերաբերյալ. «Մնում է մեծ հայրենիքի փոխանցվող ցավը... Ամենամեծ ցավը՝ հայի համար մեծ պետության քաղաքացու ստատուսի կորուստը... Մեջքս շտկած, բարձրահասակների մեջ բարձրահասակ կանգնած էի, հարաբերություններս աստղերի, ատոմի, միջազգային խոշոր գործիչների հետ էր, կարող էի սրամտել Շերչիլի մասին, ես ինչ գիտեմ, ծաղրել որևէ խոշոր մեկին: Ասում ես թեզ ինչ, մեզ ինչ, դրանից ինչ օգուտ ստացար: Ես դրանից էն օգուտը ստացա, որ կորացած հայ չեղա, այլ շտկված հայ»<sup>48</sup>: Վերադարձ դեպի անցյալը, ըստ Մաթևոսյանի, անհնար է և կործանարար, բայց եղելությունը հոգեբանական խոր նստվածքներ է թողել:

Ազգային շարժման բարձրակետը 1988 թվականի փետրվարն է, Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում հարյուր-հազարավոր մարդիկ վանկարկում էին «Միացում», «Միացում»: Շարժումը ղեկավարում էր «Կոռոնկ» կոմիտեն (Խախագահ՝ Արկադի Մանուչարով, փոխնախագահ՝ Վարդան Հակոբյան): Ապա հաջորդում են Սումգայիթի, Բաբվի, Կիրովաբադի ցեղասպան դեպքերը...

Ազատագրական պայքարի դիրքերում էր ազատամարտի արցախյան պոեզիան՝ հաստատելով այս Ճշմարտությունը, որ, իրոք, «նոյն արձիքից են ձուլում, իմացիր, գնդակն ու... տառը»<sup>49</sup>:

<sup>48</sup> Մաթևոսյան <.., ես ես եմ, Երևան, «Ուկան Երևանցի» հրատարակչություն, 2005, էջ 82-83:

<sup>49</sup> Էմին Գ., Երկերի ժողովածու, հատոր 2, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1985 թ., էջ 93:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Արքայի Աշխարհը՝  
Եւս այնուն թուր եմ:

ՀՐԱԶՅԱ ԲԵՎԼԱՐՅԱՆ

ԲԱՆԱՏԵՂԾԻ  
ԵՎ  
ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹՅԱՆ  
ԶԱՅՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԸ

Ազատագրական պայքարի ու պատերազմի թեման, ընդհանրապես, լայն տեղ ունի ոչ միայն հայ, այլ նաև ռուս և համաշխարհային գրականության մեջ: Այն դաստիարակչական նշանակությունից բացի, ունի նաև ժողովուրդների ազատության ու անկախության համար պայքարի պատմությունը ներկայացնելու առաքելություն: Ռուս գրականագետ Իլյա Պլեխանովը գրել է. «Ժամանակն ամեն ինչ տեղն է դնում, ասպարեզը մաքրում է գրական անբարոներից, և մեր հետնորդները կարդալու են պատերազմական թեմայով գրվող ժամանակակից հեղինակներին, ձգտելու են հասկանալ՝ ինչպիսին ենք մենք եղել, ինչով ենք ապրել, ինչի միջով ենք անցել, ուսումնասիրելու են պատերազմական գրականությունը»<sup>1</sup>: Այս առումով հարուստ ավանդներ ունի հայ գրականությունը. գրողները ազգային-ազատագրական պայքարի գեղարվեստական տարեգրության մեջ բազմակողմանիորեն ներկայացրել են այն դարակազմիկ իրադարձությունները, դեպքերն ու հերոսական անցքերը, որոնք սերունդներին շարունակում են դաստիարակել հայրենասիրության բարձր ոգով:

Խորենացուց մինչև Դավթակ Քերթող, մինչև Արովյան ու Պեշիկթաշյան, Շաֆֆի ու Պատկանյան, մինչև Խահակյան, Տերյան ու Չարենց, մեր մեծերը ստեղծել են, հիրավի, գեղարվեստական մնայուն արժեքներ: Այսպես, Պեշիկթաշյանի «Զեյթունյան երգերն» ու Խահակյանի «Հայդուկի երգերը» ոչ միայն զգալիորեն խթանել են մեր պոեզիայում ազատասիրության ու պայքարի գաղափարների արմատավորմանը, այլ, ընդհանրապես, նպաստել են մեր գրականության զարգացմանը: Այսպես, Պեշիկթաշյանի հերոսը երազում է ազատագրված տեսնել հող-հայրենին, ահա թե ինչու նա միայն մի ցանկություն ունի. «Կուզեմ վառոդ և գնդակներ»:

<sup>1</sup> [www.rospisatel.ru](http://www.rospisatel.ru) Ալեքսանդր Պլեխանօվ սնյատ սամօւզնչուրով



Թրքաց մայրեր թող լան, ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն<sup>2</sup>...

**Մ.ՊԵՂԻԿԹԱՉՅԱՆ, «Մահ քաջորդվույն»**

Ավ. Իսահակյանն ազգային-ազատագրական պայքարին նվիրված բազմաթիվ գործեր է ստեղծել, որոնց պսակն է հանդիսանում «Հայուսկի երգեր» գիրքը:

Հայուսկը հոգում երազ է տեսնում,  
Հայրենի աշխարհն ազատ, ապահով...

Տեսնում է... արտում հովն է շնկչնկում,  
Փայլուն գերանդին զրևում է անուշ,  
Ու փոցին են քաշում սիրուն աղջրկունք՝  
Հայուսկի վըրա երգելով անուշ<sup>3</sup>:

Խաղաղ, ստեղծագործ աշխատանքը հայ մարդու համար միշտ էլ եղել է երազանք, որովհետև ոստիսները հաճախ են նրան ստիպել մաձն ու մանգաղը թռողնել ու գենք վերցնել հանուն հայրենիքի փրկության: Իսահակյանագետ Ավ. Իսահակյանը դիպուկ է նկատել. «... Իսահակյանը հանդես է գալիս որպես ազատամարտի շեփորահար, որպես մարտի ազդարար: Նա բանաստեղծի իր առաջնահերթ պարտքն է համարում մարտական զարթոնքի կոչել ազգի զավակներին»<sup>4</sup>...

Վարպետը ժամանակին անդրադարձել է արցախյան ազգային-ազատագրական շարժմանը, իր ստեղծագործություններում գովերգել է Արցախ-Սյունանց աշխարհը՝ որպես «քաջերի օրրան»<sup>5</sup>: «Թուր-

<sup>2</sup> ՊԵՂԻԿԹԱՉՅԱՆ Մ., Երկերի լիակատար ժողովածու, Երևան, ՀՍՍՀ և հրատարակություն, 1987, էջ 44:

<sup>3</sup> Իսահակյան Ա., Հայուսկի երգեր, Երևան, «Արևիկ» հրատարակչություն, 1990, էջ 71:

<sup>4</sup> Իսահակյան Ավ., Վապետը և Արցախը, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակություն, 2008թ., էջ 26:

<sup>5</sup> Իսահակյան Ա., Հայուսկի երգեր, Երևան, «Արևիկ» հրատարակչություն, 1990, էջ 95:

քերը (տաճիկները) Բագուն ջարդելուց հետո 11 000 զինվորով մտան Ղարաբաղ, Զանգեզուր՝ ջարդելու: Բայց իրենք մեծ ջարդ կրեցին, ասում են, 3000 տաճիկ հազիվ են ազատվել: <այերը լավ ջարդ տվին Նրանց»<sup>6</sup>- գրում է վարպետն իր «Ղարաբաղյան օրագիր» գրծում:

Պատերազմական թեմաներով բանաստեղծական ուրույն կոթողներ են ստեղծել Ռոբերտ Բյոռնսը, Արթյուր Ռեմբոն, Հովհաննես Շիրազը, Նաիրի Զարյանը և շատ ուրիշ երևելի գրողներ: <այ քսարեդության գլուխգործոցներից է Հովհաննես Շիրազի «Եքսարոմտը»:

Շիրազը առաջնորդվում է ժողովրդական իմաստնությամբ՝ հենվելով չարի հետ կովում բարու հաղթանակի վրա, ևա հայոց ազգային ոգու անպարտելիության մեջ է տեսնում իր ժողովրդի հավերժությունը: Ահա թե ինչու Շիրազը ժողովրդի կերպարը նոյնացնում է անսասան լեռների հավիտենության հետ, թշնամուն տեսնում «վայրագ հողմերի» մեջ.

*Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ:*

*Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:*

*Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ<sup>7</sup>...*

Գեղարվեստական բարձր վարպետությամբ է կերտված Նաիրի Զարյանի «Դու քաղցր ես, իող իմ հայրենի» բանաստեղծությունը: Նաիրի Զարյանի խոհի մեջ դիմանության մեթոդը կիրառվում է բոլորովին այլ, ավելի շատ՝ հոգեբանական եզրույթում: Երկխոսությունը տեղի է ունենում ոչ թե հակընդդեմ բնեռների, այլ հորի և նրա

<sup>6</sup> Նոյն տեղում, էջ 14:

<sup>7</sup> Շիրազ <.., <ատընտիր, Երևան, «Հայրապետ» հրատարակություն, 2012, էջ 275:



որդու միջև, որը գրեթե չի տարբերվում «իր և իր միջև» կայացող զրույցից: <ոգեբանական մի «ահեղ պահի» մեջ բացվում է մարդու տիեզերքից էլ մեծ հոգին.

Դու քաղցր ես, հոդ իմ հայրենի,  
Չկա քեզմից անուշ անուն,  
Բայց վտանգի ահեղ պահին,  
Երբ սպառնում է թշնամին,  
Դու ավելի ես քաղցրանուած<sup>8</sup>:

Արթյուր Ռեմբոյի «Հովտում քնածը» ստեղծագործության մեջ ամենանուրբ ու հստակ գույներով զինվորի կերպարում տրվում է կյանքի ու մահվան փիլիսոփայությունը:

Հիրիկների մեջ կապոյտ նա քնել է անվրդով  
Ու ժպում է մի հիվանդ երեխայի ժպիտով.  
Նա մրսում է... Բնություն, նրան ջերմիկ օրորիր.

Նա այլս չի զգա բուրմունքը քո թռվանքի.  
Հավերժական նիրիի մեջ խաղաղվել է, ու կրծքին՝  
Գնդակներից բզկտված՝ արյան հետքեր կան կարմիր...<sup>9</sup>

Պատերազմները մարդկության կյանքում համաշխարհային ողբերգություններ են: Ամենուրեք երևում է ավերածությունների դաժան դեմքը՝ իրդեհներ, կոտորածներ, մարդկային ձակատագրերի խեղում, արյուն ու մոխիր: Եվ համաշխարհային գրականության անվանի քնարերգուններից մեկը՝ Ռոբերտ Բյոռնսը, իր գրիչը թաթախում է ժողովրդական ցավի ու վշտի մեջ, գրում.

Կովի ահեղ ժխորն անցավ,  
Դարձյալ աշխարհն է խնդում,

<sup>8</sup> Զարյան Ն., Երկերի ժողովածու, հատոր I, Երևան, «Հայպետ» հրատարակչություն, 1962, էջ 175:

<sup>9</sup> Ռեմբո Ա., Բանաստեղծություններ, Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 1991, էջ 32:



Դաշտեր, գյուղեր են մոխրացած,  
Ու բյուր որբերն են անտուն<sup>10</sup>:

Ճշմարիտ արվեստագետները, լինելով ժողովրդական տրամադրությունների, ձգտումների ու տեսչերի հսկական արտահայտիչներ, չեն կարող անմասն մնալ ազգային-ազատագրական պայքարից, ավելին, դառնում են այդ պայքարին շունչ ու ոգի տվող մարտիկներ՝ կանգնելով ծափակող իրադարձությունների առանցքում: Հիշենք Սերվանտեսին, որ թուրք-հսպանական պատերազմում երկու անգամ ծանր վիրավորվել է, Բայրոնին, որ մասնակցեց թուրք-հունական պատերազմին, Չարենցին, որ որպես կամավորական՝ գիևլորագրվել էր թուրքերի դեմ իր ժողովրդի մահու և կենաց կոհվներին, ֆրանսիական հեղափոխական շարժման ակտիվ գործիչ, բանաստեղծ Միսաք Մանուչյանին, որ իր կյանքը նվիրեց Ֆրանսիայի ազատությանը, արցախցի երիտասարդ բանաստեղծ ու գիևվոր Կոմիտաս Հակոբյանը, ով թուրք-ազերական իրուսակների դեմ պայքարում ազգի ազատության զոհասեղանին որեց կյանքը...

Հիրավի, ազատամարտի թեման առանձնահատուկ տեղ ունի բոլոր ժողովուրդների գրականությունների մեջ: Եվ, բնականաբար, ժամանակի ընթացքում ձևավորվել են հարուստ ավանդույթներ, որոնք իրենց նոր կիրառությունն են գտնում ժամանակակից գրական դաշտում: Դրա լավագույն օրինակներից է Արցախում ստեղծվող գրականությունը, որը համահայկական իրականության մեջ ունի իր ուրույն տեղը:

\*\*\*

Արցախի ազատագրական շարժումն իր բովանդակությամբ համազգային էր, և, բնականաբար, այն իր արտացոլումը գտավ հայ գրականության, հրապարակախոսության և բանաստեղծության մեջ: Իրենց ստեղծագործությամբ շարժմանն արձագանքեցին Սիլվա Կա-

<sup>10</sup> Բյուռն Ռ., Ոտարորիկ աղջիկը, Երևան, «Իրավունք» հրատարակություն, 2007թ., էջ 52:

պուտիկյանը, Վահագն Դավթյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Հովհաննես Գրիգորյանը, Դավիթ Հովհաննեսը և շատ ուրիշներ: Մեր նպատակից դուրս է երևոյթը դիտել ամբողջ հայ բանաստեղծության տեսադաշտում: Մեր նպատակն է ցույց տալ շարժման արձագանքներն արցախյան պոեզիայում, թե ինչպես Արցախի բանաստեղծությունը մասնակից եղավ ազատագրական շարժման իրադարձություններին: Պետք է ասել, որ ասպարեզի վրա էին, առանց բացառության, Արցախի բոլոր գրողները: Սակայն մենք երևոյթը քննելու ենք մի շարք առաջատար բանաստեղծների երկերի վերլուծությամբ: Այստեղ նկատի ունենք Հրաչյա Բեգլարյանին, Վարդան Հակոբյանին, Գուրգեն Գաբրիելյանին, Ռոբերտ Եսայանին, ինչպես նաև Բոգդան Զանյանին և Արտեմ Հարությունյանին:

Վարդան Հակոբյանն արցախյան պայքարի առաջին գծում էր ոչ միայն որպես գրողների միության նախագահ, ազգային-հասարակական գործիչ, այլև որպես բանաստեղծ և իրապարակախոս: Ուշագրավ փաստ է, որ «Ամարասի զանգերը» շարքը Վարդան Հակոբյանը բացում է «1988» բանաստեղծությամբ: Հաջորդ շարքում («Արցախա ծուխ») նա բանաստեղծություն է տեղադրում «1988 թվական, փետրվար» վերնագրով: Երկու շարքերի գրության թվականները նույն են՝ 1987-1989:

Անցնող տարին կարծես որևէ անակնկալ չի բերում, բայց ինչ-որ ներքին, տագնապ պաշարում է բանաստեղծի հոգին: «Անցվոր օրվա սաղմոսի մեջ փուշ կա սրտի», անդուռ ցավ կա հոգում և բնության ներդաշնակությունը ձեղքվում է այլ դասավորությամբ.

Ճաք է տվել խաչքարաբուռ ակն աղբյուրի.  
այս որտե՞ղ է կորչում, արդյոք, ջրիկը ջինջ,  
այս որտե՞ղ է երգն աղբյուրից զատել իրեն,  
այս որտե՞ղ է հավքը իր մեկ ոտքին կանգնում,  
իրար բեր քո ափերը զույգ, թող ակ լինի...<sup>11</sup>

<sup>11</sup> Հակոբյան Վ, Երկեր, հատոր Ա, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» իրատարակչություն, 2006, էջ 395:

«Եվ ես տիսուր եմ, չափազանց տիսուր», - ասում է բանաստեղծը և մտովի անձնավորում ֆիդայուն՝ Գևորգ Չավուշի, Անդրանիկի, Ավոյի կերպարներով, հիշում Ավարայրն ու Սարդարապատը և հպարտությամբ ակնարկում, թե «Ես օծվել եմ արյամբ պատմության, ինչպես Վարդանի կամ Անդրանիկի սուրբ»: Բայց նույն թվականի փետրվարը բացում է վարագույրները և բացահայտում կեղծիքը՝ եղբայրության գաղափարով քողարկված պետության քաղաքականության մեջ: Եվ բանաստեղծը ներկայացնում է գորշ իրականությունը, որը ազերական ոհմակները ոչնչացնում են այն ամենը, ինչ հայկական է, փորձում են սեփականացնել մեր ազգային մշակույթի կոթողները, երբ չի ստացվում դա, ավերում, հողին են հավասարեցնում: Եվ իրենց այդ զարդելի ու «պատիր բնույթով» անգամ չեն կարողանում հանկարծակի բերել հայոց քաշերին, որովհետև նրանք լավ են Ճանաչում թշնամու «Ենիշերական մոլուցքը վայրի», ավելին, պատրաստ են ամեն գնով արժանի հակահարված տալ նրաց ոտնագործություններին՝ քաջ իմանալով պատմության դասերը՝ որտեղ ոտք է դնում թուրքը, այնտեղ ավերվածություններ են լինում, մաս ու ավեր: Դիպուկ է Նկատել Վիկտոր Լյուգոն, նա սարսափները հակիրք Նկարագրելու համար ընդամենը գրում է մի քանի բառ. «Այստեղով անցել է թուրքը»<sup>12</sup>: Եվ դրանով ամեն ինչ ասվում է: Իսկ ահա համաշխարհային գրականության մի ուրիշ տիտան՝ Ֆ. Դոստոևսկին, ուղղակի երևույթը ներկայացնում է ամբողջության մեջ՝ բացառիկ վարպետությամբ ներկայացնելով թուրքի ամբողջական Նկարագիրը՝ «Կարամազով եղբայրներ» վեպում. «Իսկ այդ թուրքերը, ի միջի այլոց, հեշտասիրությամբ տանջել են նաև երեխաներին, մոր արգանդից դաշույնով կտրել-հանելուց սկսած մինչև ծծկեր երեխաներին վեր նետելը և սվինի ծայրով բռնելը՝ այն էլ մո՞ր աչքերի առաջ: Հենց բուն հեշտանքն էլ մո՞ր աչքերի առաջ անելն էր: Բայց

<sup>12</sup> Chekhov. am:

ահա այսպիսի մի տեսարան հատկապես հետաքրքրել է ինձ: Պատկերացրու ծձկեր մանկիկը՝ դողահար մոր ձեռքերին, շուրջը՝ ներխուժած թուրքեր: Նրանք մի զվարչալի խաղ են սկսել. փայփայում են փոքրիկին, ծիծաղում են, որպեսզի նրան էլ ծիծաղեցնեն, և հաջողում են, մանկիկը ծիծաղում է: Այդ բոպեին թուրքը նրա վրա ատրճանակ է ուղղում դեմքից չորս մատնաչափ հեռավորությամբ: Մանկիկը ուրախ ծլվում է, թաթիկները երկարում, որ բռնի ատրճանակը, և արտիստը հանկարծ չրթացնում է բլթակը ուղիղ նրա երեսին, ջախջախում նրա գլուխը... Արվեստ է, այնպես չէ: Ի դեպ, ասում են, որ թուրքերը քաղցրավենիք շատ են սիրում»<sup>13</sup>:

Ժամանակը փոխվում է, սակայն թուրքի բնույթը չի փոխվում: Եվ Վ. Հակոբյանը Ճշմարտացի գովներով է ներկայացնում թուրք-ազերի թշնամու կերպարը.

Ինքն իրեն բացեց կապանքը ստի,  
Ավարտվեց ամեն դիմակահանդես,  
Գայլը գայլն է նոյն՝ բնույթով պատիր՝  
Գտան մորթու մեջ, թե որջում անտես<sup>14</sup>:

Ոստիր նենգ է ու դավադիր, բայց գրողը չի կորցնում իր լավատեսությունը, նա սիրանքի է մղում ազգի զավակներին, հավատալով, որ, ի վերջո, մշտապես հաղթում է արդարությունը: Վ. Հակոբյանը հավատում է ազգային ոգու անվեհերության ու բացարձակ ուժին, գտնելով, որ Մայր Հայաստանի «անուշ ձայնը», որ կանչում ու կոչում է իր որդիներին հերոսության, մեզ համար «և սեր է, և սուր», իսկ սերն ու սուրը միասին անհաղթելի են.

Մենք՝ որդիք Հայկի, արդար ու վսեմ,  
ցավ ու դառնություն այդ ե՞րբ չենք տեսել,

<sup>13</sup> Դաստուակի Ֆ., Կարամազով Եղբայրներ, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1983, էջ 337:

<sup>14</sup> Հակոբյան Վ., Երկեր, հատոր Ա, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2006, էջ 432:

*բայց ոչ մի անգամ, Աստված է վկա,  
Արցախին հաղթող չի եղել, չկա...<sup>15</sup>*

1988 թ. հունվարին բանաստեղծ Վ.Հակոբյանը Գուրգեն Գաբրիելյանի, Հրայրա Բեգլարյանի և այլ մտավորականների հետ վերջնական տեսքի է բերում ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովին ուղղված այն նամակը, որով պահանջվում էր Արցախը վերամիավորել Հայաստանին: Մոսկվայում այն հայտնի դարձավ «23-ի նամակ» անունով, որովհետև նամակի տակ ստորագրել էին քսաներեք մտավորականներ: Որպես բանագնացներ Մոսկվա մեկնեցին Վ.Հակոբյանը, Գ. Գաբրիելյանը, Հ. Բեգլարյանը: Մոսկվայից վերադառնալուն պես նրանք Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում ժողովրդի առջև հանդես եկան՝ հնչեցնելով մինչև վերջ պայքարելու կոչը:

Վ.Հակոբյանն այդ թեժ օրին ցած չդրեց գրիչը՝ ստեղծելով մարտաշունչ երգեր, պոեմներ, բալլադներ և այլ գործեր: Կարևորելով գրողի դերն ու առաքելությունը՝ բանաստեղծը գրել է. «Մեր յուրաքանչյուր տող պիտի գնա այն ուղղությամբ, ինչ ուղղությամբ հոսում է մեր հողի համար ընկած զինվորի արյունը»:<sup>16</sup> Սա խոսում է այն մասին, որ գրողը պայքարի պահին գրիչը պետք է փոխարինի զենքով, մարտի նետվի գրչով ու զենքով: Չափազանց բեղմնավոր եղավ Վ.Հակոբյանի գրիչը շարժման և պատերազմական տարիներին: Իրար հետևից տպագրվեցին նրա «Ամարասի զանգերը» (1989թ.), «Արցախա ծոլիս» (1989թ.), «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» (1990թ.), «Տաճարն Աստծո» (1991թ.), «Սոսե» (1994թ.), «Մենարան» (1996թ.) և այլ գրքեր:

Գրականագետ Ս.Սարինյանը Վ.Հակոբյանի «Մենարան» ժողովածուի առաջարանում գրում է. «Անամա էր Վարուանի հոգու երկինքը

<sup>15</sup> Նոյն տեղում:

<sup>16</sup> Հակոբյան Վ., Երկեր, հատոր Ե, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2008, էջ 547:

մինչև 1988-ի փետրվարը: Վերահաս իրադարձություններն այլ գույներով են ներկում Արցախի բնանկարը: Սնում է Սերը, որ նախատեղ է, Բնության և կարոտի արձագանքներն ածանցվում են Արցախ-Պատմություն-Ցավ երրորդության հոգեբանական տագնապներին: Բանաստեղծի հոգու վրա ծանրանում է օրերի մղձավանջը, իրերի շարժումը փոխակերպվում է անկերպության քառսի... Այլ դողանջներ են հորու Գանձասարի և Ամարասի զանգերը, հողի հիշողությունից վերընձյուղվում է Հայկ Նահապետի ձգված աղեղը և պատմությունը մեր ազգային օրացուցի վրա դրոշմում է Ավարայրի և Սարդարապատի գինանշանը»:<sup>17</sup> Եվ ինչպես բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանն է նկատել, Վարդան Հակոբյանն իր գործն ուղղակի սկսեց այնտեղից, ուր կիսատ էր թողել Բագրատ Ովուբարյանը. «Վարդան Հակոբյանը գլխավորեց Արցախի հարցով Մոսկվա մեկնած մեր ժանաչված և անվանի մտավորականների պատվիրակությունը, այնուհետև նա Արցախյան շարժման նախաձեռնող խմբի կողմից ստացավ 1988թ. փետրվարյան պատմական նստաշրջանը կազմակերպված ձևով անցկացնելու հանձնարարություն, որը և կատարեց հերոսարար, նիստերի դահլիճից՝ ընկերների օգնությամբ, դուրս վոնդեց Ադրբեյջանի բարձրագույն ղեկավարությանը:

Ընդհանրապես պիտի ասեմ, որ արցախյան շարժման ընթացքում Վարդանը ավելի խորը բացվեց իր ըմբռությամբ»:<sup>18</sup>

Վ. Հակոբյանի «Արցախա ծովս» ժողովածուն հեղինակի հոգևոր աշխարհը նորովի բացեց ընթերցողի առաջ՝ թե՛ թեմատիկ ընդհանրացումների, թե՛ գրական-գեղարվեստական առանձնահատկությունների բազմազանության առումով: Նա զգում է հայրենիքի ցավը և ինչեցնում պայքարի կոչը:

<sup>17</sup> Սարինյան Ա., Բանաստեղծի հայտնությունը.-Վ.Հակոբյանի «Մենարան» (Երեսան 1996) գրքի առաջարանը, էջ 4:

<sup>18</sup> Հակոբյան Վ., Երգը որպես հանդիպման վայր, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» իրատարակություն, 2009, էջ 268:

«Մղջավանջ» բանաստեղծության մեջ ներկայացվում է Արցախ աշխարհի մոայլ իրականությունը: Եվ ընդհանուր այդ քառսի մեջ գրողը լուսի ելք է փնտրում, որովհետև գնալով, «գիշերվա սև ստվերները» խորանում են, «քարերի ձիչը ականջ է պատռում», և լուսին անգամ բանաստեղծի աչքին «արյունոտ կրնկի հետք է» թվում: Սակայն այդ գործության մեջ, Տունը, որ գրողի գրչի տակ ներկայանում է Արցախի հավաքական կերպարի մեջ, շարունակում է մաքառել, փնտրել փրկության դուր:

*Մղջավանջը Տան լուսից մարում է,  
ամեն նահատակ՝ գոյության վճիռ,  
հավատը՝ սուրբ սոուն, տաճարվող միամբ,  
առավոտը բաց դաս է հառնումի,  
և դարձն՝ արմատանց՝ մարտիրոսություն։<sup>19</sup>*

«Զգված աղեղներ» բանաստեղծության մեջ, որը գրողի պատկերավոր մտածողությունն ու խոսքի ամբողջականությունը ստեղծում են զգացմունքի ու փիլիսոփայական ընդհանրացումների մի ամբողջություն, դարձյալ խոսում է արցախցու լուսավոր կերպարը: Այստեղ ժամանակը ներկայանում է իր ողբերգական գծերի մեջ, և, սակայն դա չի խանգարում, որ «անմաշ ցավի դեմ» հայրենի եզերքը մնա կրկին լուսեղեն ու մաքուր «լեռան փեշից մեռոն է թափվում»:

*Քարտեզի վրա մի ծառս եղած ձի՝  
Արցախ-դաժան սեր, վիրավոր անուն,  
տունը փնտրում է աչքեր մայրական,  
հայկան աղեղը լարում է հոգու,  
և օրերն անցնող սլացող նետ են։<sup>20</sup>*

Եվ դարձյալ բանաստեղծությունն ավարտվում է լավատեսական տողով, որը հագեցած է հայկական ժողովրդական իմաստությամբ.

<sup>19</sup> Հակոբյան Վ., Արցախա ծովի, Երևան, «Լուս» հրատարակչություն, 1989, էջ 7:

<sup>20</sup> Հակոբյան Վ., Երկեր, հատոր Ա, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2006, էջ 406:



«Ինչ էլ որ լինի՝ մենք լինելու ենք»:

Գրող-հրապարակախոս, Արցախի հերոս Զորի Բալայանը բարձր գնահատելով Վ. Հակոբյանի տեղն ու դերը Արցախյան շարժման տարիներին, գրում է. «Մեր նորագույն պատմությունն ու արցախյան համազգային շարժումը դժվար է պատկերացնել առանց Վարդան Հակոբյանի: Դժվար է պատկերացնել և մեր պոեզիան առանց մարտնչող պոետ Վարդան Հակոբյանի: Այնպես են դասավորվել իմ Ճակատագրին ու կյանքը, որ ես մշտապես եղել եմ կամ մասնակիցը, կամ ականատեսը մեր ազգային գոյամարտի բոլոր կարևորագույն ու Ճակատագրական անցուղարձերի: Եվ կարող եմ վստահորեն ասել, որ ամենածանր ու դժվարին Ճանապարհների գրեթե բոլոր խաչմերուկներում հանդիպել եմ Վարդանին՝ լինի դա մեր ողբերգաշունչ Նկուղներում (այս մասին Վարդանը պիես է գրել՝ «Արցախյան բալլադ»), լինի դա հոսպիտալում, որտեղ բուժվում էին հերոսները, թե այլուր»:<sup>21</sup>

«Ամարասի զանգերը» խորագրով ժողովածուում բանաստեղծն անդրադառնում է մեր դժվարին ու հերոսական անցյալին, անձնավորում բնությունը՝ ժողովրդի Ճակատագրի միասնությամբ: Նա գրում է. «Քարերը հասցե են ու գիր// և Ճամփաներ են ծորում արյունից //և մանանա է հողը սրբազան, // Արցախն է՝ հովսի անտառ վեհարան»:

Պոետը հայոց երկիրը համարում է Աստծոն տաճար և մտնելով վանք, իր աղոռթքն է հնչեցնում.

*Երբ վանք են մտնում, մտնում են տաճար,  
ուրեմն՝ Աստծուց լսելիք ունեն,  
ուրեմն՝ Աստծուն ասելիք ունեն,  
ուրեմն՝ լուսը դեռ բաց է մնում,  
ուրեմն՝ հուսը դեռ հաց է մնում,  
և հոգու կանչ է դողանջը զանգի:*<sup>22</sup>

<sup>21</sup> «Եղիցի լուս», 2008, N 5, էջ 3:

<sup>22</sup> Հակոբյան Վ., Ամարասի զանգերը, Երևան, «Լուս» հրատարակչություն, 1989, էջ 14:



Հետաքրքիր է ժողովածուի «Այս խաչքարը ես եմ» բանաստեղծությունը, որտեղ հեղինակը ընդգծում է հայ ժողովրդի իմաստնությունն ու անմահությունը: Հայրենի երկրի ամեն մի խաչքար հայոց պատմության խոսուն վկան է, որն իր մեջ կրում է մեր նախնիների սրբազն պատգամները: Եվ ոչ միայն խաչքարերը, այև անգիր քարերը լուս պատմությունը.

*Մի փունջ խոտ պոկիր և սրբիր փոշին՝  
ինչ քար էլ լինի,  
հողում տարանջատ,  
սուրբ ու արցախան:  
Եվ կտեսնես, որ աչքերիդ առաջ  
կելսի-կհառնի  
անուշ մի երկիր՝  
աշխարհ Հայաստան։<sup>23</sup>*

Վարդան Հակոբյանը «Սոսե» ժողովածուի մեջ դիմում է գեղարվեստական հետաքրքիր հնարանքի՝ վերակենդանացնելով ու ժամանակակից իրականություն բերելով մեր ժողովրդի ազատության ու անկախության համար նահատակված հերոսներին, նրանց մասնակից դարձնում ազատագրական պայքարի նոր ծավալումներին: Մոնթեի, Ավոյի, Աշոտի և մյուս երեկի ազատամարտիկների կողքին՝ գենքը ձեռքներին, կովում են և՛ Անդրանիկ Զորավարը, և՛ Նժդեհը, և՛ Աղբյուր Սերոբը, և՛ Սոսեն... Եվ համազգային այս միասնականությունը, երբ զոհերն անգամ անմահ են և հորից ելնում, կովի դաշտ են մտնում հայրենիքի համար Ճակատագրական պահին, հայոց քաջերին դարձնում է անպարտելի: Եվ գրողն այդ ամենին հասնում է բազմապիսի պատկերների, գրական-գեղարվեստական հնարանքների միջոցով՝ հաճախ միֆիկան զգեստների մեջ ներկայացնելով իր հողի ազատության համար պատերազմող հայ շինականին: Ար-

<sup>23</sup> Նոյն տեղում:



ցախյան ազատամարտի բնորոշ գծերից մեկն էլ այն է, ըստ գրողի, որ այստեղ կողք-կողքի են և Ավարայրի, և Սարդարապատի հայոց բանակները:

Գեղարվեստական նույր ու համոզիչ հևարանքներով բանաստեղծն ամբողջական մի պատկեր է ստեղծում «Վարդանանց բլուր»-ում, որը, կարելի է ասել, նորարարականն շունչ ու ոգի է բերում, մտքի ու մտածողության նոր ոգով՝ իմաստափրական ինքնատիպ լուծումներով։ Բանաստեղծության համար հեղինակը հետաքրքիր բնաբան է ընտրել, որը և առաջին իսկ տողերից հիշեցնում է ստեղծագործության թեմատիկ ուղղվածության մասին։ «Արցախյան մի զորամաս կովել է Ավարայրում և վերադարձին հերոսաբար նահատակվել Եղեգնաձորում։ Հերոսների աճյուններն ամփոփող բլուրը հիմա կոչվում է Վարդանանց բլուր»։ Այդ գործն ստեղծելիս հեղինակն, ինչպես ասում են, նյութ է տվել նաև Վարդանանց բլրի հետ կապված այն ժողովրդական լեգենդը, ըստ որի մի մեծամայր ամեն օրվա իրիկնադեմին մոտ՝ սպիտակ քողերի մեջ, աննկատելի մոտենում է Վարդանանց բլրի վրա ամփոփված շիրիմներին և նրանց վրա իր համբույրը թողնում։ Եվ իրական ու տեսլականը բանաստեղծի մտապատկերների մեջ միաձուլվում են՝ ծնունդ տալով մի գեղեցիկ ստեղծագործության, որը, հիրավի, կարելի է համարել արդի մեր քնարեգության այդ թեմայով գրված լավագույն գործերից մեկը։ Վ. Հակոբյանը չի գնում տրորված Ճանապարհով, թարմ է և հղացումը, և գեղարվեստական կատարումը։ Կատարվում է հրաշքը՝ «և հողում թաղված խաչը ելսում է, և ոտք է բռնում Ճամփան Արցախ»։ Բանաստեղծությունը բաղկացած է տասնինսգ տողից։ Ցուրաբանչուր հնգատողի մեջ ամփոփվում է պատմական մի դրվագ՝ ընթացքի դինամիկ զարգացման մեջ, տողից տող ուժգնանում է տպավորությունը, գործողություն-պատկերներն ընթերցողի համար դառնում են շոշափելիության աստիճանի տեսանելի։ Եվ գործողությունների, ապրումների միահյուսված տրամադրությունը դառնում է

խիստ վարակիչ: Բանաստեղծության ընդհանուր համապատկերի մեջ Եղեգիք գետը դառնում է շարական, վանքի զանգը միանգամից Այբբենարան է դառնում, հայոց աղեղները պրկվում են նորից ու նորից, մեր քաջերի ձեռքերում շողում է Թարթառը՝ որպես սուր... Ասել է թե՝ նոր մարտ է ծավալվում՝ մարտից հետո: Եվ այս պարագայում Վարդանի ու Նրա ձիու կարմիրը խորհրդանշում է ոչ թե արյուն, այլ հաղթանակ:

«Վարդանանց բլուր» բանաստեղծության մեջ, թվում է, տողերից յուրաքանչյուրն իր ինքնուրույն կյանքով է ապրում և մեկը-մյուսի հետ մտքի կապ չունի, բայց ամբողջականության մեջ Նրանք հնչում են ներդաշնակ ու օրգանապես իրար հյուսված.

Դարձը Ճամփի հետ մաքառող տուն է,  
և ամեն թուփ-քար՝ զինվոր, Եղիշե,  
և Խաչնն ի վար Տղմուտն է հոսում  
և հողից Ելսող-ծլող հերոսներ  
և Աստված մեկը հազար է ալուս<sup>24</sup>:

Վարդան Հակոբյանի «Մենարան», «Անդրադարձի տեսիլներ» շարքերում և «Գողգոթա», «Քրիստոսի ծաղիկները», «Դադարներ» և այլ պոեմներում դարաբաղյան մոտիվը նոր որակ է ստանում: Այստեղ ավելի է ընդգծվում փիլիսոփայական ընդհանրացումը: Այսպես, օրինակ՝ «Դադարներ» նախերգանք-պոեմում, որը կոչվում է «Քրիստոսի վերջին խոսքից առաջ և հետո», Հակոբյանը խորհրդանիշ է դարձնում Մոնթեի կերպարը՝ որպես Նվիրումի, նահատակության և հերոսության պատճամ.

Իսկ Ավոն, ահա, Մելքոնյան Մոնթեն,  
զավակների հետ երկրի  
տևական է ափի մեջ տիեզերական

<sup>24</sup> Հակոբյան Վ., Երկեր, հատոր Ա, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2006, էջ 402:



փոշին աստղապեծ՝

վերագտնելու  
առասպելները հինավորց հողի՝  
իրեն իսկ պատկերով,  
դեռևս չքանդակված ոչ արծաթե,  
առավել ևս ոչ ուկե  
մետաղադրամի վրա:<sup>25</sup>

Արցախյան ազատամարտի գրականության ամենագեղեցիկ էջերից է Վարդան Հակոբյանի «Քրիստոսի ծաղիկները» ասքը: Բանաստեղծական «դադարներով» ընդմիջվող պատմություններում ներկայանում է պայքարող Արցախս՝ գյուղ առ գյուղ, անուն առ անուն, ընդգծելով արցախցու բնույթը, նրա սրբազն հավատը հայրենի հող ու ջրի պահպանության համար:

Սև սամումը եղեռնական մոլեզնում է Արցախա  
սուրբ լեռների մեջ...

Յուրաքանչյուր վայրկյան, որ նոր է գալիս,  
մեզ տիրեցնում է,

առավել,  
Քանզի ավելի խորն ենք ապրում նախորդ վայրկյանի  
ողբերգությունը.<sup>26</sup>

Այս հոգեբանությամբ են արարվում քարինտակցիների պայքարն ու հաղթանակը, Միքայել պապը հուսադրում է ապրողներին. «Մենք չենք գնում, ժողովուրդ, մենք միշտ գալիս ենք և երբեք չենք գնալու: Ես մեծ, Ես ալսահման դավի մեջ էսօր ես համոզվեցի, որ իսկապես, Աստված էլ դարաբաղցի է»:

Իզուր չէ Վարդան Հակոբյանը «Քրիստոսի ծաղիկներն» անվանել ասք, այսինքն՝ ավանդակեալ, պայքարի, նահատակության երևույթը

<sup>25</sup> Հակոբյան Վ., Երկեր, հատոր 9, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2007, էջ 317:

<sup>26</sup> Նոյն տեղում, էջ 318:

դարձրել լեզենդ, ասել է թե՝ բնությամբ իմաստավորված հավերժություն: «Պատմում են,-գրում է Հակոբյանը,-որ այդ օրից սկսած, ամեն օր լուսաբացից առաջ արծիվները գալիս երամով, շենի շուրջ կանգնում են, ամեն մեզը մի ժայռի վրա, հսկում թարինտակցիների առավոտը, իսկ լուսը բացվելուց հետո թռչում են երկինք: «Են մեր սուրբ Նահատակների արթուն ոգիներն են...»:<sup>27</sup>

Նույն գաղափարը արտահայտված է նաև «Գողգոթա» պոեմում: Պոեմի առիթով գրականագետ Ս. Սարինյանը նկատում է, որ Հակոբյանի պոետական ոճին յուրահատուկ է դառնում միստիկ-տեսչլային ուրվապատկերը: Այսպես էլ գողգոթայի ամբողջ միստերիան կատարվում է ցնորսամիտ տեսչլքում:<sup>28</sup>

*Մարդիկ լսեցեք, մարդիկ, դուրս եկեք,  
Ժողովուրդ, աչքդ լուս,  
Նահատակները, տեսեք, գալիս են,  
Եել, գալիս են, հաղթել՝ գալիս են,  
Մի-մի մոմ վառեք՝ ի սեր Հիսուսի,  
հարություն առել՝ վերադառնում են,  
սեղաններ զցեք, բացեք շուրջպարը,  
չգալուց հոգնել, արդեն գալիս են,  
վերադառնում են,  
վերադառնում են Նահատակները:*<sup>29</sup>

Հայտնվում է նահատակ գինվորի կինը, վերիիշում սիրո ու գորովանքի երդումը և «հպարտ ու անպարտելի կանգնում է շիրիմին՝ որպես հավերժ կենդանի մի խաչ»: Նահատակների շիրիմներից «դուրս են գալիս աղավնիներ հազար ու հազար ու թռչում են ան-

<sup>27</sup> Նոյն տեղում, էջ 347:

<sup>28</sup> Հակոբյան Վ., Երկեր, հատոր Ա, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2006, էջ 12-13:

<sup>29</sup> Վ.Հակոբյան, Երկեր, հատոր Գ, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Վաշագան Բարեպաշտ» հրատարակություն, 2007, էջ 293:

հայտ, անօթևան ուղղությունների աշխարհ»: «Ամբողջ այս միստերիան,-գրում է Սարինյանը,-կատարվում է գործողություններից դուրս, հոգեկան էկզալտացիայի անգիտակից սկեռումի պարագայում, որ առհասարակ բնորոշ է Վարդան Հակոբյանի ստեղծագործական խառնվածքին»:<sup>30</sup>

Այստեղ արտահայտվում է նաև Հակոբյանի տեսակետը բանաստեղծի կոչման և բանաստեղծության իմացական նշանակության մասին: Այս հարցին Հակոբյանն անդրադարձել է բազմից՝ թե հարցագրույցներում և թե տեսական հոդվածներում: «Ես պաշտում եմ Արցախյան շարժման բոլոր նահատակներին,-գրում է նա,-իմ կյանքի բողեներն այլևս նրանց անվան մեջ բացվող խնկածաղիկներն են... Առանց դրան բանաստեղծությունը այլասերություն է»:<sup>31</sup> Եթե այս տողերը վերաբերում են ժամանակի զգացողությանը, ապա մի այլ ընկալմամբ բանաստեղծությունը համազոր է Ճշմարտության ու աշխարհի ճանաչմանը, ի գորու է գուշակելու ապագան, ճանաչելու իրերի բնույթը և գիտակցելու ազգային շարժման պատմական հեռանկարը: Ծանր փորձության առաջ է դրված Արցախը, մաքառումը կլինի դաժան, բայց «միսիթարությունն այն է, որ մեր ժողովուրդը աննկուն է ու ամուր, ոչ միայն չի զիջում, չի նահանջում, այլև գնալով դառնում է ավելի վճռական, ավելի փարձառու, ավելի անսխալ»:<sup>32</sup>

Պայքարի այս զգացողությունը մշտատև է եղել, այնպես որ, բանաստեղծի համոզմամբ այն եղել է «մեր գոյության մշտական պայքարը, մեր հավերժական լինելիության ձգտումը»: Ուշագրավ է, որ բանաստեղծի ներգգացողության մեջ դեռ պայքարի իրական վիճակից առաջ, եղել է նրա հոգու արձագանքը դեռևս 1987թ. գրած բա-

<sup>30</sup> Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գիրք 3-րդ, Երևան, 2002, էջ 511:

<sup>31</sup> Հակոբյան Վ., Երկեր, հատոր Դ, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Կաչագան Բարեպաշտ» հրատարակություն, 2008, էջ 526:

<sup>32</sup> Նոյն տեղում, էջ 309:

Նաստեղության մեջ.

Բանաստեղծության համար չեմ ասում...

Մեկ-մեկ թվում է՝ Դավիթն եմ, Վրաս՝  
քառսուն ջաղացքար-

Զենով Օհանի ձենն է ինձ հասնում:

Մեկ-մեկ թվում է, թե Ավարայրի  
Հողն է ոտքիս տակ,

Վարդանանց կովի ձենն է ինձ հասնում:

Մեկ-մեկ թվում է, թե Ճգնավոր եմ  
Փակված մի վանքում-

Խալխի դուրս կանչող ձենն է ինձ հասնում:

Մեկ-մեկ թվում է՝ Սարդարապատում  
Ընկած զինվոր եմ-

Հաղթանակի սուրբ ձենն է ինձ հասնում:

Մեկ-մեկ թվում է՝ Արցախի սրտից  
Կաթած արյուն եմ-

Դմեռնող հույսի ձենն է ինձ հասնում...

Աչքովս տեսա,

Երկինք ու Երկիր և Աստված վկա,

Բանաստեղծության համար չեմ ասում<sup>33</sup>:

Իսկ այն, ինչ Հակոբյան ասում է բանաստեղծության մասին, ապա միանգամայն խորիմաստ բնութագիր է ժանրի իմացական արժեքի տեսակետից. «Ժողովրդի մաքառման փիլխոփայությունը, դա նրա բանաստեղծությունն է, հայրենիքի հոգևոր շարժման, կենսական զարգացման դինամիկան: Եվ հենց այստեղ է, որ ժողովրդի ցավը հայ գրականության մեջ «վերածվում է կենսական էներգիայի, մեծացնելով իր ազդեցության ուժը գոյության պայքարի բոլոր

<sup>33</sup> Հակոբյան Վ., Անդրադարձի տեսիլներ, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2002, էջ 146:

ոլորտներում»:<sup>34</sup> Այստեղից տրամաբանորեն բխում է սահմանումը, թե «իսկական բանաստեղծությունը պետք է ֆիդայական լինի» և բանաստեղծությունն ինքնին պայքար է: Հիրավի, տեղին է ասված Ս. Խանզադյանի խոսքը՝ Վ. Հակոբյանի մասին. «Ֆիդայի է նա Էռթյամբ, իր պոեզիան էլ՝ ֆիդայական»:<sup>35</sup>

Պայքարի, հաղթանակի, կատարյալի ձգտման փիլիսոփայական հորումների մի ամբողջական մատնաշար է կազմում Վարդան Հակոբյանի պոեզիան:

\*\*\*

Արցախյան շարժման վերջին երկու փուլերում էլ (60-ական և 80-ական թվականներ) բանաստեղծ, երգահան Գուրգեն Գաբրիելյանն իր գրչունկերների հետ իրադարձությունների կիզակետում էր: Նա ոգեշնչում էր ժողովրդին հայրենասիրական երգերով, որոնցում Արցախի լեռներն ու գետերը, վանքերն ու հուշարձանները լեզու առած, պատմում են մեր հերոսական անցյալի մասին:

Հայրենի եզերքը Գ. Գաբրիելյանը ոչ թե ներկայացնում է սոսկ իբրև գեղատեսիլ մի վայր, այլ որպես հերոսների օրրան: Նա անթաքույց հապատության զգացումներ է ապրում հայրենի երկրամասի հիշարժան պատմությամբ, նրա հրաշք բնությամբ, ստեղծարար ու կենսախինդ մարդկանցով, որոնք իրենց ավանդապաշտությամբ ու նվիրվածությամբ ամուր են պահում «պապերի պաշտած հողը».

*Ես ապրում եմ Ղարաբաղում*

*Եվ չեմ ապրի մեկ այլ հողում...<sup>36</sup>*

Առաջին հայացքից ոչ «բանաստեղծական» թվացող այս տողե-

<sup>34</sup> Հակոբյան Վ., Երկեր, հատոր Ե, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2008, էջ 210:

<sup>35</sup> Սողոմոնյան Տ., Տաճարի Ճանապարհին կամ մենարանի ովախավորը, Ստեփանակերտ, Լ ԴՇ «Կաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2007, էջ 10:

<sup>36</sup> Գաբրիելյան Գ., Արցախյան նվագարան, Երևան, «Հանգակ» հրատարակչություն, 2002, էջ 102:

րում պատկերը կառուցված է սոցիալ-հոգեբանական հենքի վրա: Թվում է, հեղինակի կողմից ամեն ինչ ասված է պարզ, բայց երբ խորանում ենք երևոյթների մեջ, կանգնում ենք բազմաթիվ հարցականների առաջ. ո՞վ է ստիպում դարաբաղցում չափել հայրենի հողի վրա, ավելին՝ ո՞վ կամ ինչն է ստիպում նրան տեղափոխվել «այլ մի հող»: Եվ պատասխանները, գրողի ապրած ժամանակի համապատկերում, ուրվագծվում են տեսանելիորեն, մեզ հաղորդակից են դարձնում այն տիեղծ ու դաժան իրականությանը, որի մեջ հայտնվել էր Աղրբեցանին բռնակցված հայկական Արցախը: Մանավանդ, այստեղ ենթատեքստի մեջ երևում է նաև մի այլ միտում: հեղինակի գրեթե բոլոր գիշակից-գրչակիցները, ովքեր անցյալ դարի վաթունականներին ստորագրել էին Արցախը մայր Հայաստանին միացնելու նամակի տակ, երկրամասից արտաքսվել էին ազերական իշխանությունների կողմից: Եվ Գաբրիելյանն այն քչերից մեկն էր, ով համարձակորեն մնացել էր հայրենի աշխարհում ու շարունակել հայրենասիրական իր գործը: Տիրող իրավիճակները բանաստեղծը ներկայացնում է որպես «մութ մղճավանջ», որի միջից «ծլեց հույսը արևածագի»: Գաբրիելյանը դիմում է գրական նոր հնարանքի՝ կիրառելով մոգական ռեալիզմի մեթոդը: Անելանելի վիճակի մեջ ժողովրդական հույսը փոխվում է արծիվների հզոր բանակի, հույսի խորքերից ելում են ազատության մարտիկները՝ «որդիք Արցախի»<sup>37</sup> անզիջում կովի մեջ են մտնում թշնամու դեմ: Ու թե ընկնում են նրանք, դարձյալ անվեհեր են ու անպարտ, որովհետև «կովում են շիրմից էլ անգամ Նահատակ որոիք Արցախ աշխարհի»<sup>38</sup>:

Պատերազմական թեմատիկան նոր ու ինքնատիպ արտացոլում է գտնում անվանի մանկագրի ստեղծագործություններում թարմություն հաղորդելով նրա խոհին, մտքին, պատկերավության միջոցնե-

<sup>37</sup> Նոյն տեղում, Էջ 119:

<sup>38</sup> Նոյն տեղում:

րին ու փիլիսոփայական ընդհանրացումներին:

Գուրգեն Գաբրիելյանը հայ մանկական պոեզիայի ամենատաղանդավոր Ներկայացուցիչներից մեկն է: Նրա գողտրիկ բանաստեղծությունները մանկան լեզվով պատմում են գեղեցիկի ու բարու մասին, ծանոթացնում մեր ժողովրդի հոգևոր գանձերին, սեր արթացնում դեպի մայր բնությունը, հող-հայրենին:

Իհարկե, քանի որ բանաստեղծի էությունը շաղախված էր ամբողջովին Արցախով, չը կարող նրա ցանկացած երգի ու պատկերի մեջ չարտահայտվել այն անբավականությունը, ըմբռուսությունն ու Ներքին պայքարի ոգին, որ մշտական հակասության մեջ էին իշխող կարգերի հետ: Հիշենք, թերևս, խորհրդային «ամենախաղաղ» տարիներին գրած նրա «Արցախյան շարական» բանաստեղծությունը, ուր Արցախ աշխարհը Ներկայանում է որպես «բիբլիական հնություն» ու «նորություն նորօրյա», «Զրիեղեղված...խորություն», նահատակված պապերի «արյունահունց անմահություն», «հորովելված ավանդություն»: Գեղարվեստական այս պատկերներում ազգային բնավորության ու Ճակատագրի շեշտված գծեր կան, որ գաբրիելյանական ոճի կիրառության մեջ ապահովում են քնարական խոսքի նոր որակ: «Բանաստեղծի յուրաքանչյուր բառ,-գրում է գրականագետ Վ.Հակոբյանը, -պետք է իր մեջ կրի բոլոր այն հատկանիշները, որ հատուկ են հեղինակին, այլապես տողը տող չի լինի, պատկերը՝ պատկեր»:

Գաբրիելյանը բնավորություն է «տեղադրում» անգամ ենթատեքստի մեջ՝ ժամանակի գրաքննությունից խուսափելու համար: Ահա թե ինչո՞ւ Ներբողական բանաստեղծության մեջ տեղ են գտնում ազերական իշխանությունների ձիրաններում հայտնված Արցախին բնորոշ այսպիսի տողեր:

*Դու սևագոյն իմ ծիածան  
Եվ սևագոյն լուս ու արև...*<sup>39</sup>

<sup>39</sup> Նոյն տեղում, էջ 103:

Գրողի ըմբռստությունն ակնհայտ է: Դա պարզորոշ ձևով երևում է Գաբրիելյանի նաև դարաբաղյան բարբառով գրված գրեթե բոլոր գործերում («Մեր ապրուստը մին կով ա, մին էլ տեսեր՝ կյուղացեն, ըրտասունքը մին ծով ա, դե հունց ապրե գյողացեն»<sup>40</sup>, «Զուլումեն վերջ էլ կինի, մեր չորեն կեչ էլ կինի, թյաքի ուրուր դայաղ կենանք, դյուշմաններան սայաղ կենանք»<sup>41</sup> և այլն): Գաբրիելյանը կերտել է հայ իրականության մեջ բոլոր ժամանակների լավագույն գործերից մեկը՝ «Ղարաբաղի հորովելը»՝ նորովի զարգացնելով անմահ Կոմիտասի գեղարվեստական ավանդները: Ակադեմիկոս Ս. Սարինյանը Գաբրիելյանի մասին գրել է. «Ինձ մեծ հաճույք է պատճառում նրա բանաստեղծությունը: Իսկ «Ղարաբաղի հորովելը» ինքն է՝ որպես բանահյուսություն»<sup>42</sup>... Բանաստեղծը գրեց հետագայում նաև պատերազմական սերնդի տրամադրություններն ու հոգեկան աշխարհի բռնկումներն արտահայտող երգեր՝ երեխաներին («արծվի Ճտեր») նախապատրաստելով արդարության մեծ պայքարին: Գրողը զրուցում է ուազմի դաշտ մեկնած փոքրիկի հետ («Օրորոցային»), որը նույնիսկ դեռ խոսել չգիտե, նրան հայտնում է, որ հայրը մեկնել է կովի ու ինքն էլ պատասխանում.

*Բա ինչ անի, որ չգնա...*

*Այ-այ, այ-այ,*

*Հայր պիտի որ հայ մնա,*

*Հայ, հայ, հայ, հայ...<sup>43</sup>*

Ազգային ինքնության պահպանման այս խնդիրն է, որ ոտքի է հանել Արցախ աշխարհը, ամբողջ հայությանը: Արցախից գիլվորն իր լեռներից ժառանգած ամուր ու անկոտրենի բնավորությամբ, բո-

<sup>40</sup> Նոյն տեղում, էջ 178:

<sup>41</sup> Նոյն տեղում:

<sup>42</sup> Գուրգեն Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում, Ստեփանակերտ, «Վաշագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2007, էջ 359:

<sup>43</sup> Գաբրիելյան Գ., Արցախան նվազարան, Երևան, «Հանգակ» հրատարակչություն, 2002, էջ 118:



լոր ժամանակների հողմերին դիմակայող ոգով, բանաստեղծի գլխավոր մետաֆորն է, որը և գրողի գրչին հաղորդում է կենսունակության նոր ուժ ու ավյուն, նրա քնարական խոսքը դարձնում ավելի ինքնատիպ ու համոզիչ: Առանց ձիգ ու ջանքի, հասարակ ու սովորական բառերով Գուրգեն Գաբրիելյանը ներկայացնում է հայոց նորօրյա ազատամարտի անթերի պատկերը: Այս առումով խիստ բնութագրական է գրողի «Նոր սերնդի երգը» բանաստեղծությունը: Առհավասիկ:

Ես ծնվել եմ կովի տարում,  
Երբ հավըն հանգիստ չուներ թառին,  
Նեղում էին երբ որ բարուն  
Ու մահ սփոռում լեռնաշխարհին:  
Ես ծնվել եմ կովի տարում,  
Երբ արձիչն էր ձուլվում քարին,  
Երբ արյունն էր տալիս ավյուն  
Լուսի ակունք մեր թարթառին:  
Ես ծնվել եմ կովի տարում,  
Երբ ցորեն էր դարձել գարին...  
Երբ որ հաց էր քարը դառնում,  
Տառը՝ զինվոր հայոց բառին:

Ես ծնվել եմ կովի տարում,  
Ծնկի բերել նենգ ու չարին...  
Եվ իմ կամքն եմ թելադրում  
Չար աշխարհին ու մեր դարին<sup>44</sup>:  
Գաբրիելյանական արվեստի ամբողջ վեհությունն այս տողերի մեջ ներկայանում է աննախառեա որակով ու վարպետությամբ: Նա Արցախն է ներկայացնում առանց Արցախի անունը տալու: Ծննդյան

<sup>44</sup> Նոյն տեղում, էջ 118:

պատճառահետևանքային տրամաբանությամբ, ինչպես ասում են, մեկը մյուսին շարունակող - լրացնող տողերը, թվում է՝ միֆական կերպար են ստեղծում իրական հողի վրա: Եվ ընթերցելով բանաստեղծությունն՝ ընթերցողը համոզվում է, որ բանաստեղծության հերոսը՝ մի նոր դյուցազուն, չէր կարող չծնվեր, որովհետև հայրենիքը օրհասական վտանգի մեջ է: Եվ հենց նվիրումի, մարդասիրության, հանուն լրայի ու բարոյ մաքառման այս եզրույթում է, որ շարքային հողվորի մեջ զարթնում է հայոց դյուցազներգությունից եկող ծոռոթյունը: Ռուս մեծ մանկագիր Ս. Մարշակը Գուրգեն Գաբրիելյանի մասին գրել է, որ նա իրաշալի գիտե «Երեխաների հոգին և նրանց հետ խոսելու կարողություն»<sup>45</sup> ունի:

Պատերազմի դաժան ու տագնապալից օրերին, երբ ոմբակոծվում, հրթիռակոծվում էր Արցախը, բանաստեղծը բացահայտել է, որ Արցախի մանուկները զարմանալիորեն, ինչպես հեքիաթում, արագ են հասունանում և մեծավարի դատում: Նրանք ևս սկսում են ըմբռատանալ ու ընդվզել չարի դեմ՝ առաջ քաշելով իրենց տեսակետները. «Կրակոցով տան կրակը Հայի տանը չի մարի, չէ...»:

Դիմելով Արցախի մանուկներին՝ մանկագիրը պապի դերում օրինում է նրանց գալիք օրերը և հավատում արցախցիների հաղթանակին՝ ասելով. «Ես օրինում եմ ձեր վաղը...»<sup>46</sup>:

Գուրգեն Գաբրիելյանի մտածողությունը ժողովրդական է: Եվ ազատամարտի թեմայի նկատմամբ նրա մոտեցումներն էլ առանձնանում են իրենց բնորոշ կողմերով, ասել է թե՝ ցանկացած թեմայի մեջ նա գտնում է իր՝ գաբրիելյանական թեման, այն տարրալուծելով ազգային բանահյուսության մեջ: Ընդգծենք, որ գեղրավեստական այս հատկանիշը Գուրգեն Գաբրիելյանի ստեղծագործության

<sup>45</sup> Գուրգեն Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում, Ստեփանակերտ, ԼՂՀ «Վաշգան Բաբեպաշտ» իրատարակչություն, 2007, էջ 363:

<sup>46</sup> Գաբրիելյան Գ., Արցախյան նվազարան, Երևան, «Չանգակ» իրատարակչություն, 2002, էջ 6:

ամենաբնորոշ առանձնահատկությունն է: Այսպես, անդրադառնակը նրա պատերազմական թեմայով գրված բազմաթիվ գործերից մեկին ևս. («Քարի փոքրն է, որ չի մեծանում»): Այս բանաստեղծության մեջ պատերազմի ավերածությունների ու խեղված ճակատագրերի մասին է խոսվում: Ու նորից՝ բարու և չարի կոփվը, ու նորից՝ այդ կոփում մաքառող մարդը՝ արցախցին: Նոսրացել են «ջահել հայրերի» շարքերը, նրանցից շատերը զոհվել են պատերազմում, ստվարացել են «այրի մայրերի» շարքերը, շատացել են «որբերն աշխարհի»: Բայց բարի մարդկանց շնորհիվ է, որ լավը հաղթանակում է, նրանց շնորհիվ է «որբը մեծանում, աճում, քերծանում».

*Ահա թե ինչու*

*Առածն ասում է,*

*«Քարի փոքրն է,*

*Որ չի մեծանում»<sup>47</sup>:*

«Արցախի ֆիդայիներին» բանաստեղծության մեջ Գուրգեն Գարդիեսանը գովերգում է հերոս որդիներ ծնող մայրերին, ապա դիմում է ֆիդայիներին, որոնք նախնիներից ժառանգել են նրանց ուժն ու կորովը: Արցախի նոր ֆիդայիները մի նոր Անդրանիկ, Գևորգ Չափուշ, Աղբյուր Սերոբ են, պայքարի են ելել, «Որ ազատ ապրեն ազգ ու հայրենիք»: Բանաստեղծը նրանց է ուղղում իր պատգամը.

*Բարձր պահեցեք ոգին ձեր արի,*

*Օ՛, ֆիդայիներ Արցախ աշխարհի*<sup>48</sup>:

Գուրգեն Գարդիեսանի յուրաքանչյուր բանաստեղծության մեջ ներքին, անհաշտ կոփի կա: Դա գախս է նրա հախուտն բնավորությունից ու բարձր ոգուց, չարի նկատմամբ անհանդուրժականությունից: Գարդիեսանի խոսքը պայքար է՝ հանուն Արցախի ազատության: Այս մասին ժամանակին այսպես է արտահայտվել Արցախյան

<sup>47</sup> Լոյն տեղում, էջ 119:

<sup>48</sup> Գարդիեսան Գ., Ըստրանի, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2007, էջ 199:

համազգային շարժման մեծ ռահվիրա և առաջնորդ Բագրատ Ուլիուբարյանը. «Բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանը՝ իմ իին բարեկամը, 60-ականների շարժման մասնակիցներից մեկը, զգացմունքով, բանաստեղծորեն կառավարող, գլուխը հազար քարի տալուց հետո էլ անհունորեն հավատավոր է, Արցախի փրկությանը մինչև վերջ նվիրված բարի հսկա...»<sup>49</sup>

Եվ բանաստեղծը «Արցախ աշխարհի» ֆիդայիների կերպարը ամբողջացնում է իր «Ողջակիզված կյանք», «Մուսա լեռան... երկու որդին» ասքերում ու մի շարք մեծակտավ գործերում, որոնցում նա անդրադառնում է արցախյան ազատամարտում զոհված քաջերի հերոսության ու սիրանքին, նրանց կերպարների գեղարվեստական մարմնավորմանը, չէ՞ որ այդ նրանց շնորհիվ է Արցախի հավատը «միշտ վեհ ու բարձր», «Անունը՝ միշտ նուշ ու քաղցր», «Կամքը՝ ամուր, կուռ ու կարծր»<sup>50</sup>, չէ՞ որ այդ նրանց շնորհիվ է Արցախը «թևավոր գորավոր» ու անհաղթ:

Գաբրիելյանի պատերազմական թեմայով գրած գործերը, հիրավի, արցախյան գոյամարտի տարեգրությունը հարստացնում են իրենց գեղարվեստական մակարդակով:

\*\*\*

Հրացյա Բեգլարյանի պոեզիայի առանցքն Արցախ աշխարհն է: Արցախից են ծնունդ առել բանաստեղծի հայրենաշունչ ու ինքնատիպ երգերը: Դրանցում հեղինակը սերկայացնում է հայրենիքի վառ գույները, արցախցու ազնիվ նկարագիրը, նրա հայրենասիրությունը, խիզախությունը, հյուրասիրությունն ու բարությունը, անմնացորդ նվիրվածությունն իր հողին ու աշխատասիրությունը:

<sup>49</sup> Գուրգեն Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Վաշագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2007, էջ 361:

<sup>50</sup> Գաբրիելյան Գ., Արցախյան նվագարան, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2002թ., էջ 102:



Մշակ է նա ու շինարար,  
Բայց հասարակ մարդ մի կարծիր,  
Գիտնական է ու գորապար  
Բազմավաստակ դարաբաղջիլ<sup>51</sup>:

«Թերևս ոչ մի այլ բանաստեղծ այնպես չի նկարագրել հայրենի հուշիկները Արցախի պոետական քարտեզի վրա, որքան Հրաչյա Բեգլարյանը»<sup>52</sup>- գրում է գրականագետ Սերգեյ Սարինյանը: Եվ իսկապես, Հ. Բեգլարյանի պոեզիան ամբողջությամբ ներծծված է Արցախով: Ահա թե ինչու բանաստեղծը հայրենիքի Ճակատագրական պահին ոչ միայն չի լրել Արցախը, այլև իր ողջ էռությամբ նվիրվել է նրա փրկության գործին:

Հր. Բեգլարյանը ազգային-ազատագրական պայքարի առաջամարտիկներից է: Շարժման հենց սկզբից նա իր գործուն ու անմիջական մասնակցությամբ համախմբում էր ժողովրդին: Մեծ հայրենասեր լինելուց բացի, նա միաժամանակ այդ օրերին հանդես էր գալիս որպես հասարակական գործիչ, արդարության գինվոր, մարտնչող հրապարակախոս: Արցախի օրիներգիչն ապրում էր ամբողջությամբ Արցախով և Արցախի հետ՝ իր գրավոր ու բանավոր խոսքով խանդավառում շարժման մասնակիցներին:

1990 թվականին Երևանում տպագրվում է Հրաչյա Բեգլարյանի «Հրաշք Երկիր, իմ Ղարաբաղ» ժողովածուն: Այստեղ բանաստեղծը ողջունում է արցախցիների հերոսական պայքարը, կոչ է անում միաբանվել համազգային գաղափարի շուրջ և մարտնչել մինչև վերջ՝ հանուն ազատ ու անկախ Արցախ աշխարհի:

Իր բանաստեղծություններում պոետը քննադատում է թուրք-ազերիների անմարդկային, դաժան վարքագիծը, Խորհրդային Միության

<sup>51</sup> Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2000, էջ 13:

<sup>52</sup> Սարինյան Ս., Հայ գրականության Երկու դարը, գիրք հինգերորդ, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2009, էջ 245:

դեկավարներին, որոնք աչք են փակել արդարության առաջ և խրախուսել հայության նկատմամբ իրագործվող ոճրագործությունները: Ավելին, ժողովորդների բարեկամության կեղծ քարոզներով նրանք ձգտել են մշտապես մոլորության մեջ պահել Արցախի հայությանը՝ նրանց սնելով սուս ու մտացածին խոստումներով: «Այն, ինչին մենք ամուր կերպով հավատում ենք,-գրել է Փիլիստիփա Բերտրան Ռասելը,-կոչվում է մոլորություն՝ եթե այն Ճշմարիտ չէ»<sup>53</sup>: Ազերական «կարգախոսները» ոչ միայն Ճշմարիտ չեն, այլ իրականությունը խեղաթյուրելու դիտավորություն ու միտում ունեն:

Բաևաստեղծ Հրաչյա Բեգլարյանը հավատում է իր ժողովրդի հաղթանակին: Նրա հավատը գալիս է դարերի խորքից, ժողովրդական հերոսների անձնազոհությունից ու անևախաղեա սխրագործություններից: Եվ խորը հիացմունքով ու բավականությամբ է գրողը նկարագրում Ստեփանակերտի Վերածննդի հրապարակը (1988թ.), ուր նրա հարյուր-հազարավոր հայրենակիցները հավաքվել ու երկրի իշխանություններից պահանջում են Արցախի հիմնախնդրի արդարացի լուծում: Հր. Բեգլարյանի տողերի միջից հառնում է ոչ միայն ըմբոստ, արդարադատ, այլ նաև իր պարզության մեջ անթերի, աշխատավոր արցախցին, իր սար ու քարին, իր եզերքին նվիված շարքային հողվորը, շինարարը, մարդ, որ միշտ կանգնած է «Աստծո Ճանապարհին»:

*Խելագար էինք տնով ու տեղով  
Եվ ամբողջ ցեղով  
Խելագար էինք,  
Հոյսի անթեղով  
Մենք մատաղցու  
Անմեղ զառ էինք.<sup>54</sup>*

<sup>53</sup> Բերտրան Ռ., Փիլիստիփայության պրոբլեմները, Երևան, «Չանգակ-97» հրատարակչություն, 2004, էջ 103:

<sup>54</sup> Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2000, էջ 154:

Ուշադրություն դարձնենք բանաստեղծի «խելագար Էհնք» արտահայտությանը, որն, անշուշտ, ընթերցողին հիշեցնում է չարենցյան «խելագարված ամբոխների» մասին: Եվ միանգամից «խելագար» հասկացությունը իմաստավորվում է ժողովրդական ըմբռատությամբ, ազատության համար բուռն պայքարի ոգով, որը բնորոշ է հայ մարդու հոգեկերտվածքին՝ սկսած ամենահինգույն ժամանակներից: Եվ ուա իր լավագույն արտահայտությունն է գտնել նաև «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպում: Խոսքը հայկական ծոռոթյան մասին է: <Իրաշյա Բեգլարյանի գրչի տակ այն նոր կերպարով ու սոցիալական դաշտի մեջ է ներկայանում ընթերցողին: Եվ ինքը պոետը, որպես Սասնա մի նոր ծուռ, պայքարի է ոգեշնչում մարդկանց, քանի որ բացվել է խարկանքների ու կեղծիքների կծիկը: Հգալով դաժան իրողությունը՝ բանաստեղծն իշխանությունների նկատմամբ լցվում է դառնությամբ ու ատելությամբ: Նա գրում է.

*Եվ նա, ում վրա հույս Էհնք դրել,*

*Մեր գլխի համար*

*Կացին էր սրում...<sup>55</sup>*

Իրաշյա Բեգլարյանի երգը, հիրավի, եզրքային բնավորություն ունի իր խորքերում, Արցախ է ներկայացնում, գրողի յուրաքանչյուր բառ շնչում է ազգային այն առանձնահատուկ հատկանիշներով, որոնք բնորոշ են դարեր շարունակ ազատության համար մաքառող հային: Այս տեսակետից առանձնանում է նաև գրողի «Մեր կողը» ստեղծագործությունը: Այստեղ ոչ միայն սոցիալական, այլ նաև հոգեբանական խնդիրներ է արձարծում Հր. Բեգլարյանը, ցուց տալով, թե «արցախցու կողը» որքան դիմակայուն է դառել, «հաստացել»՝ ընդդիմանալով, նենգ ու ստոր թշնամիներից պաշտպանվելով, ավելին՝ ոստիին պարտության մատնելով, չթողնելով, որ շրթայն իր լեռների ազատությունը: Եվ բանաստեղծության մեջ գրողի խոհերի

<sup>55</sup> Նոյն տեղում:

ու փիլիսոփայական խորհրդածությունների կենտրոնաձիգ ուժը դառնում է արցախյան բարբառից պոկված մի սովորական բառ՝ որձաքար, այսինքն՝ չկոտրվող, ամուր, անառարկելի կոշտ ու պինդ: Իր հոգու ներքին ապրումներն ամփոփող այդ մի հատիկ բարի մեջ Հրաչյա Բեգլարյանը տեսնում է ոչ միայն եզերքային բնավորություն, այլև անառիկ օրրանի պատմությունն ու հավերժությունը: Ինչու չէ՝ նաև աշխարհագրությունը: Բանաստեղծը վերահմաստավորում է ազգի լինելության խորհրդանիշը ներկայացնող Ավարայրը ևս, ընդգծելով, որ ուր ժողովրդի՝ իր ոգու պահպանության համար կոիվ է մղվում, այստեղ էլ մեզ համար շարունակվում է մեր Ավարայրը: Փիլիսոփայական խորհրդածությունները բանաստեղծը խտացնում է ընդամենը երկու կարճ տողում.

*Որտեղ Ավարայր*

*Ես այստեղ թուր եմ<sup>56</sup>:*

Եվ Ճիշտ է նկատել Վ.Հակոբյանը, որ դա «...Հրաչյաի մտածողության առանցքային ելակետն է, որով առանձնանում է նրա գաղափարական ամբողջ համակարգը, անհատականացվում ոճը: Պոզաներ ու Ճիգեր չկան բանաստեղծի տողերի մեջ, նա նույնիսկ մոռացել է իր բանաստեղծ լինելը և անդավաճան «զուգաձորդը» դարձել իր հող ու ժայռի, ինչպես ասում են, դարձել է նրա գոյությունն իր քայլերով հաստատող շարքային դպիրն ու գինվորը...»<sup>57</sup>:

Հրաչյա Բեգլարյանի պոետական նկարագրին խիստ հատուկ է խոսքի ներքին պոլեմիկան, որը ի հայտ է գալիս ոչ միայն ազատամարտին և վիրված կամ այն նկարագրող գործերի մեջ, այլ նաև այն ստեղծագործություններում, որոնք, ինչպես ընդունված է ասել, նախապատրաստել են շարժումը՝ ընթերցողին մշտապես տանելով դեպի արդարության ու ազատության համար հասունացող պայքարը:

<sup>56</sup> Նոյն տեղում, Էջ 14:

<sup>57</sup> Բեգլարյան Հ., Արցախ- Նամե, գիրք տասներորդ, Ստեփանակերտ, ԼՂՀ «Վաշագան Քարեպաշտ» հրատարակչություն, 2014, Էջ 111:

Նման գործեր շատ ունի Հրաչյա Բեգլարյանը: Դրանցից են նաև «Ղարաբաղ», «Ինձ մի հարցրու» գործերը: Բանաստեղծի համար քարը մատյան է, որովհետև քարին գրվածը մնայուն է և չեն կարող այրել, «տանել բարբարոսները», ահա թե ինչու արցախցին մեսրոպյան այբուբենը թողնում է և՛ շիրմաքարերին հայոց նահատակների, և՛ աղբյուրների հուշաքարերին, և՛ կամուքների կամարներին, և՛, մանավանդ, «Եզզվի Վրա մեր մանուկների<sup>58</sup>»: Եվ ահա իր այդ ստեղծագործության մեջ արծարծած գաղափարը բանաստեղծը շարունակում է զարգացնել «Ինձ մի հարցրու» քերթվածի մեջ, նշելով, որ «Երկրի պատմությունը» գերազանց գիտեն թե Աբու-Մուսեի Նիզակը, թե «Խաչենի իշխան Սմբատի թուրը», թե Գյուլիստան ու Տիգրանակերտը, թե... Եվ պոետը հորդորում է «անծանոթ այցելուին», որ Արախի պատմության մասին նրանց հարցնի.

*Նրանք ինձնից մեծ են ահագին  
Եվ իմ երկրի պատմությունը հին  
Մերտել են անզիր:*<sup>59</sup>

Բազմահատոր իր երկերը Հր. Բեգլարյանն անվանել է «Արցախնամե»: Եվ, հիրավի, նրա բանատողերում արցախյան բույրն է, բնությունը, պատմությունը, կենցաղն ու ոգին: Ղարաբաղը նրա իղձերի ապաստարանն է և իր ստեղծագործություններում նա բանահյուսում է՝ անսխալ ներկայացնելով Արցախ բնաշխարհին ու տոհմիկ արցախցուն: Երևանյաների ընկալումն անմիջական է, զգացմունքը գերիշխում է բանականության թանձրամած խոհերում: Զգացմունքը բխում է խոսքի բանահյուսական պարզությունից:

*Այս սրբատաշ քարերի,  
Անմաշ, անքաշ քարերի,*

<sup>58</sup> Բեգլարյան <.., Արցախ- Նամե, Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2003, էջ 16:

<sup>59</sup> Բեգլարյան <.., Քևար Ղարաբաղի, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2004, էջ 25:



Խաղող ու նուռ քարերի,  
Խոսող ու լուռ քարերի  
Համար ենք կովել:

Ախ, այս անշունչ քարերի,  
Հոգու տրտունջ քարերի,  
Միշտ զուսպ ու լուրջ քարերի,  
Տուն ու կամուրջ քարերի,  
Մեկ էլ բոլոր դարերի  
Համար ենք կովել<sup>60</sup>:

«Արցախական աշխարհի գրեթե բոլոր բաղադրատարրերը,-գրում է Վարդան Հակոբյանը,-կան Հրաչյա Բեգլարյանի բանաստեղծություններում, նրա բառը արյան շարժում է ու ընդվզում: Ավելին լինելու կամ ներկայանալու հավանականություն էլ չունի բանաստեղծի ապրումը: Նա բանաստեղծության մեջ բերում է եզերքների խտացված բնավորությունը, որը և կոլորիտ է ներկայացնում, աշխարհին պարզում է հայրենի ափերի հոգևոր աշխարհագրության քարտեզը»<sup>61</sup>:

Բանաստեղծի տեսադաշտում ազատամարտի վկայությունն է, օր առ օր, ժամ առ ժամ ընթացող տեղաշարժերի ականատեսը ժամանակն ընկալում է «շիկացած օրերի» տագնապով: Հրապարակային ելույթների հետ զուգորդվում են բանաստեղծական արձագանքները, պայքարի ու կամքի գեղումները լուսարձակում են հայրենական հուշիկների անանց կարոտով. «Այս ծաղկահոտ սարերից // Կանաչ նարոտ սարերից // Կարոտս չի հագենում»... Բանաստեղծն իր մեջ միաժամանակ զգում է հայոց մեծերի մարտական ոգին.

<sup>60</sup> Նոյն տեղում, էջ 20:

<sup>61</sup> Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2014, էջ 111:



Ինձ թվում է, թե  
Ես եղել եմ միշտ,  
Կովել եմ Տիգրան Մեծի բանակում,  
Ապստամբել եմ Հրադաշտի դեմ  
Եվ Վարդանի հետ մտել Ավարայր<sup>62</sup>:

Սակայն մտորումների առանցքում հայտնվում է մեր ազգային Ճակատագրի ծուռ ընթացքը՝ ինչ անեծքով մեզ վիճակվեց այս գողգոթան, մի՞թե վերջ չկա մեր տառապանքին, մինչև հիմա մեր թշնամին «կիսալուսինն էր», հիմա դրան «գումարվեց նաև Կրեմլի կարմիր աստղը»: «Արցախն Ավարայր» երկարաշունչ բանաստեղծության մեջ Բեգլարյանը նշում է, որ 20-րդ դարը եկավ Մեծ Եղեռնով, բարեկամի կեղծ կոչերով թուրքն արշավեց և ավերեց վանք ու տաճար, պղծեց Ամարաս ու Դադիվանք, քանից վանքեր ու տաճարներ, իսկ Կրեմլը սնամեջ քարոզներով մոռացության տվեց ոճրագործի արարքները: Բանաստեղծը կոչ է անում դասեր առնել պատմությունից, հորդորում է մարդկանց՝ ավելի սթափ մոտենալ կյանքի ու մահվան խնդիրներին և ժամանակին չարի գործը խափանել: < Բեգլարյանն ահազանգում է ների ծրագրերի մասին, տագնապ բարձրացնում: Եվ հիմա էլ՝ տարիներ հետո, նրա խոսքը շարունակում է չկորցնել իր արդիականությունը: «Զենքերը վար չպիտի դնենք,-ժամանակին գրել է Թ.Վ.Վիլսոնը,- քանի դեռ Թուրքիայի կողմից ձնշված ազգերն իրենց ազատությունը չեն ստացել: Թուրքիան վայրագությամբ կտրեց անցավ իր տերերին՝ գերմանացիներին: <այերի նկատմամբ գործադրված մեթոդիկ ջարդերը ստիպում են մեզ Եվրոպայի վրայից ավելու այս տգետ ու վատառողջ ավազակախումբը»<sup>63</sup>:

<sup>62</sup> Բեգլարյան <, Արցախ-Նամե, Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2000, էջ 8:

<sup>63</sup> Chekhov.am

Այսօր էլ շարունակում են հսկամական պետության խմբավիրումները՝ Թուրքիայի ու Ադրբեյջանի օրինակով, ավերել տարրեր ազգերի մշակութային արժեքներ, գրավել հողատարածքներ ուրիշ պետություններից և ստեղծել «նոր» պետություն։ Իսկ մեծ տերությունները ոչինչ չեն անում այդ ուղղությամբ, քանի որ նման խմբավիրումներն ունեն նաև Թուրքիայի նման (Երեք՝ ավագակախումբ, այսօր ՆԱՏՕ-ի անդամ) հովանավորներ... Արցախում ապրող և ստեղծագործող մի խումբ գրողներ (Գ.Գաբրիելյան, Հր. Բեգլարյան, Մ.Հովհաննիսյան, Վ.Հակոբյան և ուրիշներ), որոնք քաջատեղյակ են թուրքական գործելակերպին ու «Ճեռագրին», Արցախի և ընդհանրապես հայ ժողովրդի փրկությունը տեսնում են միայն ազգային միասնության և ընդհանուր պայքարի մեջ։

Բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանի ազգային գգացմունքներն ու գաղափարներն ավելի ցասկոտ են հնչում «Արցախ-Նամե»-ում։ Ցոր դրվագներում Բեգլարյանը ներկայացնում է պայքարի տարեգրությունը՝ շարժման և հաջորդող բարդ իրադարձությունների քասում։ Սկիզբը «Միացումի» կոչն է, բռնությամբ Հայաստանից անջատված մարզի արդարացի պատմական իրավունքի վերականգնումը՝ հանուն միասնական հայրենիքի։ Եվ ի պատասխան այդ արդարացի ազգային բաղձանքներին, Կրեմլի տիրակալը «հատուկ դրություն» է սահմանում Երևանում։ Իսկ ազատության երդումն անկարելի է կասեցնել պայքարի ու նահատակության ելած հայոց միասնական կամքի հանդեպ։

Զարկին զարկ կտանք առավել,  
Մահին մահ կտանք առավել,  
Աստված տեսնում է գործը մեր,  
Աստված օրինում է գործը մեր,  
Աստված ասում է կովեր,  
Կովեր, որ ապրեք, հայեր,



Իսկ թե պետք է մեռնել,  
Մեռնելը զինվորին վայել...<sup>64</sup>

Հաջորդ դրվագներում «կրեմյան ասովիսներ» են Ղարաբաղի շուրջ, սաֆոնովյան բոլովայուններ՝ Ստեփանակերտում ու ամենուր, մտավորականության բանտարկում, պետական զորքերի խժդություններ մարզի տարածքում: Բայց անառարկելի է հայոց երդում՝ ոչ մի թիզ հող հայրենի երկրամասից, իսկ Ադրբեյջանի կործանումը անխուսափելի է և «ոչ մի ալլահ, ոչ մի հրեշտակ, չի կարող նրան այլևս փրկել»:<sup>65</sup>

Դրվագներից մեկը թուղթ է՝ ուղղված արտակարգ դրության զինվորական պարետ գեներալ Սաֆոնովին, որտեղ բանաստեղծը, նշավակելով դրածո գեներալի տմարդի արարքները, ապարդյուն է համարում ապստամբներին Ճնշելու նրա ջանքերը, քանզի, ի հեճուկս ների ձգտումներին, «Մեր գործը կվերջանա հաղթությամբ»:<sup>66</sup> Չափածո բնագրին բանաստեղծը կցում է նաև իր ուղերձը Գորբաչովին, որն իբրև վավերագիր արժե ներկայացնել ամբողջությամբ. «Պրեզիդենտ Գորբաչով, այն բանից հետո, երբ դուք հայտարարեցիք, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեյջանի անբաժանելի մասն է, ադրբեյջանցիները դա հասկացան որպես հայերին կոտորելու, նրանց իրենց հազարամյակների հայրենիքից քշելու ակնարկ և գործի անցան խորհրդային բանակի հետ միասին: Առաջինը Գետաշենն էր, որ հոշոտվեց խորհրդային բանակի օգնությամբ: Գետաշենյան օպերացիան սկսվել է նաև Հադրութի շրջանի գյուղերում:

Հայրենիքի սերը գորեն և բարձր է աշխարհի բոլոր գրված և չգրված օրենքներից, երբ դուք ուզում եք մեզ մեր հայրենիքում ապրելու համար Ճզմել տանկերով, արեք, մենք պատրաստ ենք հանուն

<sup>64</sup> Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2000, էջ 237:

<sup>65</sup> Նոյն տեղում, էջ 258:

<sup>66</sup> Նոյն տեղում, էջ 256:



գաղափարի մեռնել:

Մահից առաջ իմ պարտքն է հայտարարել՝ ի լուր համայն աշխարհի, այն մասին, որ Խորհրդային Միությունում կատարվող բոլոր դժբախտությունների պատճառը Դուք եք: Ինքնասպանությունն անգամ ձեզ չի փրկի այդ խայտառակությունից»:<sup>67</sup>

Հրաչյա Բեգլարյանի ստեղծագործությունն արցախյան ազատամարտի գրականության ամենաարժեքավոր էջերից է:

\*\*\*

Մտավորականը՝ լինելով ժողովրդական տրամադրությունների ու իղձերի արտահայտիչը, ազատագրական պայքարի բոլոր փուլերում էլ հայտնվել է իրադարձությունների կենտրոնում: Նա հանդես եկավ ոչ միայն որպես ազգային արդար ցասման ու ընդգրությունների գաղափարախոս, այլև՝ ընթացք տվեց պայքարին: Այս առումով անգնահատելի դերակատարություն ունեցան Խորհրդային տարիներին այլախոհ ձանաչված այնպիսի գրողներ, ինչպիսիք են, ասենք, Հովհաննես Շիրազը, Պարույր Սևակը... Հովհաննես Շիրազի «Ղարաբաղի ողբը» հանձարեղ բանաստեղծությունը կոմունիստական գաղափարներով կաղապարված իրականության մեջ պայթեց ուումբի նման՝ միանգամից փոխելով մթնոլորտն ու մարդկանց հայցըները, պարզեց դառը Ճշմարտությունը: Ճիշտ է, այն պարբերական մամուլում կամ գրքերում չէր տպագրվում, բայց ձեռագիր վիճակում ձեռքից-ձեռք էր անցնում, ուսանողության միջոցով հասնում Արցախ, Սփյուռքում տարածվում ավելի հաճախակի դարձնում նրա հեղինակի տնային կալանքները Խորհրդային իշխանությունների կողմից: Դա մեր դժվարին պատմության մեջ այնպիսի մի ժամանակաշրջան էր, երբ իսկական հայրենասիրությունը դիտվում էր որպես հայրենադավություն, երբ Ճշմարիտ խոսքի հեղինակներին ենթարկում էին հալածանքների ու անսաելի կտտանքների: Սակայն Շիրազի բարձր

<sup>67</sup> Նոյն տեղում, էջ 226:

ժողովրդականությունը նրան փրկում էր իշխանական ծայրահեղ գործողություններից: «Ղարաբաղի ողբը» մեր քնարեգության պատմության մեջ Մկրտիչ Պեղիկաշվանի «Զեյթունյան երգեր»-ից, Միքայել Նալբանդյանի «Ազատություն» մոնումենտալ բանաստեղծությունից հետո կազմում է մի գեղեցիկ երրորդություն, այն միանգամից բացեց միլիոնավոր մարդկանց ստով ու կեղծիքով շղարշված աչքերը, մթնոլորտը փոխեց:

Ղարաբաղը մորս կանչն է,  
Ինձ է կանչում հոյսով տրտում,  
Ղարաբաղը իմ կակաչն է,  
Կարսիր, բայց սև ունի սրտում<sup>68</sup>:

Ղարաբաղը Աղբեջանին բռնի կերպով կցվելուց հետո, Հովհաննես Շիրազն առաջին անգամ գեղարվեստական այսպիսի բարձր մակարդակի խոսքով անդրադարձավ ղարաբաղյան հիմնախնդրին, ըմբոստացավ անարդարության դեմ, ազատասիրական իր գաղափարների շուրջ համախմբեց ամբողջ հայությանը: Նա այնպիսի պատկերներով ամրագրեց Ճշմարտությունը, որ մի ամբողջ խորհրդային երկրի պետական մեքենա չկարողացավ անգամ առարկություն գտնել: «Ղարաբաղը մորս կանչն է»... Եվ եթե նկատի առնենք նաև այն հանգամանքը, թե մայրական սերն ինչպիսի մեծ ու էական նշանակություն ունի պոետի համար (մանավանդ՝ նրա համար մայրը պատկերն է մայր հայրենիքի), ապա պարզ կդառնա, թե ինչպիսի խորքով ու վեհությամբ է բանաստեղծի կողմից բարձրացվում Ղարաբաղը մայր Հայաստանին վերադարձնելու հարցը: Եվ որքան էլ հոկա լինի «տրտում», այնուամենայնիվ, այն հորդորում ու կոչում է խիզախման: Հիրավի, մեծ երկերի սերմանցան է Հովհաննես Շիրազը, որի գաղափարները ոչ միայն ծլեցին մարդկանց սրտերում ու մտքերի մեջ, այլ արգասավորվեցին, տվին իրենց ցանկալի պտուղ-

<sup>68</sup> Մուրադյան Ա., Հովհաննես Շիրազ, գիրք Ա, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 253:

Ները: Հայկական ժողովրդական իմաստությունն ասում է՝ այն, ինչ խոսքն է անում, աշխարհում այլ մի ուժ չի կարող կատարել:

Ազգային ազատագրական պայքարի գաղափարները, բնականաբար, նորովի էին արձագանք գտնում Արցախում, ծիլեր տալիս հոգևոր դաշտում: Անշուշտ՝ նաև գրողների շրջանում: Եվ՝ ոչ միայն: Մովսես Յախշունցն ի սկզբանե հայտնի էր Արցախում որպես ռուսաց լեզվի և գրականության լավագույն մասնագետներից մեկը: Սակայն շուտով նա հայտնվեց ազերական անվտանգության աշխատողների ուշադրության կենտրոնում: Պատճառը՝ Մովսես Յախշունցը գրում է բանաստեղծություններ և այն էլ՝ ազգային (ազերիների բնորոշմամբ՝ նացիոնալիստական) բնույթի: Եվ պատահական չէ ամենսին, որ երբ սկսվեց արցախյան ազատագրական շարժումը, առաջիններից մեկը Շուշիի բերդում հայտնվեց արդեն պատկառելի տարիքի հասած (ութսունամյակին մոտ), տեսողությունը գրեթե կորցրած մանկավարժ - բանաստեղծը, որը ոչ միայն գեղարվեստական խոսքով, այլ գործով ևս մասնակցում էր շարժմանը՝ իր տղաների հետ, ամբողջ ընտանիքով: Ի դեպ, նրա որդուն՝ արձակագիր ու բանաստեղծ Էդվարդ Սաֆարյանին ևս ազերիները երկար ժամանակ կտուանքների ենթարկեցին Բարվի բանտերում: Միայն գրուներ Սիլվա Կապուտիկյանի և Զորի Բալայանի միջամտությունն օգնեց՝ Մովսեսի միջոցով, որ բանտից ազատվի Մ. Յախշունցը:

Ազերական կարգերն ու բարբերն արցախցուն չէին կարող բավարարել, դրանք խեղում էին իրականությունը, մարդկանց ձականագրերը, մղում ստրկության: Ահա թե ինչ է գրել այդ մասին Մ. Յախշունցն իր «Մի կյանքի պատմություն» բանաստեղծության մեջ:

*Բայց իմ կյանքի վրայով  
Մի թուրք անցավ անողոք,  
Եվ ինձ տրված շնորհին  
Ես մնացի անհաղորդ<sup>69</sup>:*

<sup>69</sup> Յախշունց Մ., Երկնամերձ երկիր, Երևան, «Էդիթ Պրիստ» հրատարակչություն, 2007, էջ 14:

Բանաստեղծի «իմ կյանքի վրայով» պատկերի մեջ խտացված է ոչ միայն մեկ անհատի, տվյալ պարագայում հեղինակի, այլ ամբողջ Ղարաբաղ աշխարհի կերպարը: Բաքուն ամեն ինչ անում էր դարաբաղցու ձայնը խացնելու, Նրա աստվածատուր շնորհներն ի չիք դարձնելու, ոչնչացնելու համար: Եվ իր հող ու ջրին, իր աստվածային աշխարհին Նվիրված մարդը չի կարող չըմբռստանալ: Նրա խոստովանությունն անգամ ընդվզում է դիտվում ազերիների կողմից. «Լախ քեզ, հայրենի հող իմ, Ապա՝ Աստծուն եմ պաշտում»<sup>70</sup>: Սա ոչ միայն պարտքի զգացողություն է, ինչպես ասում են, այլ բնական օրինաչափություն: Հասկացություններ, որոնք, ի վերջո, Ներդաշնակված են մեկ միասնական գաղափարի մեջ՝ անկախ նրանից, թե ինչպես դրանք կմեկնաբանվեն այս կամ այն մտածողի կողմից: Այսպիսի հետաքրքիր դիտարկումներ ունի գերմանացի իմաստասեր Շտայներ Ռուտոլֆը. «Մարդն ազատ է միայն, եթե իր կյանքի ամեն մի ակնթարթին ի վիճակի է հետևելու ինքն իրեն: ...Ազատությունից կատարված գործողությունը ոչ թե բացառում է բարոյական օրենքները, այլ Ներառում դրանք: Միայն թե այդ գործողությունն ավելի բարձր է կանգնած սոսկ օրենքների կողմից թելադրված գործողությունից: Ինչու պետք է սիրուց կատարված իր գործողությունն ավելի քիչ ծառայի համընդհանուր բարօրությանը, քան գործողությունը, որ կատարել եմ միայն այն պատճառով, որովհետև համընդհանուր բարօրությանը ծառայելը ես ընկալում եմ որպես պարտք: Սոսկ պարտքի հասկացությունը բացառում է ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆԸ, որովհետև չի կամենում ընդունել անհատականը, այլ պահանջում է վերջինիս ենթարկումը համընդհանուր որևէ նորմի: Գործողությունների ազատությունը մտածելի է միայն էթիկական ինդիվիդուալիզմի դիրքից»<sup>71</sup>: Ազատության, պարտքի ու գործողությունների մասին Յաշխունց

70 Նոյն տեղում, Էջ 131:

71 Շտայներ Ռ., Ազատության փիլիսոփայություն, Երևան, «Մարգիս Խաչենց» հրատարակություն, 1998, Էջ 113:

գեղագետն ունի իր սեփական մոտեցումները, որոնք լավագույն արտահայտություն են գտել նրա պոեզիայում, առավել ևս՝ պատերազմական թեմայով գրված գործերում։ Այս առումով հատկանշական է բանաստեղծի «Օրիներգ» բանաստեղծությունը, որը նա միասնականության կոչ է անում հայ ժողովրդին, հորդորում՝ անվեհեր մնալ ազատության ու անկախության համար պայքարում, որովհետև փրկությունը միայն ու միայն «ինքնիշխան մեր նոր պետության» մեջ է տեսնում։

*Ազատված ընդմիշտ կապանքներից հին՝  
Յուրաքանչյուր հայ կքայլի առաջ,  
Կանցնի այն ուղին, երկար, դժվարին՝  
Իր բաժին բեռը ուսերին առած։*

*Եվ աստղապատկան մեր Մասիսները  
Մեր սրտերի մեջ ու մեր դրոշին  
Կտանենք առաջ՝ հիշելով մի բան,  
Որ դեռ աշխարհում ուժն է որոշիչ<sup>72</sup>.*

Չնայած երկիրը «թուրքերով շրջապատված, զորքերով շրջապատված»<sup>73</sup> է, բայց գրողը միշտ լավատեսորեն է մոտենում Արցախի հիմնախնդրին ու իր տրամադրությունը հաղորդում գինակիցներին, որովհետև իր ազգի ու Արցախի հաղթանակը տեսնում է հայոց քաջերի մեջ։ Նա գտնում է, որ ինչքան էլ «գողերով շրջապատված, գելերով շրջապատված» լինի Արցախը, մեկ է՝ չի պարտվի, որովհետև ապավիսում է ինքն իր ուժին, իր ներքին հզորությանը, որը անկոտրելի է, որովհետև արդարության համար է կովում։

*Քաջանց երկիր, փոքր ածու,  
Բարձրագնա դու իմ Արցախ,*

72 Յախունց Մ., Երևանմերձ երկիր, Երևան, «Էղիթ Պրինտ» հրատարակչություն, 2007, էջ 229:

73 Նոյն տեղում, էջ 241:



Քո անունն է մակրնթացվում

Դեպի ափը արդարության<sup>74</sup>:

Բանաստեղծն անդրադառնալով Մովսես Խորենացուց մեզ հասած բավականին դիպուկ և իմաստուն արտահայտության՝ «փոքր ածու», միաժամանակ մեր նախնիների կատարած սխրանքների մասին է հիշեցնում. «Որովհետև մենք թեպես փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ ու գորությամբ թույլ և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր երկրումն էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել...»<sup>75</sup>. Պոետը հաստատում է, որ ինչքան էլ դժվարին է եղել մեր ձանապարհը պատմության քառուղիներում, այնուամենայնիվ, մենք հաղթահարել ենք այն, քանզի և մեր գործն է արդար, և նպատակը՝ վեհ. «Թող չլինենք մենք հուսահատ»: Գրողի յուրաքանչյուր հարցականի մեջ անգամ կողավորված բարձր հավատով, կանակ պատասխան.

Գերության մեջ այս բռնադատ,  
Հայահայած ու հայաջինջ,  
Ուս մնացիր դու այնքան դար  
Հայապատկեր ու հայաջիդ:

Խոսելով, հիրավի, մեր գրականագիտության մեջ դեռևս իր արժանի գևահատականը չստացած բանաստեղծ Մովսես Յախշունցի մասին, մեր գրողներն ու գրականագետները փորձել են անսխալ ձևով տալ նրա պոետական նկարագիրը: Եվ յուրաքանչյուրը տեսել է իր Յախշունցին: Արձակագիր Սկրտիչ Սարգսյանը բանաստեղծի կերպարում առանձնացրել է բնապաշտությունը («Մովսես Յախշունց արցախցի է և նրա պոետական սերը բնապաշտությունն է»<sup>76</sup>):

<sup>74</sup> Նոյն տեղում, էջ 234:

<sup>75</sup> Խորենացի Մ., «Պատմություն Հայոց», Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1968, էջ 70:

<sup>76</sup> Յախշունց Մ., Երկնամերձ Երկիր, Երևան, «Հեղիտ Պրիստ» հրատարակչություն, 2007, էջ 306:

Գրականագետ Զավեն Ավետիսյանը համաձայն է արձակագրի տված գլուխատականին, միայն թե ունի իր հավելումը. «Յախշունցը բնապաշտ է բառիս ոչ փիլխոփայական իմաստով, այլ դրանից դուրս, իբրև բնության մարդ, բնության անվանման ձայնն ունկնդրող Նրա անքնին դաշնության խորհուրդը որոնող բանաստեղծ»<sup>77</sup>: Գրող Վարդան Հակոբյանը՝ խոսելով Մովսես Յախշունցի պոեզիայի մասին, շեշտը դնում է Նրա ազգային-ազատագրական շարժմանը Նվիրված գործերի վրա, Նրան ներկայացնում որպես մարտիկ-բանաստեղծ. «Յախշունցն արցախյան համազգային շարժման ակունքներում էր իր տղաներով, գերդաստանով, տնով, շենով ու բանաստեղծությամբ»<sup>78</sup>: Իհարկե, տարբեր անդրադաներում մոտեցումները տարբեր են, բնականաբար, բայց կարևոր մի խնդրում բոլորը նույն «կետին են խփում»՝ ընդգծելով Արցախին, իր ժողովրդին, հանդ ու քարին Նվիրված մարդու և պոետի կերպարը: Իսկ ահա գրող Սաղաթել Հարությունյանն իր խոսքում փորձում է ամփոփել բոլոր կարծիքները. «Յախշունցի խորաթափանց մտքերն ու համեմատությունները, զարմանալի մետաֆորները հաճախ դուրս են այրծնում Նրա համեստության կաշկանդող զսպաշապկից, ցուց տալով, որ մենք գործ ունենք իր սեփական աշխարհն ունեցող իսկական տաղանդի հետ:

Յախշունցը նորարար է բառի իսկական իմաստով: Նրա նորարարությունը ցուցադրական չէ՝ տեսեք, թե ինչեր կարող եմ անել: Յախշունցի նորարարությունը օրգանական է, բխում է Նրա էությունից և հաճախ այնքան աննկատ է, որ դա քչերն են նկատում, իսկական հասկացողները միայն: Նոր է մտածողությունը, Նոր են պատկերները և հանգերը: Համո Սահյանը Ճիշտ էր ասում Նրան շատ է խանգարել հեռավոր, Աստծու կողմից մոռացված մի գյուղում ապրել՝ հեռու գրական շրջանակներից, ասուլիսներից և վերջապես՝ հրատարակելու հնարավորություններից: Նա այն մարդկան-

<sup>77</sup> Նոյն տեղում, Էջ 320:

<sup>78</sup> Նոյն տեղում, Էջ 326:

ցից չէր, որ նամակներով ոմբակոծեր խմբագրություններն ու հրատարակչությունները, բայց լավ է իմացել իր և իր ստեղծած գործերի արժեքը»<sup>79</sup>:

Ականավոր գրականագետ Սերգեյ Սարինյանը բարձր գնահատելով Մովսես Յախշունց մարդու և բանաստեղծի գործունեությունը, գրել է. «Գիտեմ չափազանցության սահմանը, բայց չեմ վարանում Օշականի արտահայտությամբ հավաստելու, որ Յախշունցը «իրավ բանաստեղծ է», և բանաստեղծ է ոչ թե ինքնուահ բանահյուսական հանգով, այլ հասկացության դասական ըմբռնմամբ»<sup>80</sup>:

Այո, յուրաքանչյուր Ճշմարիտ բանաստեղծ իր կյանքով ու ճակատագրով ոչ միայն մասնակիցն է դառնում իր ժողովրդին վիճակված ուրախությունների ու ցավերի, այլ լիովին կիսում է դրանք, ավելին, պայքարի մեջ է մտնում հանուն ազգի վաղվա, նրա պայծառ ապագայի: Եվ այս տեսանկյունից եթե մոտենալու լինենք, ապա պիտի խոստովանենք, որ արցախյան գոյամարտը մի նոր փորձաքար էր, որ ցույց տվեց, թե ազատագրական շարժման ազգային ավանդություններն ինչպես կարող են մարդկանց մղել նոր սխրանքների ու հերոսական գործերի՝ թե գրչով, թե գենքով:

\*\*\*

Արցախյան համազգային շարժումն առանձնացավ մեր պատմության մեջ մի կարևոր ու էական կողմով ևս, այն իր մեջ ընդգրկեց յուրաքանչյուր հայի՝ աշխարհի որ ծագում էլ նա լիներ, ամբողջ հայությանը, ժողովրդին: Եվ, անշուշտ, պայքարի հաջողության գրավականներից մեկն էլ հենց դա է: Անվանի բանաստեղծ Յուրի Սահակյանը, որը ու տխուր մանկությունից ի վեր, հաստատվել էր մայր Հա-

<sup>79</sup> Յախշունց Մ., Առեղծվածներ, Երևան, «Լաիրի» հրատարակչություն, 1998, էջ 8:

<sup>80</sup> Յախշունց Մ., Երկնամերձ Երկիր, Երևան, «Էղիտ Պրինտ» հրատարակչություն, 2007, էջ 315:

յաստանում: Սակայն նրա արյան բջիջներում, ինչպես ասում են, միշտ խոսում են ծննդավայր Արցախն ու արցախցին: Եվ օրինաչափ է, որ ազատագրական շարժման գաղափարախոսներից մեկն էլ, «Հն գլխից», դարձավ հայ մանկագրության մեջ արդեն անոն հանած պոետ Յուրի Սահակյանը: Այսպես, անցյալ դարի վաթսունականներին, երբ քաղաքական «Ճնհալ» էր սկսվել խորհրդային երկրում, ծնունդ առավ Յուրի Սահակյանի «Մի քննք, տղաներ» բանաստեղծությունը, որը սթափության ու պայքարի կոչ էր փաստորեն և իր տողատակերում ավելի շատ մտքեր էր պարունակում, քան բառերի մեջ: Զարթուցիչի առաքելություն էր ստանձնել այդ բանաստեղծությունը: Եվ ահա մի օր, ինչպես վկայում են ականատեսները, բանաստեղծ, երգահան Գուրգեն Գաբրիելյանը, երբ սկսվել էին առաջին հանրահավաքները, շարքերի առջևից ընթանում էր երգի վերածված այդ բանաստեղծությունը շուրթերին, իսկ ընկերները՝ միանալով մեկը-մեկին, ձայնակցում էին.

Հեքիաթում որոշ են Չարը և Բարին:  
 Հեքիաթի վերջում միշտ հաղթում է Բարին:  
 Հեքիաթը հավատ է պատմողի համար.  
 Չքներ, տղաներ, չքներ,  
 Կյանքը ձեր նոր ընթացք կունենա:  
 Չքներ, տղաներ, չքներ,  
 Ով քնեց՝ հազիվ թե արթնանա<sup>81</sup>:

Այստեղ բանաստեղծը դիմում է այլաբանության՝ բանաստեղծության քանամեկ տողի մեջ խտացնելով ամբողջ դարաշրջանի տագնապները, նա ներկայացնում է դաժան ժամանակի նկարագիրը՝ «Ով քնեց՝ հազիվ թե արթնանա»: Դա խորհրդային տիրող կարգերի ընդիանուր պատկերն է, ուր «քնելը» հավասարագոր է մահվան, որովհետև Չարն ամենուրեք է.

<sup>81</sup> Սահակյան Յ., Վեց գորից, Ստեփանակերտ, «Սոնա» հրատարակչություն, 2011, էջ 59:



Չարն ունի հազար ձև ու դեմք,  
Գեղեցիկ աչքեր, ժպիտներ, խոսքեր:

Ցուրի Սահակյանը կարողացել է բարձր վարպետությամբ կառուցել իր խոսքը, նոր, բոլորովին այլ իմաստով ու բովանդակությամբ բառավորել մտքերը: Եվ դա բանաստեղծի գրական բազմաթիվ հնարանքներից մեկն է: Արցախյան շարժման կարգախոսներից դարձան Յու. Սահակյանի «Դքնեք տղաներ, չքնեք, Ով քնեց՝ հազիվ թե արթևանա» տողերը՝ փիլիսոփայական ենթատեքստի խտացումներով, ասելիքի բազմապիսի շերտերով ու ժողովրդական պարզությամբ, քնարական նուրբ մեղեդայնությամբ:

Բանաստեղծ Ցուրի Սահակյանը, ինչպես յուրաքանչյուր հայ մարդ, իր կաշվի և հոգու վրա զգաց պատերազմի ամբողջ դաժանությունը, նրա բոլոր արհավիրքները: Եվ գրողի գրիչն արարեց նոր գործեր՝ ելած պատերազմի թեժ բովից:

Գեղարվեստական բարձր մակարդակով են գրված Ցուրի Սահակյանի «Ավարայրի դաշտում», «Պատերազմ», «Այրին», «Սումգայիթ», «Զինվորը», «Կորսված շիրիմներ», «Դավաճան է նա, ով հող է զիջում», «Մասիսին նայող հայը», «Նա մեծ էր, անշուշտ՝ ծնված ցպահանց» և այլ բանաստեղծություններ, որոնք տողերի ներքնատար շարժումներում կրում են պատերազմական գործողությունների ամբողջական նկարագիրը: Գրողի «Դավաճան է նա, ով հող է զիջում» բանաստեղծությունը, որը նվիրված է մարտնչող շահումյանցիներին, ուզմակոչի մի փայլուն օրինակ է.

Վեր կացեք, տղերք,  
Հենք կապեք, տղերք,  
Էսօր ուրիշ հոգս չկա մեզ համար:  
Թշնամու գլխին հուր թափեք, տղերք,  
Որ զորք է հանել մեր դեմ անհամար:

Երեկ Սասունն էր, Ձեյթունն էր, Վանն էր,  
Էսօր Արցախն է կրակների մեջ:

Թշնամին նոյնն է, նոյն Հայաստանն է,  
Նրա համար մեր տառապանքը՝ հեշ<sup>82</sup>:

Բանաստեղծը հորդորում է հայոց քաջերին՝ երդվել Մոավին, Թարթառին, «ընկերներին քաջ ու նահատակ» և փրկել հողը, «դարձնել անառիկ»: Ռազմաշուչ բանաստեղծությունների մեջ արդեն նույր մանկագրի, քնարերգուի խոսքը մարտական հնչեղության նոր որակներ է ձեռք բերում, ոգուրում, ոգեշնչում: Եվ պիտի ասել, որ այն հոգևոր աղերսներ ունի հայ մեծ բանաստեղծ Ավետիք Խսահակյանի «Ռազմակոչ»-ի հետ, ուր Վարպետն իր խոսքն ուղղում է ժողովրդին՝ փիլիսոփայական ընդհանրացումներն ամփոփելով կյանքի ու լուսի հաղթանակի ու հավերժության մեջ. դեպի ուազմի դաշտ, դեպի հերոսացում, դեպի բարձունքը մեծ Հաղթանակի:

Եյե՛յ, լսեցեք, Ճայն տվեք իրար,  
Ամենքդ եք ոտքի, մարդ քնած չկա<sup>83</sup>.  
Շուն հագեք-կապեք զենքեք ու զրահ,  
Գոտեպնդվեցեք ատելությամբ վառ,  
Գոտեպնդվեցեք անձնազոհ կամքով,  
Գոտեպնդվեցեք ահեղ վրեժով,  
Շառաչեք ուժգին, կաղնիներ հզոր,  
Խոլ վրնջացեք, նժույգներ խիզախ,  
Մրրիկի նման զարկեցեք շեփոր,  
Դեպի ուազմի դաշտ, դեպի հերոսացում,  
Դեպի ուազմի դաշտ՝ սուրբ դրոշի տակ,  
Դեպի բարձունքը մահի ու փառքի,  
Վանեցեք հեռու թշնամուն վայրագ,  
Մեր խրճիթներից, մեր հնձաններից,  
Մեր արտ ու կալից վանեցեք հեռու<sup>83</sup>:

<sup>82</sup> Նոյն տեղում, Էջ 146:

<sup>83</sup> Խսահակյան Ա. Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1987թ., Էջ 194:

Իրադարձությունները փոխում են նաև մոտեցումները, արժեհամակարգերը, ընկալումները նորանում են, մեկնությունները կառուցվում միանգամայն այլ ելակետերի վրա: Ողբերգական ժամանակը ծնում է իր մոտեցումը՝ ցանկացած երևույթի նկատմամբ: «...Հայ գրականության գրեթե բոլոր արժեքավոր գործերը,- գրում է գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանը,- ողբերգական իրավիճակների ու կեցության ծնունդ են... Հայ գրողը որդեգրեց ոչ թե պատերազմը, թեկուզ հաղթական, փառաբանելու, այլ պատերազմներին ոչ ասելու քաղաքականությունը, ոչ թե զինվոր-ազատամարտիկի հաղթանակները ներբողելու, այլ՝ նրա՝ հաղթանակից հետո իր երկրում որպես լուսանցքի մարդ ապրելը պատկերելու քաղաքականությունը: Ու հայ գրողը պատկերեց ոչ թե բերկրանքը, այլ ցավը, ոչ թե նվաճումը տարածքների, այլ կորուստը հազարավոր հրաշալի հայորդիների»<sup>84</sup>: Եվ ապա նշում է գրականագետը, թե Արցախյան ազատարամտն «այդտեսակ ընկալումների» ինչպիսի դրսնորումներ ունեցավ: Ասենք, որ այս տրամադրությունները, անշուշտ, մարդասիրական ընդհանուր հենքի վրա են մշտապես ի հայտ գալիս: Մարդասիրական նման ընկալումների ծնունդ է և Ցուրի Սահակյանի հետևյալ թանաստեղծությունը.

*Պատերազմներում*

*Ով էլ որ հաղթի*

*Պարտվողը միշտ էլ*

*Նոյն մարդկությունն է*<sup>85</sup>:

Բանաստեղծի փիլիսոփայությունն ունի երևույթի խորքերը բացելու միտում, որը և խնդիրը տեղափոխում է բարոյական սկզբունքների ոլորտ, այսինքն՝ այլ հարթություն: Նախ՝ առաջին հայացքից թվում է, թե Ցուրի Սահակյանը հակասում է ինքն իրեն՝ մեկ բանաս-

<sup>84</sup> Granish.org, www. imyerevan. com:

<sup>85</sup> Սահակյան Յ., Վեց գրից, Ստեփանակերտ, «Սոնա» իրատարակչություն, 2011, էջ 105:

տեղծության մեջ ռազմի կոչ է հնչեցնում, մյուսում գտնում է, որ ով էլ հաղթի պատերազմներում, պարտվողը մարդկությունն է: Բայց երբ երևույթը ներսից ենք դիտարկում, մանավանդ՝ բանաստեղծի ենթատեքստը բացելով, տեսնում ենք, որ, ինչպես ասում են, պարտություն չէ ամեն պարտություն, ոչ էլ հաղթանակ է ամեն հաղթանակ, հայտնվում ենք հարաբերականության դաշտում: Ցու Սահակյանը «Մի քներ, տղաներ» բանաստեղծության մեջ արդեն ամրագրել է, որ Չարի և Բարու կողմը հավերժական է, ուրեմն, Բարու հաղթանակը հենց մարդկության հաղթանակն է: Եվ մեզ մնում է հեղինակի «պարտություն» արտահայտությունը բարոյական և հոգեբանական եզրույթներում դիտել: Այսպես, ոուս բանաստեղծ Եվգենի Եվտուշենկոն «Մի չարաշահիր» բանաստեղծության մեջ գրում է.

*Ցած մի գլորվիր դեպի հաղթանակ,*

*Այլ վեր բարձրացիր դեպի... պարտություն:*<sup>86</sup>

Այստեղ «պարտություն» և «հաղթանակ» բառերը, անշուշտ, օգտագործված են այլաբերական իմաստով, արտահայտում են այլ բովանդակություն և հատկանիշ:

Որքան էլ մոտեցումները տարբեր լինեն, թե՛ Եվգ. Եվտուշենկոն, թե՛ Ցու Սահակյանն ընդունում են մեկ գեղագիտական ելակետ՝ եթե պատերազմը մղվում է հանուն ազատության, խաղաղության, չարի ոչչացման, ուրեմն, դա մարդասիրություն է, իսկ եթե կոյիվ են մղում տարածքներ ձեռք բերելու, ուրիշին ստրկացնելու համար, այս դեպքում արդեն, իրոք, պատերազմը մարդկության պարտությունն է:

Պոեզիայում բառերը շատ հաճախ «իրենց վրա են վերցնում» բառարանային բովանդակության հետ չխոսող այլ իմաստներ, դառնում են նշան ու խորհրդանիշ, երբեմն բառերը կարող են լինել անգամ «առարկա» կամ «իր», իրենցով, ինչպես երաժշտության մեջ,

<sup>86</sup> Եվտուշենկո Եվգ., Երրորդ հիշողություն, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1974, Էջ 22:

գործիքավորել ամբողջական ստեղծագործություններ: Դիմենք Ռ. Ուելլեքին և Օ. Ուորրենին: Ահա թե ինչ են գրում նրանք. «Գրողի արտահայտման միջոցը բառերն են: ...Բանաստեղծի համար բառը ոչ թե նախապես «ևշան» է, ոչ թե թափանցիկ խաղաքար, այլ՝ «սիմվոլ» (խորհրդանշ), որը արժեքավոր է թե ինքնին և թե վերարտադրելու իր կարողությամբ: Բառը կարող է նույնիսկ լինել «առարկա» կամ «իր», որը հաճելի է իր հնչողությամբ կամ տեսքով: Որոշ վիպասաններ (Սկոտ, Կուաթեր, Դրայգեր) կարող են բառերը գործածել որպես նշաններ, որի դեպքում նրանք շահում են այլ լեզվի թարգմանված լինելով կամ հիշվում են որպես միֆական կառուցվածք: Բանաստեղծները սովորաբար գործածում են բառերը «խորհրդանշութեն»:

Ցուրի Սահակյան՝ արցախյան ազատամարտի մասին գրած երգերը, շնչում են խորը մարդասիրությամբ: Այս պարագայում արդեն խիզախությունն ու սխրագործությունը, մաքառումը, անվեհերությունը՝ որպես գեղագիտական յուրօրինակ կատեգորիաներ, ի վերջո, համաձուլվում են ազատասիրության ու հումանիզմի գաղափարների մեջ:

\*\*\*

Ազերական իշխանություններն անցյալ դարի 30-40-ական թվականներին բանաստեղծներ Գ. Ներսիսյանին ու Թ. Հուրյանին ասպարեզից հանելով՝ առաջինին՝ Սիրիի, Երկրորդին՝ ուազմադաշտ «Ճանապարհելով», մի պահ թեթևացած էին զգում իրենց, մտածում էին, որ հայկական ոգին արցախցիների մեջ սպանելու գործում շոշափելի հաջողությունների են հասնում: Բայց նրանք չարաչար սխալվեցին, հայոց ոգին ժողովրդի մեջ է և այն հնարավոր չէ ոչնչացնել: Գրական դաշտում երևաց նոր անուն՝ Բոգդան Զանյան, որի ստեղծագործությունները ոչ միայն տարբերվում էին բոլորից գեղարվեստական բարձր մակարդակով, գրական մշակույթով ու ասելիքի առատ պաշարներով, այլև՝ ընդգծված հայրենասիրությամբ, ազգային ոգով,

## ՇԱՅ

հայ ժողովրդի ու Արցախ աշխարհի նկատմամբ՝ անսահման սիրով:

Շատ կոհվեր են անցել մեր հողով,  
Մեր ոսխներին կովով ենք հաղթել,  
Բայց մևացել է կոհվը մեր մեծ  
Մեզ բաժին հասած այս քարերի դեմ<sup>87</sup>:

Բոգդան Զանյանին չընկճեցին ո՞չ սիբիրյան աքսորը, ո՞չ ազերական գրաքննության ամենօրյա հետապնդումները, ո՞չ հալածակըները, ո՞չ անվտանգության մարմինների հետևողական «քայլերը»: Բանաստեղծը շարունակում էր իր ստեղծագործությունների միջոցով արցախցիների հոգում արթուն խահել ազատության համար պայքարի կայծը: Եվ երբ կայծերից հրդեհ բռնկվեց անցյալ դարի 60-ականներին ու 80-ականներին, Բոգդան Զանյանը իրադարձությունների կիզակետում էր իր գրչով, հայրենասիրական բոցաշոնչ գործերով: Գրողի քնարը առավել մարտաշոնչ դարձավ արցախյան ազատագրական պայքարի տարիներին: Հեռվից հեռու Զանյանն արձագանքում էր իր մեծ նախորդին՝ Գ. Ներսիսյանին, աչքի առաջ տեսնելով նրա «Ավերակներ»-ի մեջ պատկերված, բայց այս անգամ արդեն կրկնակի ավերված Շուշին: Նորից՝ Շուշի, նորից՝ ավերակներ: Նորից՝ հրդեհներ ու մոխիր («Շուշին ավերված տեսա»):

Եվ այրողն էլ նոյն թուրքն էր  
Բարբարոս ու ավերիչ,  
Լացող աչք էր երկինքը՝  
Արտասկում էր վերսից:  
Ավելացավ այդ օրից  
Մի նոր ցավ էլ հին ցավին,  
Որ խորացավ, մեծացավ,  
Դարձավ ցավը Արցախիս<sup>88</sup>:

<sup>87</sup> Զանյան Բ., Հեռացած հեռուներ, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» իրատարակչություն, 2007, էջ 9:

<sup>88</sup> Նոյն տեղում, էջ 41:

Եվ բոլոր ողբերգությունների պատճառը բանաստեղծն իրավացիորեն տեսնում էր Արցախի հիմնախնդրի ոչ արդարացի լուծման մեջ, Արցախն Ադրբեջանին բռնակցելու մեջ: Այլապես ինչու պիտի արծվի հզոր թևեր ունեցող Արցախը փակվի վանդակում: Ճշմարտության և արդարության երգիչ է Բոգդան Զանյանը: Եվ, իր իսկ խոստվանությամբ, երբ ոտք է դնում Արցախի հողի վրա, զորեղանում է ոչ միայն ինքը, այլ նաև հողը, որովհետև միամսնականության այս կարգի ըմբռնումն է, ըստ նրա, որ երկիր է պահում ու հայրենիք: Սա մեզ ծանոթ, իին գաղափարի նոր, ջանյանական մեկնություն է՝ ինքնատիպ ու նորովի: Խոսելով Զանյանի ստեղծագործության մասին՝ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանն ընդգծում է նրա դերակատարությունը հայրենի եզերքում գրական-մշակութային գործի ձևավորման ասպարեզում. «Առանձնահատուկ եղավ Բոգդան Զանյանի երևույթը գրական Արցախի կազմավորման գործում և ըստ ամենայնի հիշողության արժանի, քանզի պատմությունն այդ իր հետագիծն ունի գրող-մտավորականի կենսագրության ժամանակի արահետներում<sup>89</sup>»: Ավելի լավ չի ասվի, քանզի, իրոք, խիստ բնութագրական է Զանյանի համար «կենսագրության ժամանակ» ձևակերպումը, որն իր հակիմության մեջ փիլիսոփայական խորքով ընդգրկում է պատմական այն ուղին, որ անցել է բանաստեղծը՝ կիսելով ժողովրդի ցավն ու վիշտը՝ սկզբից մինչև վերջ, նրա դաժան ձակատագիրը: Զանյանը բնության յուրաքանչյուր երևույթի մեջ տեսնում է իր եզերքի հզորությունը, բնությունը, որի ծաղիկը, գետը, քարը, ծառը, ամենամեն ինչ դառնում են լինելության, հավերժության խորհրդանշիներ, որովհետև նախաստեղծ են ու իրենց մեջ կրում են մայր հողի ուժ ու ավյունով ներարկված աստվածային հավատը: Եվ պատահական չէ, որ արցախցի բանաստեղծներն ազգի անպարտելիությունը մշտապես կապում են հայրենի հողի, բնության երևույթների հետ: Զանյա-

<sup>89</sup> Նոյն տեղում, Էջ 3:



Նի երգած արցախյան Տրտու գետը «ահեղ է, ահոելի» և նրա զայրովայթը անչափելի է դառնում, երբ կողերը սեղմող ժայռերի դեմ է մարտնչում: Բնականաբար, խոսքն ասված է այլաբանորեն, այն վերաբերում է ազերական իշխանությունների գործողություններին, որոնք փորձում են գրկել մարդուն իր ազատություններից: Ի դեպ, նման վերաբերմունք ենք տեսնում նաև Հր. Բեգլարյանի «Ղարաբաղցին» բանաստեղծության մեջ, որտեղ նա դարձյալ բնության երևույթներին է դիմում՝ արցախցու հոգեբանությունն ու ապրումները ցույց տալու համար. «Խաղաղ է նա, համբերատար, բայց թե հոգվ դառնացրիր, Ամայի նման կը որոտա Ծանթ ու կրակ ղարաբաղցին»<sup>90</sup>: Ըստ Զանյանի՝ մարդը հզոր է, Աստվածատուր է հայրենի եզերքում հավերժելու նրա կամքն ու կարողությունը: Սա բանաստեղծի փիլիսոփայական ընդհանրացումն է, որը հիշեցնում է մեծ իմաստաեր Վ. Կանկեի բավականին հետաքրքիր դիտարկումը. «Մարդը ստեղծագործական սկզբի մարմնացումն է՝ լինի դա արվեստում, քաղաքակրթության, կրոնի, թե նոյնիսկ տեխնիկական հայտնաբերության մեջ: Աստծո նման մարդը հզոր է՝ գտնում է Ֆիշինոն: Եթե այդպես է, ապա մարդը կարող է հասնել բանականության և գեղեցկության բոլոր սահմաններին»<sup>91</sup>: Այդ սահմանը Զանյանի համար առաջին հերթին մարդու և հայրենիքի ազատությունն է, որի համար էլ նա պայքարում է:

\*\*\*

Արցախյան շարժման իրադարձություններն ուրույն արձագանք գտան բանաստեղծ Արտեմ Հարությունյանի ստեղծագործություններում: Այդ թեմայով իր առաջին գործերը նա տպագրել է «Արցախ»

<sup>90</sup> Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2000, էջ 13:

<sup>91</sup> Կանկե Վ., Փիլիսոփայություն, Երևան, «Զանգակ-97» հրատարակչություն, 2001, էջ 68:



հանդեսում, իսկ 1997-ին լույս է տեսնում Ա. Հարությունյանի «Նամակ Նոյին» ստվար ժողովածուն: Այստեղ բանաստեղծի տեսադաշտում ամբողջ մոլորակն է՝ հասարակական-քաղաքական տեղաշարժերով, որոնց առանցքում Արցախն է՝ ազատության մաքառումի մեջ, և միջազգային քաղաքականության սնամեջ բանակցություններն են.

*Բանակցել սկսեցին ահեղ դատաստանից  
մի քանի օր առաջ*

*Ես զգում եմ բոլորը  
ցանկանում են բանակցել հիմա...  
բանակցում են բոլորը...  
որ ձևացնում են, թե երգում են  
Օվսաննան ազատության,  
այնինչ, ստրկության պարկապուկն են փշում  
ականջիղ տակ...<sup>92</sup>*

Եվ ապա՝ «միլիոն զոհերը ցեղասպանության //դեռ տեղ չեն գտել ոչ մի տեղ// թափառում են, ձչում անապատում...»<sup>93</sup>: Սա սկիզբ է, շարունակություն և անորոշ ավարտ: Բնութագրելով Արտեմ Հարությունյանի «Նամակ Նոյին» գրքի գեղարվեստական արժեքը՝ գրականագետ Միրանուշ Մարգարյանը գրում է. «Երևանականից՝ տեսիլքից ու մարգարեականից խուժելով ամենակոնկրետ, ամենասովորական, չնչին ու նաև աննկատելի իրողության խորքերը, շնչելով նրանց սահմանները, բանաստեղծը համատիեզերական նշանակություն է վերագրում այն ամենին, ինչ եղելության, պատմության, գոյության ու գոյավորման տարածություններում մասնակից է դառնում կյանքի ամենասովորական ընթացքին՝ երևանակայականն օժտելով իրական գոյւներով, իրականության նենգավոր էությունը վարագութելով երևանականից ու երազանքից հյուսված վերապրումներով»<sup>94</sup>:

<sup>92</sup> Հարությունյան Ա., Նամակ Նոյին, Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 1997, էջ 15:

<sup>93</sup> Նոյն տեղում:

<sup>94</sup> Մարգարյան Ս., Գրական գուգահեռներ, Երևան, <ԳՄ հրատարակչություն, 2009, էջ 31:

«Նամակ Նոյին» գրքի մոտիվներով Ա. Հարությունյանը հրատարակեց «Հուդայի արձակուրդ» (2009թ.) գիրքը:

Արցախի անզիջում գոյապայքարը բանաստեղծ Արտեմ Հարությունյանը փորձում է տեսնել աշխարհաքաղաքական բարդ ու խրթին իրադարձությունների ընդհանուր համապատկերում, ուր ավելի հստակ է երևում փոքրիկ երկրամասի ազատության համար մարտնչող մարտկանց ներքին կրակը, նրանց մաքուր երազը, նվիրումը, արդարասիրությունը, հայրենի լեռների վրա խաղաղ ապրելու և ստեղծագործական աշխատանքով զբաղվելու մղումը:

Ես դեռ վերադառնում եմ Արցախ երկիրս,  
թափառում արյանս բաց երակներով,  
տեսնում հրդեհը հինավորց հողի,  
կտրուկ Ճիչը արթնացող քաղաքների,  
և թանձր սկիզբը միայնակ բաղեղի,  
որ ստվեր է դառնում օրեցօր  
և ծածկում սկիզբ ու ավարտ<sup>95</sup>:

Ինչպես Բ. Զանյանը, Հր. Բեգլարյանը, բանաստեղծ Ա. Հարությունյանը ևս իր հոգեկան աշխարհի ներկայացնելու համար դիմում է բնությանը, յուրովի մեկնում երևույթները: Ավելին, Ա. Հարությունյանը Արցախ է հասնում իր «արյան բաց երակներով»: Նրա հայացքը մթազնում է «բաղեղի ստվերը», որը փորձում է ծածկել «սկիզբ ու ավարտ»: Արտեմ Հարությունյանի մտածողությունը պատկերավոր է, նա գեղարվեստական խոսքը կառուցում է ոչ թե առարկայի արտաքին, այսպես ասած, մակերեսային նմանացումների կամ «հարաբերությունների», այլ երևույթների ներքին, տրամաբանական կապերի վրա՝ հուզականությունը «տեղափոխսելով» ասելիքի քաղաքական հրատապության ու կարևորության մեջ: Ահա թե ինչ է գրում բանաստեղծուի Վ. Թեքեյանը Արտեմ Հարությունյանի մասին. «Գրեթէ

<sup>95</sup> Հարությունյան Ա., Նամակ Նոյին, Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 1997, էջ 29:

Երեսուն տարուան վաստակ ունի իր քերթողութիւնը, ուր ի յայտ կու գայ աշխարհ մը՝ բազմածուի շունչով և խորութեամբ: Իր բառերու առաջին տարիներու պսպղանքը ոչ թէ կը տժգունի ուրիշ բանաստեղծներու նման, այլ հետզհետէ շառագոյն ջերմութիւն մը կը ստանայ: Առաջին երկերու՝ բնութեան դիմաց հրաշալուր ժամերէ ետք՝ կերկնուի մարդ մը որ կը հավատայ բանաստեղծութեան միջոցով պաշտպանել մարդն ու իր հողը, մարդկայնութիւնն ու աստուածութիւնները: Հետզհետէ քաղաքականացած, հզօրացած լեզուով կը խօսի, երգիծանքի և ողբերգութեան փոխնիփոխ երանգներով: Իրը պայքար է բարոյական քայքայման, բռնակալութեան, շահագործումի, կեղծիքի և ամենայն չարիքի գործադրութեան դէմ: Պայքար՝ մտքի բռնկման այլատարր բոցերով: Կառչած իր արիւնոտ արմատներուն, միաժամանակ՝ բազմակիր մշակոյթներու հետ է, Ճէյմս Ճոյս ու Ուիթմըն, Կինզպըրկ և Ռեմայո»<sup>96</sup>:

Գրողի «Նամակ Նոյին» գիրքը նրա ստեղծագործական ձանապարհին նշանավորում է գեղարվեստական մտքի նոր թոփչք ու որակ: Ժողովածուի բանաստեղծություններում երևում է տիսուր ու ծանր ժամանակի ամբողջական պատկերը: Այս առումով հատկանշական է Ա. Հարությունյանի «Ստեփանակերտում» բանաստեղծությունը, որն ունի նաև «Գրադ» հրթիոն հատվածից հետո» ենթավերնագիրը: Տեսարանները, որն ներկայանում են մեզ այս բանաստեղծության մեջ, ցնցող են, և «ժամանակն իր վերքոտ լույսն է մեկնում»:

*Այստեղ, Ստեփանակերտում,  
ավերված մետաքսի գործարանի շուրջ  
ոմբակոծումից հետո շերամի հազարավոր  
բոժոժներ կան սփոված՝  
փոքրիկ, դեղին թիթեռներ, ասես Աստծոն  
աչքից ընկած արցունքներ,*

<sup>96</sup> Նոյն տեղում, էջ 339:



որ սառել, կառչել են ցուրտ հողին:  
Քիչ այն կողմ, տարօրինակ ջղաճումներով,  
խաղում են անձեռք երեխաներ.  
Նրանց ձայներն են միայն մանկակալներ:

Եվ «դրսի ու ներսի աշխարհները», որ դարձել են համաձուլվածք, չեն կորցնում փրկության հավատը, քանի որ բանաստեղծը ելքը տեսնում է «լուսի մի շերտի» մեջ, որը դոդում է ավերված դարպասի առաջ, իսկ դարպասի «ունքին թառել են բարբարոսությանն անտեղյակ կեռասն ու բալը, թռչունն ու հույսը»... Եվ հենց այդ հույսն է, որ դառնում է «մաքառող Արցախի» գաղտնի կրակը, լուսի դոմինանտը: Եվ որքան էլ «արյունը հեղեղի մի ջարդից մյուսն ընկած ժամանակահատվածը», հոսի «Դեր Զորից Շուշի, Խնուսից՝ Բիթլիս՝ Սումգայիթ»<sup>98</sup>, ի վերջո, հաղթանակը հայ զինվորի գենքին, ոգուն ու պայքարին է պատկանում որպես տառապանքի պսակ:

Ա. Հարությունյանի պոեզիայի առանձնահատկությունների մասին իր դիտարկումներում տեսաբան Ալ. Թոփչյանը գրում է. «Արտեմ Հարությունյանի պոեզիայում ինձ միշտ զարմացրել է մաքուր բանաստեղծության և կոշտ, նյութականացած առօրյայի համատեղումն ու ներթափանցումը: Մնալով երկնայինի ոլորտներում, նա կարողանում է համարձակ դիպչել և իր՝ զուտ բանաստեղծի շիտակ ու անսքող հայացքով նայել առօրյայի և ժամանակի յուրաքանչյուր հրաշեկ գալարումին, XX դարի բոլորության ծեսերին: Նա կարողանում է համատեղել Բարին ու Գեղեցիկը և ազատ երևակայության սյուրուեալ թոփչը չի խանգարում նրան տեսնել երկրի վրա ամեն մի հրեշավոր անարդարություն, լինի այն Ղարաբաղում, թե Վիետնամում: Սա տեսիլքի պոեզիա է»<sup>99</sup>:

<sup>97</sup> Նոյն տեղում, Էջ 316:

<sup>98</sup> Նոյն տեղում, Էջ 30:

<sup>99</sup> Նոյն տեղում, Էջ 5:



Ա. Հարությունյանի պոետական ասքերում ակնհայտ է բանավեճը արդի հայ պոեզիայի ինքնաբավ ոչի հանդեպ: Ինչ արժե բանաստեղծությունը, եթե այն շրջանցում է ազգի ու մարդկության պայքարն ու ձգտումը դեպի սոցիալական ու քաղաքական ազատություն: Նա նորոգում է պոեզիայի դասական ուղղությանը յուրահատուկ հրապարակախոսական ու քաղաքական պաթոսը, գաղափարի շեշտը բանաստեղծության պոետիկայում:

Ցեղասպան ժամանականերում  
կլինի՝ արդյոք բանաստեղծություն՝  
կլինի՝

և կլինի ցեղասպան ժամանակների մասին...<sup>100</sup>

«Հայաստան. Նորից անկախացող Երկիր» պոեմում Արտեմ Հարությունյանը, որպես նորոգության հատկանիշ, հիշատակում է նաև պոեզիայի վերածնունդը.

Հայաստան, քո քրքրված պոեզիան  
կարիք ունի նոր կարկատանի,  
մինչև որ առողջ Մարմինս հայտնվի,  
Ճեռքին՝ Չարենցի պոեզիայի  
բնական շարունակությունը...  
Եվ Նարեկացու ոսկեղենիկ աղոթքը՝  
մարմնատես<sup>101</sup>:

Արտեմ Հարությունյանի պոեզիան մենախոսության և մեկնաբանող Երկխոսության համակարգ է, իրերի և Երևոյթների անձնականացված մեկնությամբ, ուր զարմանք է պատճառում Երևակայության ու միստիկ տեսիլային պատկերավորությունը: Այս սահմանների վրա է նա նշմարում դարերի անցումն անկման դարաշրջանից դեպի

100 Հարությունյան Ա., «Եռուստապոեմներ «Ծուշի» և «Բաբելոն» հյուրանոցների աշտարակից», Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2010, էջ 30:

101 Հարությունյան Ա., «Ծուշայի արձակուրդը», Երևան, «ԳՄ հրատարակչություն», 2003, էջ 179:

«ապագա աշխարհ, //ուր անձանաշ ենք ու մաքուր»: Հետևաբար,  
«հավաքիր իրերդ վերջնական՝ //մյուս դար անցնելու համար»:

Բանաստեղծն անձնապես վերապրել է 20-րդ դարի աղետների ու  
դարի չարիքների պատմությունը՝ ցեղասպանություն, ֆաշիզմ, պա-  
տերազմներ, ահաբեկչության արհավիրքներ և այլն: Իսկ «չարու-  
թյան իմպերիայում» ստալինյան բռնություններ, մտավոր անկում,  
երկաթե վարագույր, Հիտլերի, Ստալինի, Աթաթօլքի սադրանքով՝  
«առ այսօր արյունաքամ լինող Հայաստան ու Ղարաբաղ»:

*Թուրքիայի բնակչության 90 տոկոսը համարում է  
հային թիվ մեկ թշնամի, մոռանալով 2 միլիոն  
սպանված հայերի դատարկ կացարաններն ու  
Այգին...<sup>102</sup>*

2010 թվականին լուս է տեսնում Արտեմ Հարությունյանի նոր գիր-  
քը՝ «Հեռուստապոեմներ» խորագրով՝ լրացված գրողի մասին գրա-  
խոսությունների, հոդվածների և ասույթների գրեթե ամբողջական  
հավելվածով: Ժողովածուի առանցքում դարձյալ Արցախն է՝ ազգա-  
յին ճակատագրի ողբերգական անակնկալներով: «Հեռուստապոեմ-  
ներ» վերնագիրը ածանցված է «Ծուշի» և «Բարելոն» հյուրանոցնե-  
րի աշտարակից» բաժնով:

*Ծուշին թուրքերը վառեցին  
չորս կողմից,  
կրակը շարժվում էր հանց դաշույն,  
բաշիբողուկ թուրքը չալմայի մեջ է խցկում  
սպանված մարմիններից պոկած ոսկին,  
ջրհորները լեցուն էին  
լուս-մանուկների դիերով...<sup>103</sup>*

<sup>102</sup> Նոյն տեղում, էջ 179:

<sup>103</sup> Հարությունյան Ա., Հեռուստապոեմներ «Ծուշի» և «Բարելոն» հյուրանոցների աշտա-  
րակից, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2010, էջ 43:

Այսպես էր երեկ, իսկ այժմ «պարետային ժամ է Ստեփանակերտում», դժգույն ներկված հրասայլերը կարգ են սահմանում ըստ «պետության տառի», իսկ բանտամերձ պատերին՝ դաշոյնի հետքեր են, և Թուրքիայից լսվող նամազի քաղաքական աղոթքը, որ վերստին հուջում է, որ Թալեաթի և Քեմալի շարբաթի գավաթը լեցուն է «ցեղասպանված ազգերի չմակարդված արյունով»<sup>104</sup>:

«Ես հայ եմ, Արցախից»<sup>105</sup> ասում է բանաստեղծը: Եվ ակամա, խոսքի պոետական գրգիռը փոխվում է գրոտեսկի՝ «քաղաքական պոռնկության» հետքերը տանելով դեպի 20-րդ դարի ոճրագործ «առաջնորդների» անհեռատեսությունը: Վկադիմիր Իյիչը՝ կիսաթաթար դմբո, կիսով չափ հրեա, որ «համաշխարհային հեղափոխության համար» վագոններով ոսկի ուղարկեց Ստամբուլ՝ աղքատ Հայաստանի աճուրդով. «Իսկ Հայաստանում Ստալինի բեղավոր դեմքի ներքո // 16 ակադեմիկոս սոցուեալիզմին են հանձնում // իրենց միզուկը»<sup>106</sup>:

«Բաբելոն հյուրանոցի տեսիլքը» պոեմում քաղաքային պեյզաժի և մարդկային ժխտի տեսանելի ու անտես մահվան պատկերներ է ուրվագծում օրերի մղձավանքը, հանգչող օրվա հրամեշտում պոետը կարծես տեսնում է «ծառերի թափառումը դեպի հետ, դեպի գնացքի շարժման միջուկը, ուր ամեն ինչ ոչինչ է, նաև՝ մաքուր մաքառման վերսկում, որտեղ էություններ կան արթնացնող»:

«Արցախի Ճիշը» մենախոսությունում բանաստեղծի տխուր մտորումներն են՝ ո՞ր է տանում «բազալտ այս լաստը // ժողովրդին // Թուրքիայի կոմինց // խոշտանգված-թալանված այս աղքատ երկիրը», ինչպես է վերջանում օրը Ստեփանակերտում, երբ ամենուրեք տիրություն է բուն դրել և զոհվածի նկարը խունացել է պատին: Ու վերստին հեգնանքը՝ հասցեագրված լիրիկներին,

<sup>104</sup> Նոյն տեղում, էջ 47:

<sup>105</sup> Նոյն տեղում, էջ 40:

<sup>106</sup> Նոյն տեղում, էջ 145:

որոնց մոտ ամեն ինչ դառնում է աղոթք,  
անգամ Ճիշը մսավաճառի,  
մինչև միստիկան սպառվի,  
աստվածահայությունը չքվի,  
հետո դառնում են քաղքենի  
և նորից գորշն է պաշտելի:<sup>107</sup>

\*\*\*

Բանաստեղծ Ռոբերտ Եսայանն արցախյան շարժմանը արձագանքել է և գրչով, և զենքով: Արցախյան կյանքի դառնաշունչ օրերին ազատամարտիկ բանաստեղծը լուս է ընծայում «Հենակետեր» (1989), «Ծարաված հետքեր» (1991), «Տարածություն և հոգի» (1992) գրքերը, որոնցում զետեղված են արցախյան ազգային-ազատագրական պայքարից ծնված քերթվածքներ: Իր պոետական ինքնատիպ ձայնով Ռ.Եսայանը արժանանում է ոչ միայն ընթերցողների, այլև գրականագետների, անվանի գրողների բարձր գնահատականներին՝ Հայաստանում և Նրա սահմաններից դուրս: Դեռևս 1989թ. բանաստեղծ Պ.Կոշելը Ռ. Եսայանի բանաստեղծությունների մասին գրել է. «Լեռնային Ղարաբաղից Ռոբերտ Եսայանի պոեզիան արժանի է սևեռուն ուշադրության: Այն Նրա հասակակիցների կողմից իսկույն թարգմանվեց ռուսերեն և հրատարակելու երաշխավորվեց մուկովյան ամսագրերում: Հայ մշակույթն իրավունք ունի հպարտանալու իր զավակով, պոեզիայի երկնակամարում հայտնվել է մի նոր տաղանդ»<sup>108</sup>.

Իր մի նամակում Ռոբերտ Եսայանի տաղանդը բարձր է գնահատել նաև անվանի բանաստեղծ Գևորգ Էմինը. «Եթե մեկն ուզենա թվարկել մեր այսօրվա տաղանդավոր բանաստեղծներին, ապա դու

<sup>107</sup> Նոյն տեղում, էջ 220:

<sup>108</sup> Եսայան Ռ., Ասուպների եղերք, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» հրատարակություն, 2008, էջ 476:

անկասկած պիտի լինես նրանց շարքում: Ի սրտե շնորհավորում եմ քեզ և սպասում քո նոր գրքերին»<sup>109</sup>: Բանաստեղծն իր հետագա ժողովածուներում հոգևոր նոր տարածքներ գրավեց, և այն, ինչը նկատել-տեսել են ավագ գործընկերները, նոր զարգացում և խորք ձեռք բերեց նրա ստեղծագործություններում: Ռ. Եսայանը, նկատենք, իր պոեզիայում մեծ տեղ է հատկացրել հայրենասիրական երգերին: Նրա բանաստեղծական տոռը հյուսված է հայրենի եզերքի ու ժողովրդի Ճակատագրի խոհափիլխոփայական ընկալումների տրամաբանությամբ:

Ռ. Եսայանի պոեզիան թեմատիկ լայն ընդգրկումներ է ձեռք բերում, գրողը դիմում է հայ ժողովրդի պատմության գրեթե բոլոր դժվարին անցքերին ու իրադարձություններին, գեղարվեստորեն մարմնավորում իր ապրումներն ու զգացումները՝ ստեղծելով բավականին ինքնատիպ ու բովանդակալից գործեր: Բանաստեղծն իր երգերի մեջ ներկայանում է որպես դարերի Ճանապարհորդ, որը պատմության քառուղիներում տեսել է հազար արհավիրք, հազար ցավ ու կսկիծ, ենթարկվել է բազմաթիվ հալածանքների, կտտանքների, արյուն տվել, բայց առասպելական հերոսի նման դիմացել է ու հասել մեր օրերին: Ահա թե ինչու նա ամեն ինչի մասին խոսում է ականատեսի ու վկայի դիրքերից.

Ես իմ արյան մեջ կծել եմ բոլոր Ճամփաները այն,  
Որոնք կրում են քո հողաշխարհից մի թել կամ մի ջիղ,  
Եվ որոնց շնչից լուր տաճարվում է տիեզերքը համայն:

Բիբերս հայոց ավերակների մոխիրներն են թաց,  
Հորիզոնների տեսողությունն է նրանց փոխանցվել...  
Ճակատագրը... աստղեր է քամում իմ կոպերի տակ...<sup>110</sup>

<sup>109</sup> Նոյն տեղում:

<sup>110</sup> Նոյն տեղում, էջ 97:

Ռ. Եսայանի բառն ապրված է, այն ցավի արտահայտություն է և հույսի ներշնչում: Եվ պատահական չէ, որ բանաստեղծի ստեղծագործություններում, անկախ թեմատիկ ընգրկումներից ու արձարձվող խնդիրներից, միշտ էլ առկա է լավատեսական մոտեցումը, և ա կարողանում է ոչ միայն տեսնել լույսի ելքը, այլև ընթերցողին ուղղորդել դեպի այստեղ՝ հայացքի մեջ մշտապես պահելով հորիզոնների անմար արևը, իհարկե, որքան էլ մոռայլ է լինում օրը: Գրողի ստեղծագործական աշխարհին այսպես է ներկայացնում գրականագետ Ս. Գրիգորյանը. «Ազգային մակարդակի վրայ Ռոպէրթ Եսայան կը գծէ ընթացքը Հայ ժողովուրդի պատմութեան, անդրադառնալով Եղեռնին, ապա Արցախեան Պահանջատիրութեան, որոնք ներքին, անյայտ միջոցներով բանաստեղծական պատկեր ու զգացողութիւն կը փոխանցեն քերթողին եւ տարերային ուժով կը լեցնեն անոր Էութիւնը, որ ե՛ մարդկային, ե՛ ազգային մակարդակներու վրայ կը մտորի Ճակատագրի, Անհոնի, յակտենութեան, արդարութեան ու այն բոլոր արժեքներուն մասին, որոնք կեանքին կու տան իմաստ ու հայ ազգին՝ յարատեելու կամք»<sup>111</sup>:

Գրողի խոսքի պատկերավորությունը և անմիջականությունը յուրովի է դիտարկում բանաստեղծ, գրականագետ Սարգիս Կիրակոսյանը. «Ռոբերտ Եսայեանի բանաստեղծութիւններն իրենց լոյսի պէս պարզ, բայց միաժամանակ գրալիչ անմիջականութեամբ, պատկերավոր ուրոյն լեզվամտածողութեամբ և հայոց ազգային ոգին սեփական կենսափորձով հնչեցնելու վաւերական գօրութեամբ կաճին քերթողաշար առ քերթողաշար՝ բանաստեղծական հասուն բերքով ծանրաբեն...

Բանաստեղծ է Ռոբերտ Եսայեան՝ բառին ամբողջական առումով: Ազնուական ու բախտաւոր ծնունդ մը, որուն ներքին աշխարհին լարերէն կշուրաւորուած տաղերը կապրին և ընթերցողը կապրեց-

<sup>111</sup> Նոյն տեղում, էջ 477:



Նեն «ուրախութիւնից ու տիսրութիւնից դուրս, բառերից և ձայներից դուրս... որովհետեւ խրուած են հողի երազանքի մէջ» և հարստացած՝ «ոգու ալիշով լուսաւոր»:<sup>112</sup>

Ռ. Եսայանի պրեզիդան, մանավանդ՝ ազատամարտի մասին գրված նրա գործերը, ունեն մի առանձնահատկություն ևս, նրանք ոչ թե ազատագրական պայքարի մասին են, այլ պարզապես ստեղծվել են ուազմի դաշտում: Ասել է թե՝ Ռ. Եսայանը ազատամարտիկ բանաստեղծ է, երկրի զինվոր, որ կովի առաջին օրից մինչև նրա հաղթական ավարտը եղել է խրամատներում, զենքը ձեռքին: Եվ նրա մարտաշունչ երգերի մեջ ներկայացվում է զինվորի հոգեբանությունը, որի երազանքը «լեռան աղեղ» է դառնում հորիզոնի վրա, քարերին անգամ հույսի հրդեհներ են բռնկվում («Զինվորի երգը»), արյուն է թափվում ամենուեք և «արյունի հետ՝ փետուր»:

Աստված իմ, ոտքիս տակ Հանապարի չէ, այլ՝ թուր,  
Հորիզոնը՝ վահան, որ նախնիս է թողել՝  
Իբրև ժառանգություն: Խավարի մեջ հիմա  
Ես իմ քայլն եմ խրում իրեւ սեպի նման<sup>113</sup>:

Բանաստեղծն խոսքի մեջ երբեք չի նկարագրում պատերազմական տեսարաններ, իրավիճակները նա ներկայացնում է պահերի, հոգեկան ապրումների մեջ՝ կատարելով մեծ ընդհանրացումներ: Պատկերավորությունն ու մտքի ներքին դիմամիզմը հատուկ են Ռոբերտ Եսայանի մտածողությանը: Նա բավականին քիչ բառանյութի մեջ կարողանում է տեղադրել իր ասելիքը՝ որքան էլ այն լինի անընդգրկելի: «Հորիզոնը վահան» դարձնելով՝ բանաստեղծը կապակցության մեջ ազգային նկարագիր է ներկայացնում փաստորեն, որովհետև հորիզոնից ծագող արևի վրա է միշտ մարդու հույսը, որովհետև հորիզոնն իր մեջ ամփոփում է և՛ երազանքներ, և՛

<sup>112</sup> «Ազգակ», 8 մայիսի, 2004թ., Բեյրութ:

<sup>113</sup> Նոյն տեղում, էջ 279:

ձգտում ու նպատակ, և՝ ապագա: Ընդամենը երկու բառով Ռ. Եսայանը ստեղծում է մի պատկեր, որն իր մեջ պարունակում է թե՛ ժամանակ ու տարածություն, թե՛ պատմություն և թե փրկության լուս: Երազն է, որ ուժ է տալիս զինվորին, և եթե չդարձներ նա հորիզոնը վահան, սուրն այնքան հաղթական չէր լինի: Սա Ռոբերտ Եսայանի պոեզիայի լեզուն է, նրա մտածողական համակարգի առանձնահիշերից մեկը, «Երևոյթի վերարտադրության եղանակը»<sup>114</sup> (Արիստոտել):

Մեր ազատամարտի մասին գրված երգերի մեջ, ապրումների ու զգացումների անխառն անմիջականության առումով, գեղարվեստական նոր որակի արտահայտություն են Ռոբերտ Եսայանի այն գործերը, որոնք գրվել են խրամատներում զոհված զինակիցների հիշատակին, թարմ ու անանցողիկ տպավորությունների տակ, այն դաժան ու ծանր պահերին, երբ «Երկնքից երկիր ձգվող այունը... մոխիր» է: Գրողի աչքի առաջ բարձրանում է զոհվածների անոնները կրող խաչքար-շիրմաքարերի անտառ: Եվ խաչքարերից յուրաքանչյուրը մի ձակատագիր է, որից «լուս է ըմպում գալիքը»: Բանաստեղծի ընդհանրացումը այստեղ խորն է, զինվորի արյան մեջ նա տեսնում է հառնող վաղը, ցավի մեջ՝ նոր ծնվողների ձիչ, որովհետև դրա մեջ է շարունակությունը ուսկե օրենքի ու խորհուրդը: Սա ժողովրդական այն իմաստությունն է, որին հասու չի կարող լինել ոստիք.

Եվ չի անցել մտքով ոստիներիդ քոչվոր,  
Որ իմ ցավը մի նոր գոյություն է պեղում,  
Որ իմ ամեն երակ իր կտրված տեղում  
Սպիանում է նոր ծնվողների ձիչով...<sup>115</sup>

Բանաստեղծն այլաբանորեն է ներկայացնում նաև շրջափակումը («Շրջափակում»), որը ոչ միայն չի կարողանում նեղել-ընկճել ազա-

<sup>114</sup> Արիստոտել, Պոետիկա, Երևան, Հայպետհրատ, 1955, Էջ 147:

<sup>115</sup> Նոյն տեղում, Էջ 281:

տության համար պայքարող զինվորին, այլև նրա մեջ նոր ներուժ ու լուսի ելքեր է հայտնաբերում: Եվ «արյան սև ծիծաղի» ալիքների վրա օրորվում է Սերը, օրորվում է «մահվան գետում», բայց չի մեռնում, նորից ափ է դուրս գալիս՝ իր մեջ պահելով գալիքի սերմը ոսկեղեն: Մեկ ուրիշ բանաստեղծության մեջ («Հայրենիք») Ռ. Եսայանը վահան է դարձնում իր համար այս անգամ հայացքը, որի մեջ խոսքը կայծակի պես բոց է արձակում, իսկ բանաստեղծի բառը երազի է փոխվում և «դրոշ է տնկում... անհաս գագաթին»:

Ոորերտ Եսայանի «Հիշատակի խաչքար», «Ոստին ետ քաշվեց» բանաստեղծությունները կոնկրետ հասցե ունեն, և վիրապ են զրոված զինակիցներ Անդրեյ Սարգսյանի, Ալեքսանդր Գասպարյանի և Կարեն Մնացականյանի հիշատակին, մարդիկ, որոնք բանաստեղծի հետ կովել են նոյն խրամատում և ընկել են հերոսաբար: Ցուրտ օրերին զինակիցները ոչ միայն մի կտոր հացն էին կիսում, այլ նաև փոխարինում էին իրենց տաք վերևաշապիկները՝ մեկը-մեկի մասին եղբայրաբար հոգ տանելով: Նովելային փոքրիկ դրվագ է այս բանաստեղծությունում «տեղադրել» Ռ. Եսայանը. Երբ ընկերն ընկավ, իր հագին նրա նվիրած վերևաշապիկն էր, որը պիտի այրի ընկերոջ հոգին, քանի դեռ նա վրեժ չի առել նենգ թշնամուց.

Ոգիներն են բարձրանում վերելակով հայացքի,  
Օրորվում եմ պարսի մեջ ծանոթ ու ցերմ Ճայների.-  
Ու՞մ շնչի մեջ եմ ապրում. ու՞մ շորերն են իմ հագին  
Եվ ու՞մ աչքն է ինձ նայում շիրմատնից հուշերի:  
Հերոսական ոգու մեջ ծիածանվում է քամին,  
Կամքի երկաթն է խրվում ակունքի մեջ կասկածի,  
Պատերազմ է... վերքերից պիտի բեկորը հանվի,  
Հանգստանա ու մարվի... գալարանքը կսկիծի:

Ծարժումներս երազի սանդուղքներն են ընդգծում  
Օդի մեջ այս, ուր վաղուց չի եղել տոն ծիծաղի,



Ուր ավլողը մայթերից կարծես պատանքն է պոկում  
Մեռյալների, որ այստեղ իր կոկիծները թաղի:

Որպես խաչքար, որպես հույս, հիշատակի հանգրվան,  
Ձեր անուններն են հառնում երազանքից մեր վաղվա:<sup>116</sup>

Պակաս հուզիչ չէ զոհված ազատամարտիկ Կարեն Մնացականյանի նվիրված բանաստեղծությունը, ուր ետ քաշված ոսոխի թողած ժանապարհը «օձի շապիկ է» հիշեցնում, ուր խոցված է լույսը, մութը՝ խոշտանգված: Եվ ազատամարտիկ-բանաստեղծն իր զոհված զինակցի «բախտին է գամում իր բախտը», որ նրա «երազը... հավերժ հուրիրա»:

Գեղարվեստական մի ուրույն ու ամբողջական պատում է Ռ. Եսայանի «Թոշունը և ես» գործը, որը, ի տարբերություն գրողի կերտած մյուս ստեղծագործություններին, իր մեջ սյուժետային որոշակի տարրեր է պարունակում խոսքը դարձնելով հուզիչ, միտքը՝ հատու: Մարտի շատ կարճատև դադարին թոշունը ծառի չյուղից նայում է վախեցած՝ մեկ զինվորի աչքերին, մեկ ծառի վրա գտնվող իր բնին: Թվում է, թոշունը խաղաղ կյանքի մի երազուն ակնթարթ է նվիրում զինվորին, բայց տագնապը նկատելի է: Ի վերջո, թոշունը հավատ է տեսնում զինվորի հայացքում:

Հետո իր թևերից վանդակներ է թափում  
Ծառի չյուղերն ի վար՝ «Դու... ավերող չես»,  
Եվ ոտքերի խաղով տարածքները չափում  
Իր գոյության: Խաղաղ երկնքի ծվեններ,  
Որ շարժվում են բնում՝ մերկ ձագեր ինչպես...<sup>117</sup>

<sup>116</sup> Նոյն տեղում, էջ 284:

<sup>117</sup> Նոյն տեղում, էջ 295:

Խաղաղության և ազատության համար պայքարող գինվորի մարդասիրությունը՝ որպես լույսի ու հավատի գաղափար, ամենատարբեր կիրառումներով է մարմնավորվում բանաստեղծի պոեզիայում, որը և նրա գեղարվեստական խոսքին հաղորդում է անմիջականություն, դարձնում այն ավելի հնչեղ ու համոզիչ:

Ո. Եսայանը, դառնալով հայրենի երկրի պաշտպանն ու գինվորը, նրան ձուում է այսպիսի ութևյակ.

Ազգահավաք կանչ ես ու շունչ աստվածային,  
Թո կանչի մեջ Հայկն է իր աղեղը լարում,  
Ցորեն հասկի հուրն է ոգու կատարներին,-  
Պողպատի և հողի սրբազնագույն այրում...  
Արցախ, դու ես սերը և խորհուրդը լուսի,  
Թո մեջ արարում է ապրում որպես Աստված,  
Դու ծաղկունքի օրհան, դու շուղերով հուսի  
Փայփայում ես սուրն ու անդաստանդ փրկված<sup>118</sup>:

Բարձր գնահատելով Ռոբերտ Եսայանի ստեղծագործությունները՝ գրականագետ Վարդան Հակոբյանը գրել է. «Հետաքրքիր երևույթ է Ռոբերտ Եսայանի պոեզիան: Եվ անկրկնելի է ինքը՝ Ռոբերտը, որպես մարդ, անհատականություն: Հինավորց հայկական հողն ազատեց՝ որպես հրետանու գինվոր, իսկ հոգևոր աշխարհում «տարածքներ գրավեց» իր բանաստեղծությամբ: Ասել է թե՝ Աստծոն դրած նշան ունի Ճակատին»<sup>119</sup>:

\*\*\*

Արցախյան ազատամարտի պոեզիան անհամեմատ լայն ընդգրկում ունի: Գրեթե բոլոր բանաստեղծներն իրենց խոսքն ասացին համաժողովրդական շարժման մասին: Շարժմանը յուրովի արձագանքեցին Զոյա Հովհաննիսյանը, Արկադի Թովմասյանը, Ժաննա

<sup>118</sup> Նոյն տեղում, էջ 132:

<sup>119</sup> Նոյն տեղում, էջ 476:

Բեգլարյանը, Հրանտ Ալեքսանյանը, Նորեկ Գասպարյանը, Դավիթ Միքայելյանը, Կոմիտաս Հակոբյանը, Անահիտ Քոչարյանը և ուրիշներ: Կրկնությունից խուսափելու համար հանձն չենք առնում անդրադառնալ բոլորին, թերևս նպատակահարմար գտնելով սերնդի պոեզիան ներկայացնել Նվարդ Ավագյանի ստեղծագործությամբ:

Ազատամարտի արցախյան պոեզիայում իրենց արտացոլումն են գտել բանաստեղծական «զենքի» բոլոր տեսակները՝ Եւ բոցաշունչ կոչային հրապարակագրությունը, Եւ գինվորական սրտի հոգեարար քնարերգությունը, Եւ մեծակտավ քնարական ու էպիկական պոեմները: Այդ պոեզիան թիշ բան չի արել, որպեսզի ահեղ իրադարձություններում մարդկանց մեջ արթնացնի պատասխանատվություն, ըմբռնումն այն բանի, որ յուրաքանչյուրից է կախված հայրենիքի Ճակատագիրը:

Ազատարամարտն արտացոլող ստեղծագործություններում բանաստեղծները նոր հայացքով են նայում հարազատ եզերքին ու ժողովրդին: Հայրենիքի կերպարը նրանց ռազմաշունչ գործերում ձեռք է բերում կոնկրետություն: Դրա ցայտուն օրինակն է Նվարդ Ավագյանի «Արցախ» բանաստեղծությունը.

Ուրեմն, սուն է, մեր Ոգեղենիկ,  
թե հող ես միայն, լեռ, գետ ու հովիտ,  
Դու քաղցր ես անգամ հորից ու մորից,  
շարունակվելու մեր բանաձեւն ես,  
մեր արյան հասցեն՝  
յուրաքանչյուրիս ծննդյան օրից<sup>120</sup>.

Բանաստեղծի ձայնը ժամանակի ձայնն է, նրա դինամիկան է, նրա կիրքը: Ավագյանի բանաստեղծությունները խորն են ու պարզ: Թվում է, թե չմտածելով գրական տեխնիկայի մասին, նա հասարակ

<sup>120</sup> Ավագյան Ն., Ծակը լրիս, Երևան, «Վաշագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2004, էջ 56:

միջոցներով հասնում է գլխավորին՝ «իրերի էության»<sup>121</sup> արտահայտմանն ու ասելիքի անմիջականությանը:

Արցախյան ազգային-ազատագրական շարժման բռնաձնչումն Աղրբեջանի կողմից, որ սկզբում ընթանում էր ահաբեկչությամբ՝ քարակովի ու երկաթե ձողերի շրջանակում, գնալով ավելի դաժան բնույթ էր ձեռք բերում եւ, ի վերջո, արտահայտվեց ազրեսորի սանձազերծած ժամանակակից պատերազմով։ Ժամանակի շունչ ու հրամայականի տակ փոխվեց եւ ազատամարտի արցախյան պոեզիայի, այդ թվում եւ Նվարդ Ավագյանի ստեղծագործությունների ներքին երակը։

Շատ հաճախ խախտելով բանաստեղծության կանոնները՝ հեղինակը «խփում» է ավելի համարձակ ու էմոցիոնալ բառերով, որոնք աչքի են ընկնում ներքին լարվածությամբ։ Դա արդեն սոսկ պոեզիա չէ, այլ՝ եւ հրապարակախոսություն, եւ միաժամանակ բարձրաձայնվող խորհրդածություն։

Թշնամին կարծում էր, թե շրջափակումը կկոտրի արցախցու ոգին, որ նրան կընկճեն քաղցն ու ցուրտը, շարքից հանված, ավերված ջրմուղ ցանցերը, բայց ազերիներին սպասում էր մեծ հիասթափություն։ Ստեփանակերտը դիմացավ ու դիմակայեց՝ ի հեջուկս բոլոր մահերի՝ եւ ուղիղ, եւ փոխարերական իմաստով։ Պատերազմի առաջին օրից մինչ վերջինը Ստեփանակերտում էր եւ բանաստեղծուի Նվարդ Ավագյանը, ու տեղի ունեցող ողբերգությունը նրան «օգնում» էր անսխալ գտնելու ստույգ ելքն ու բառը։

Հազարավոր մայրերի ողբերգությունը դարձել էր պոեզիայի մոտիվներից մեկը, մայրեր, որոնք «կրակի գիծ» էին ուղարկում «սրտի շահած-պահած հատիկներին»՝ թաքցնելով տագնապն ու արցունքները, հոգեկան արգելք դնելով թուլության վրա։ Այդ զգացումը, հավանաբար, եռակի չափով էր վերապրում բանաստեղծուին,

<sup>121</sup> Տե՛ս <., Գեղարվեստի փիլիսոփայությունը, Երևան, Պետհրատ., 1936թ., էջ 31։

քանզի Ճակատ էր Ճամփել Եղած-Եղած՝ երեք զավակին: Արդյո՞ք նաեւ այդ պատճառով չէ, որ Նրա լավագույն ստեղծագործությունների գաղափարը կայանում է ուժի արթնացման, համառության ու հաստատակամության, հավատի եւ մարտնչելու պատրաստակամության, մինչ ի մահ կանգնելու եւ հաղթելու. Եւ, ի վերջո՞ հավատարմության մեջ, ոչ թե խոսքով, այլ գործով: Որովհետեւ մահն անգամ ընդունակ չէ կոտրելու ազատամարտի ժողովրդական ոգին:

Նվարդ Ավագյանի ազատամարտի մասին գրված ստեղծագործությունների մեծ մասն ունի որոշակի այումետային գիծ, Նրանում եթե չի ներկայացվում կոնկրետ պատմություն, ապա անպայման առկա է դրվագ, որն իր մեջ ֆաբուլա է կրում: Այդպիսի բանաստեղծություններում ընթերցողը զգում-տեսնում է իրադարձությունների ընկալումը հեղինակի կողմից եւ Նրա ներաշխարհը: Ապրումի անմիշականությունը բանաստեղծուին ստեղծագործության գեղարվեստական միջոցներից է, ինչի վառ վկայությունն են Նրա խոհական չափածո «գրուցները»: Անկեղծություն եւ Նվիրվածություն, անձնապես վերապրած, ոչ հնարովի զգացմունքներ, էժան պաթոսի բացակայություն՝ այս ամենը կազմում են Ն. Ավագյանի ազատամարտն արտացոլող ստեղծագործությունների հենքը:

*Պատերազմը զինվորի հետ գալիս է սոուն  
Եվ նման է հատված ձեռքի,  
Որը թեև չկա վաղուց,  
Բայց թվում է, թե ցավում է...<sup>122</sup>*

Բանաստեղծուին ստեղծագործության հիմնական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ շատ դեպքերում ազատամարտի հերոսի դերում հանդես է գալիս ինքը՝ բանաստեղծուին, որպես զինվորյալ՝ նա խոսում, գրում է իր անունից: Նրա շատ գործերում մենք հանդիպում ենք ընթերցողի հետ բաց մենախոսության,

<sup>122</sup> Ավագյան Ն., Ծանր լուս, Երևան, «Վաշագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2004, էջ 64:



Երբեմն էլ երկխոսության՝ ինքն իր հետ:

Բանաստեղծուիին ձգտում է խուսափել խոսքի մեջ փակագծերը մինչև վերջ բացելուց, որը և նրա խոհը դարձնում է վարակիչ, ասելիքը՝ համոզիչ: Կարողանալ բառի մեջ՝ խոսքի համարժեք չափով, պահպանել նաև հեղինակային ներքին լուսության ձայնը, մի հանգամանք, որ մեծապես նպաստում է ասելիքի հավաստիությանը, մանավանդ, երբ նկարագրվում են պատերազմական լարված գործողություններ: Ի դեպ, գեղարվեստական այս հնարանքը համաշխարհային գրականության մեջ բազմաթիվ կիրառումներ ունի, որոնցից մեկն էլ Ֆ. Պետրարկայի «Կանցոն» հանրաճանաչ բանաստեղծությունն է, ուր Կեսարի կերպարը ներկայացվում է բացառիկ վարպետությամբ.

Իսկ Կեսարն հապա՞... Որ կովի դաշտում

Ողջ խոտը ցողեց արյունով բռոտր,

Թշնամու արյամք՝ մեր սրով խոցված<sup>123</sup>:

Ավելորդ չենք համարում նշել, որ «Կանցոն» («Ով իմ Իտալիա, վերքերիդ համար») քերթվածի մասին իր տեսակետն է հայտնել նաև ականավոր գրող ու գեղագետ Ու.Էկոն՝ վերօնշյալ տողերի ներքին բազմակետը մատնանշելով որպես լուսություն և «ոճական բառադարձման կամ Ճարտասանական ձևի նմուշ»<sup>124</sup>:

\*\*\*

Ազատամարտի պոեզիան միմյանց է կապում «կրակի գծում» գտնվողներին եւ նրանց, ում միտքն ու հոգին զենքով մարտնչողների հետ են: Կապը տան հետ, համոզվածությունը, որ պաշտպանում են քո ընտանիքը, որ քեզ այնտեղ սպասում են, կովելու եւ հաղթանակին հավատալու ուժ էր տալիս: Կապն այդ արիության ու համոզ-

<sup>123</sup> Պետրարկա Ֆ., Սոլետներ և կանցոններ, Երևան, «Հայպետիրատ» հրատարակչություն, 1964, էջ 193:


<sup>124</sup> Էկո Ու., Գրառումներ «Վարդի անվան» Էջերին, Երևան, «Անտառես» հրատարակչություն, 2014թ., էջ 69:



վածության թթվածին էր եւ կամուրջ, որն օգնում է տարածություն-ներն ու հոգիները մեկ ամբողջական ջանքում միավորելուն: Բանաս-տեղծների համար հայրենիքը եւ մարդն է, եւ հարազատ հողը, եւ հայկական մշակույթը, եւ, անպայման, այն լեզուն, որը սուր ու վա-հան է ժողովրդի համար՝ ազգի բախտորոշ օրերին:

Պատերազմի տարիներին պոեզիան դարձավ, այսպես ասած, ամենագործուն ու հանրաճանաչ ժանրը: Հարց է ծագում ինչո՞ւ: Որովհետեւ հնարավոր չէ գտնել մեկ ուրիշ ուժ, որը կարողանար մարդկանց հոգիների վրա ունեցած ազդեցությամբ, նրանց մեկ գա-դափարի շուրջ համախմբելու զորությամբ համեմատվել նրա հետ: Հիշենք, թե Գ. Գաբրիելյանի «Ղարաբաղի հորովելը» կամ Հ. Բեգ-լարյանի «Ղարաբաղցին» ինչպես էին՝ երգ ու երաժշտության վե-րածված, ինչում մարտնչող զինվորների շուրթերին, հերոսական գրոհի մղում զորաբանակին հայոց: Իսկ Վ. Հակոբյանի հեղինակած «Արցախի հիմնը» հպարտության, սխրանքի ու վեհության զգացու-մով էր լցոնում կովող զինվորների սրտերը: Այո, պոեզիան մարտն-չում է:

Պատերազմական լարված իրավիճակները ոչ միայն գրական սյուժեներ, այլև ոչ ու մտածողություն են հուշում, որոնք ստեղծում են գեղարվեստական խոսքի անմիջականություն, միտքն ու պատկե-րը դարձնում տպավորիչ:



---

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Ազգահայտիչ կունք ես ու շունչ ասպրածային  
Քո կանչի մեջ Հայկն է իր աղեղը լարում,  
Ցորեն հասակի հովը է ոգու կապարենին,-  
Պողպատի եւ հողի սրբազնագո՞ւն այրում...  
Արցախ, դո՞ւ ես սերը եւ խորհուրդը լուսի,  
Քո մեջ արարումն է ասրում որպես Աստված,  
դու ծաղկունքի օրսան, դու շուղերով հովսի  
Փայտայո՞ւմ ես սուրը ու անդասպանդ փրկիած:

ՈՈԲԵՐՏ ԵՍԱՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

Արցախի ազատագրական պայքարը սկզբնապես ձևավորվեց համազգային շարժման նշանաբանով: Արցախն առաջինն էր Խորհրդային Միության ազգային միավորներից, որ արձագանքեց կոմունիստական կուսակցության քաղաքական նոր ուղեգծին՝ «պերեստրոյկային», որը երկրի ներսում չլուծված ազգային հարցերը բարձրացնելու հնարավորություն էր տալիս: Եվ արցախիներն առաջ քաշեցին Ադրբեյչանի տիրապետության գաղութային ենթակայությունից ազատագրվելու, մայր Հայաստանին միավորվելու խնդիրը: Կրեմլը սակայն չընդառաջեց: Սա դարձավ հայոց ազատագրական պայքարի գաղափարական ուղղությունը: Սկիզբ առավ համաժողովրդական ցուցերի մի աննախադեպ գործընթաց, և հարյուր հազարավոր ցուցարարներ Ազատության իրապարակում վանկարկում էին «Միացում-Միացում» կոչը: Շարժումը Հայաստանում դեկավարում էր «Արցախ» կոմիտեն: Այս հիմքի վրա ձևավորվեց Հայոց համազգային շարժում (<<Ծ կուսակցությունը, որն առաջադրեց գաղափարական իր սկզբունքներն ազգի ապագա զարգացման ուղիների վերաբերյալ: Այդ սկզբունքների շարքում առանձնանում էր նաև հայոց պատմության վերագնահատման հարցը: Համազգային շարժման առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանի ասույթը, թե «պատմությունը կեղծ գիտություն է», ընկալվեց որպես հայոց պատմության ժխտման դրույթ, որը և ընթացք տվեց այն բացասելու մտայնության: Պատմության խնդիրը բարդանում էր նաև այն հանգամանքով, որ առանձնանում էր նաև ազգային-քաղաքական ու դիվանագիտական նոր կողմնորոշումներով, ինչպես՝ «մշտական թշնամիներ ու մշտական բարեկամներ չեն լինում», «երրորդ ուժի բացառման օրենքը» և այլն:

Պատմության վերաբերյալ <<Ծ-ի ժխտական հայացըներն ավելի ուղղագիծ արտահայտություն գտան Կտրիճ Սարդարյանի «Պատմություն և իրականություն», «Անցման շրջանի օրինաչափությունները և հայ քաղաքական միտքը», Ռաֆայել Իշխանյանի «Երրորդ ուժի բա-

ցառման օրենքը» աշխատություններում: Սարդարյանի կարծիքով հայոց պատմությանը մշտապես բնորոշ է եղել հիշողության կորուստը, սխալների մոլորությունը, շեղումն ու անհեռատեսությունը: Դրա հիմնական պատճառն այն է, որ մենք ներփակված ենք եղել ազգային ավանդույթների պահպանողական կացությամբ և հեռու ենք մնացել քաղաքացիական հասարակության ձևավորման ընթացքից: Եվ, ըստ նրա, եթե այսօր Հայաստանում կա արմատական բարեփոխումների խնդիր, ապա դա առաջին հերթին վերաբերում է քաղաքական միտքն ազգային գերությունից դուրս բերելուն: Ապա նա նշում է, որ մեր պատմությունը լցոնել ենք սրբություններով, որոնք որևէ արժեք չեն ներկայացնում և մեր պատությունները սրբագործել «բարոյական հաղթանակների» պատրանքով: Այսպիսով, ըստ Սարդարյանի, մեր պատմությունը ոչ մի դրական գործողություն չունի: Ավելին, նա միանգամայն անհեռատեսական է համարում հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման խնդիրը: «Զարմանալի է, չէ՞,- գրում է նա,- երկու տարի Ռուսաստանը ասում է՝ ձեռք քաշեք ինձնից, ես հարց լուծողը չեմ, մենք համառորեն պնդում ենք, որ վաղ թե ուշ լուծելու է»<sup>1</sup>:

Հայոց պատմությունը նույն չափանիշներով է որակում նաև Ռաֆայել Իշխանյանը: Իհարկե, նա խիստ կարևորում է հայոց լեզվի պահպանությունը, որը շատ էական է, ինչպես նաև սեփական ուժերին ապավինելու խնդիրը: Հիրավի, ազգապահպանության գործում դրանք վճռորոշ դերակատարություն ունեն: Սա անառարկելի չշմարտություն է: Սակայն առանձին դեպքերում բանախոսը, մեր կարծիքով, վրիպում է թույլ տալիս իր վերջնական հետևողությունների մեջ: Ավելին, նա իր մոտեցումներում հասնում է ծայրահեղության և երբեմն երևույթների դիտարկմանը մոտենում է միակողմանիորեն, մակերեսային «փաստարկումներով»՝ Հայկական հարցը ըննե-

<sup>1</sup> Սարդարյան Կ., Պատմություն և իրականություն, Երևան, «Պարբերական» իրատարակություն, 1991, էջ 142:

լով առանց սոցիալական արմատների, հիմնապատճառների ու հետևանքների ամբողջականությունը նկատի առնելու: Այսպես, նա զարգացնելով «Երրորդ ուժի բացառման» իր տեսությունը (առաջին հերթին՝ ոչ ռուսամետ տրամադրությունները), քննադատության սլաքն ակամա ուղղում է մեր բոլոր այն հայրենասեր գործիչների դեմ, որոնց շնորհիվ փրկվել է Հայաստանը վերջնական ոչնչացումից: Այսպես, Ռ. Իշխանյանը ոչ միայն ավելորդ է համարում աշխարհի մեծ տերությունների կողմից հայոց եղեռնի ձանաշման համար պայքարը, այլև ոչ մի վտանգ չի տեսնում «պանխսլամիզմի և պանթուրիզմի» գաղափարախոսության մեջ՝ դրանք համարելով ընդամենը «խրտվիլակներ». «Հիմա Էլ մեջ են գցել պանխսլամիզմի և պանթուրիզմի խրտվիլակները, որպեսզի մենք՝ հայերս, ավելի ամուր կապվենք Ռուսաստանի սային: Երրորդ ուժին ապավինելու ասպետները մեզ ասում են՝ Եթե Ռուսաստանը չինի, պանխսլամիզմը և պանթուրիզմը մեզ կուտեն: Հիմա ես չեմ ուզում ընդարձակվել և խոսել պանխսլամիզմի և պանթուրիզմի իրական էության շուրջը, ցույց տալ, որ դրանցով հայերին անընդհատ վախեցնող մեր գործիչներն առնվազը տգետ են»<sup>2</sup>:

Ռաֆայել Իշխանյանը դժբախտություն է համարում մեր ժողովրդի համար այն, որ պատմության դժվարին ու դառը անցումներում հայ գրողը ստիպված է եղել, իր արվեստին զուգահեռ, հաճախ Էլ՝ նրա զոհողության հաշվին, ծավալել նաև հասարակական և քաղաքական գործունեություն՝ Խ. Աքովյանից միջև Շաֆֆի, Ռ. Պատկանյան, Հովի. Թումանյան ու Շիրվանզարե, Գ. Արծրունի, մինչև Դաշտենց, Գալշոյան, Սահյան, Խանզադյան ու Կապուտիկյան... Ահավասիկ. «... մեր պատմական մի դժբախտությունն էլ եղել է այն, որ մեր քաղաքական դեկավարներից շատերը եղել են և են գրողներ»<sup>3</sup>:

<sup>2</sup> Իշխանյան Ռ., Երրորդ ուժի բացառման օրենքը, Երևան, «Ազատ խոսք» հրատարակություն, 1991, էջ 61:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 50:

Կարծում ենք, այստեղ մեկնաբանություններն ավելորդ են, մեր ազգային-ազատագրական շարժման ու պատերազմների պատմությունը միանգամայն այլ ձշմարտություն է հուշում մեզ: Դրա լավագույն առհավատչյան եղավ նաև արցախյան ազատամարտը, որը և վկայում է Ռ. Իշխանյանի առաջադրած դրույթների մեջ առկա ոչ ձիշտ մոտեցումների մասին: Երրորդ ուժի բացառումը ձիշտ լինել չի կարող. բնականարար, այլ հարց է, իհարկե, երբ քո ուժն ու ապավենը դու ես, երբ հույսդ դնում ես քեզ վրա, ինչպես դա եղավ արցախյան ազատամարտում: Իսկ երրորդ ուժը, ուզես թե չուզես, միշտ կա և, ըստ իր շահի, որ կարող է համընկնել քոնին, կարող է խիստ նպաստավոր դեր խաղալ: Այո, անընդունելի և կործանարար է երրորդ ուժի վրա հենվելն ու նրան ապավինելը, բայց միթե ձիշտ է այն բացարձակապես անտեսելը, բացառելը:

Անբարենպաստ արտահայտվելով մեր ժողովրդի պատմության մեջ տեղի ունեցած քաղաքական կարևոր իրադարձությունների ժամանակ իրենց դերակատարությունն ունեցած գրողների մասին, միաժամանակ Ռ. Իշխանյանը հիշեցնում է մեծն Մ. Մաշտոցի մասին. «Մեր ամենահսկական, ամենամեծ անկանխակալը եղել է Մեսրոպ Մաշտոցը, որը մեր պետականության անկման պահին մեզ գիր ու գրականություն, հայկական դպրոց տվեց, ու դրանցով մեր ազգը՝ քաղաքական անկանխությունը կորցրած, բարոյապես անկախ ու ինքնուրույն մնաց շատ դարեր»<sup>4</sup>: Անշուշտ, Մաշտոցը մեր հայրենախոս ու հայրենագիր գրական դասակի առաջին բանաստեղծն էր: Ստացվում է, որ բանախոսը նաև հակասում է ինքն իրեն:

Արցախահայ միտքը որևէ արձագանք չունեցավ պատմության ժխտման հանդեպ, մանավանդ, որ ՀՀ-ի տեսաբանների դրույթներում որոշակի է դրվում հակառուսական միտումը՝ հօգուտ թուրքական կողմնորոշման: Արցախի ազատագրական պայքարն ուղղված

<sup>4</sup> Նոյն տեղում, էջ 70:

Էր թուրքական, որ նոյնն է՝ աղբեջանական բռնության դեմ:

Այս հանգամանքներում արցախյան ազատագրական շարժումը գաղափարական լիցք էր ստանում նաև պատմության դասերից, Խամսայի մելիքությունների փորձից, Վաչագան թագավորի հայրենասիրական գործունեությունից և այլն: Այս իմաստով արցախյան ազատագրական շարժման պատմության դասերը դառնում են Արցախի պոեզիայի գլխավոր մոտիվներից մեկը:

\*\*\*

Հրաչյա Բեգլարյանի ստեղծագործությունը ամբողջապես ներհյուսված է Արցախի պատմության ու բանահյուսության ավանդներով: Այս հատկանիշը առավել նպատակային բնույթ ստացավ ազգային ազատագրական շարժման ընթացքում: Դա որոշ իմաստով ելակետային դրույթ դարձավ Ներկա իրադարձությունները դիտելու պատմական տրամաբանության, նրա ծագումն ու հեռանկարը գնահատելու պատմության դասերով: Խոսելով գեղարվեստական երկերի պատմականության մասին՝ Ս. Սարինյանը ժամանակին նկատել է. «Պատմականությունը գեղագիտական կատեգորիա է, որ գոյանում է կառուցվածքային բոլոր տարրերի, ձևի և բովանդակության բաղադրիչների ներքին միասնությունից: Դա բանաստեղծության ներքին տրամաբանությունն է, սիմվոլ-գաղափարի ծագումը, ընթացքն ու վերջավորությունը, որ գոյանում է պատկերավոր միավորների բազմակի կապերից ու պատճառական ներհյուսումներից, ժամանակի ու տարածության հարաբերումներից: Այս տեսակետից պատմականությունը ստանձնում է գեղագիտական կարևոր ֆունկցիա և մեծապես պայմանավորում բանաստեղծության գեղագիտական-փիլիսոփայական տարրությունը»<sup>5</sup>:

Իր «Արցախ-Նամե» երկերի չորրորդ հատորում Հր. Բեգլարյանը

<sup>5</sup> Սարինյան Ս., Գեղարվեստական գրականության պատմականությունը, Երևան, «Սովորական գրող» հրատարակչություն, 1970, էջ 178:

պատմության դրվագները համակարգել է «Խոսում են դարերը, վկայում են քարերը» Նշանաբանով, ուր պատմությունը ներկայացնում է ոչ միայն որպես ժամանակագրություն, այլև որպես հուշ և վկայություն: «Այս գիրքը՝ առաջարանում գրում է հեղինակը՝ ունի արցախյան պատմության խճանկարային բնույթ... Կարդալով գիրքը, դու կտեսնես, որ քո առաջ բացվում է մի նոր աշխարհ, իր հին ու նոր պատմությամբ»: Եվ ապա. «... այն կարծիքին եմ, որ Ղարաբաղում ապրող ամեն մի մտավորական, ինչ մասնագիտություն էլ ունենա, պարտավոր է լավ Ճանաչել իր երկրամասը, իր շրջապատը, խորհել այն մասին, թե ովքեր և երբ են ստեղծել այդ բերդերը, վանքերը, ժայռափոր ջրանցքները, քարափների մեջ ընկած գետերի վրա թառած կամուրջները, գետնաթաղ մատուռները, հրաշագործ խաչքարերը»<sup>6</sup>:

Պատմության փիլիսոփայությամբ է հագեցած նաև Հր. Բեգլարյանի բանաստեղծությունը: Նրա բառապաշտում ինչում են «մեր նախնիների» իրաշակերտ կոթողների՝ Գանձասարի, Ամարասի, Դադիվանքի, Տիգրանակերտի, Ղազանչեցոցի անունները՝ արդի ազատագրական պայքարի՝ («Արցախն Ազարայր») համապատկերում: Եվ այսպես. «Ախ, այս խաչքար քարերի // Խաչված, խաչքար քարերի // Մտքի քանքար քարերի // Հոգու բարբառ քարերի // Համար ենք կովել»:

Գրականության մեջ ընդունված միջոց է՝ գրողները ներկայի իրադարձությունները ներկայացնելու համար դիմում են պատմական այս կամ այն փաստին, նրա վրա կառուցում իրենց խոսքն ու ասելիքը: Այդպես վարվեց և Հր. Բեգլարյանը, սակայն՝ փոքր-ինչ այլ հարթության վրա, գեղարվեստական ուրույն միջոցներով: Խոսքը գրողի «Խաչենաբերդ» պոեմի մասին է: Մի ստեղծագործություն, որը Հր. Բեգլարյանի պոեզիայում թե՛ իր արծարծած խնդիրներով,

<sup>6</sup> Բեգլարյան Հր., Արցախ-Նամե, հատոր IV, Ստեփանակերտ, ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2005, Էջ 4:

թե՛ գեղարվեստական առանձնահատկություններով, ստեղծագործական նոր փուլ է նշանավորում:

Պոեմի սյուժեն բանահյուսական հիմք ունի, ուր հիշատակվում է նաև Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմություն»-ը: Պոեմը սկսվում է աշխարհակործան Չինգիզ խանի հաղթական երթով.

*Առած բանակն ի՝ հեղեղի նման,  
Գյուղեր, քաղաքներ ավերեց, անցավ  
Եվ ուր ուր դրեց, մեռավ ամեն բան,  
Անցավ խորշակն այդ լեռներ ու դաշտեր,  
Եկավ, դեմ առավ Արցախի դռան...<sup>7</sup>*

Բեգլարյանը դիմում է պատմական անախրոնիզմի, անտեսելով Արցախում Չինգիզ խանի արշավանքի չգոյության փաստը, Ենթիմաստը հանգեցնելով հենց անանցանելիության առեղծվածին: Կարծես արհամարհելով պաշարման սպանալիքը՝ Արցախում կանգուն են Խաչենաբերդն ու Գանձասարը... Այս երկու ամրոցներն Արցախի անառիկությունն են խորիրդանշում ու մարդկանց հավատը: Եվ ամենսին էլ պատահական չէ, որ Նվաճողների արշավանքները կասեցնելու համար շինարար ժողովուրդը միշտ պաշտպանության միջոց է ընտրում իր հավատի տները՝ հույսը դնելով ձեռքի ուժի և ամենակարող Աստծո վրա: Թվում է՝ բանաստեղծը փորձում է մեծ բռնակալի Նվաճողական կիրքը մեղմացնել, երբ նրա ունկին հասու է դարձնում հողի մշակի հոգու մրմունջները՝ հորովելների միջոցով, երբ նրա աչքերի առաջ պարզում է մաշտոցյան գրերով խաչքարերը և ամրակուռ բերդերը, լեռնալանջերին գրքերի էջերի պես բացված ցորենի ու գարու արտերը, պատանիների մրցախաղերն ու ձիարշավները.

<sup>7</sup> Բեգլարյան Հր., Քնար Ղարաբաղի, Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2004, էջ 319:



Զգում էր այնտեղ սուրբ առը հոդի  
Եվ հորովել էր ծորում հին կարգով,  
Եվ մայրանում էր վազը խաղողի  
Գարևան գուրգուրող արևի Ներքո:  
Ղողանջում էին զանգերը վանքի  
Եվ երգում էին սաղմոս-շարական,  
Եվ սերտում էին վարքը Մաշտոցի  
Հշխան, շինական...<sup>8</sup>

Բայց Չինգիզ խանի վայրի մոլուցքը նրան տանում է դեպի արյուն ու ավեր: Նրան չեն կարողանում զսպել անգամ մոնղոլական աստվածները, որոնց օգնության է դիմում խանը՝ կանգնելով հայոց աննվաճ երկրի, նրա բերդերի առաջ:

Տեղի է ունենում Ճակատամարտը, բախվում են Վահանները և, հայ քաջորդիների հաղթական զարկերից բնաջնջվում է Չինգիզ խանի բանակը, և հայոց հպարտ որդիք անհաղթ են մնում լեռների պես կանգուն:

Աշխարհակալի ցասումը նրան հասցնում է ցնորվածության և նա իր հոգին խաղաղելու համար արյուն է խմում և, դառնում «հարբած բորենի»: Եվ այդ պահին հայտնում են խանին, թե այցի է եկել «մի ծեր» գյուղացի՝ գուցե և հայտնելու խորհրդավոր մի գաղտնիք: Խանին հուզող հարցերը շատ են.

Ի՞նչ ազգ ու ցեղի, ի՞նչ դավանանքի  
Մարդիկ եք, որ այս լեռներին տիրել,  
Բերդեր եք շինել ու դեռ չեք ուզում  
Աշխարհակալիս փառքը Ճանաչել.<sup>9</sup>

Գյուղացու պատասխանը սպառիչ է հնչում, նա իր ազգի անպարտելիությունը տեսնում է խաղաղ աշխատանքի և հայրենի երկրին

<sup>8</sup> Նոյն տեղում:

<sup>9</sup> Նոյն տեղում, էջ 323:

Նվիրվելու մեջ: Հեղինակը գյուղացու կերպարի մեջ ամփոփել է ամբողջ Արցախը, նրա խիզախ ժողովրդի ոգին, որը պատմության մեջ ոչ մի անգամ չի հարձակվել այլ երկրի վրա, չի ավերել, չի քանդել, չի ստրկացրել: Ավելին, նա կամուշներ է կառուցել՝ հարևան երկրներն իրար կապելու համար, ցորեն է ցանել, հերկել է հողը, ծառ ու ծաղիկ է տնկել, շենացրել երկիր-հայրենին, գրերով զարդարել հանդերի քարերն անգամ: Եվ հայոց հողի անպարտելիությունը հենց դրա մեջ է տեսնում բանաստեղծը.

*Սովոր չեն մերոնք կովի, ավարի,  
Բայց գիտեն պատվով պահել տուն ու տեղ,  
Ապրում ենք սիրով ու մարդավարի:  
Եվ մեզ չի գերել ոչ մի նվաճող:<sup>10</sup>*

Սյուժեի հոգեբանական անցումները գաղափարական ակնհայտ միտում ունեն: Ծերունին խանին հուշում է անլուր փորձություններով անցած հայոց հաղթական ուղին՝ Ալեքսանդր Մակեդոնացու, Կեսարի, Լուկովլոսի, Քսենոֆոնի պատմական դասերով և շեշտում հարցը, թե իր արշավների ձանապարհին ինչու չի «սերտել դասերը այս հին»:

Այրող խոսքերից կարկամած խանն առաջարկում է, որ հայոց Սմբատ իշխանը խոնարհվի իր սրի առաջ և թանկարժեք նվերներ ընծայի աշխարհակալ խանին. «Թե՛ ոչ, կիհանեմ մեծ ծովը քո դեմ // Զրի տակ կառնեմ Արցախը եղեմ»:

Եվ հայոց իշխանը էպոսի հանգով տալիս է խրոխտ պատասխան.

*Կուզես հենց վաղը հանդիպենք մարտում  
Եվ դու մեր թրի գինը իմացիր,  
Բայց նաև գիտցիր.  
Մենք՝ զինվոր հաղթող, դուք՝ կովում պարտվող,*

<sup>10</sup> Նոյն տեղում, էջ 324:

Քո մարմին՝ թիրախ, մեր նետեր՝ խոցող,  
 Քո զորքը մժեղ, մենք՝ քամի ահեղ,  
 Քո զորքը՝ արոտ, մենք՝ կարկուտ, որոտ,  
 Դուք՝ վայրի երե, մենք՝ որսորդ աևլոեայ...  
 Թող որ, ուրեմն, լինի կոիվ, մարտ,  
 Ով քաջ է՝ կովի ու մնա անպարտ...<sup>11</sup>

Բախվում են բանակները՝ լեգիոն առ լեգիոն և Խաչենի դրան պատնեշի առաջ փոշիանում են խանի ցնործները, պարտված աշխարհակալը գերի է թողնում «Թանգրի աստծու // Ոսկե ձուլածոն»: Եվ հայոց իշխանի հաղթությամբ ցնծում է Արցախը, հաղթության լուրը տանելով մինչև Տարոն ու Չեյթուն, մինչև Սասնա տուն և «դեռ գնում է դարերի միջով Սմբատ իշխանի երթը հաղթական»: Այս հաղթական երթի շարունակության վրա են պոեմում հենված արցախյան դասերը: Այսպիսով, ազգային ազատագրական շարժումն իմաստավորվում է պատմության դասերով, որ, < Բեգլարյանի ընկալմամբ, դառնում է գործունեության ուղեցույց «Եկեք լսենք դարերի ձայնը, քարերի ձայնը և ապրենք այնպես, որ հազարամյակներ հետո էլ կարողանանք օգնել ապրողներին մեր թողած բարի գործերով: Եկեք համառորեն տեր կանգնենք մեր նախնիների թողած հոգնոր և նյութական հարուստ ժառանգությանը»:<sup>12</sup>

Արժե սույն հատվածը եզրափակել Արցախի պատմական առաքելության վերաբերյալ Լեռի կարծիքով՝ <ր. Բեգլարյանի մեջբերմամբ. «Արցախն այն քուրան է, որի մեջ, առաջին անգամ մեր նոր ժամանակներում, կովեց ու կոփիվեց ազգային կովի գաղափարը... Այս լեռնային աշխարհում էր, որ դարերով ստրուկ ապրած հայությունը բարձրացնում էր քաղաքական ինքնորոշման դրոշակը»<sup>13</sup>:

<sup>11</sup> Նոյն տեղում, էջ 325:

<sup>12</sup> <ր. Բեգլարյան, Արցախ-Համե, գիրք չորրորդ, Ստեփանակերտ ԼՂՀ ԳՄ «Վաշագան Բարեպաշտ» հրատարակություն, 2005, էջ 156:

<sup>13</sup> Նոյն տեղում, էջ 41:



\*\*\*

Պատմականությունը Վարդան Հակոբյանի գեղարվեստական մտածողության անբաժանելի հատկանիշն է: Ժամանակը Նրա ընկալմամբ ընդհատում չունի, ինչպես և Ճանապարհները՝ վերջավորություն: Այդպես է նա դիտել դեպքերի ընթացքն արցախյան ազատամարտի իրադարձություններում: Բացահայտել Արցախի պատմության դասերը, նշանակում է Ճանաչել Նրա գոյաբանության փիլիսոփայական հիմունքներն իբրև հայրենիք, բնաշխարհ, կենցաղավարություն, կրոն, ֆիզիկական ու հոգևոր ինքնություն: Այդ հատկանիշները ներկայանում են երևելի անուններով, դեպքերով, ավանդություններով, հուշարձաններով ու առարկայական հուշիկներով: Եթե պատմության փիլիսոփայությունն առավելապես արտահայտվում է ավանդույթներում, ապա բնականաբար ձևաբանվում է էպիկական ժանրերում լեզենդ, պոեմ, ասք և այլն: Այս իմաստով երևույթը դիտարկում ենք առավելապես Վարդան Հակոբյանի ասք-պոեմներում:

«Ղարաբաղ» պոեմը սիրո մի գեղեցիկ խոստովանություն է առ հայրենին: Բառերն անզոր են արտահայտելու գգացմունքի լիությունը, քանզի՝ «Ես Ղարաբաղի նման գեղեցիկ աշխարհ չեմ տեսել, չկա էլ գուցե...»<sup>14</sup>: Այս, ինչ հրաշք է թվում, Ղարաբաղում սովորական պատմություն է.

*Արևը լեռան, իսկ լեռը պապի  
ուսին, քայլում են դարերի միջով,  
հույսի շրերթ է,  
լույսի շրերթ է,  
շրերթ հավերժի...  
Մեր Ղարաբաղյան հին լեռնաշխարհում  
սա սովորական պատմություն է մի:*<sup>15</sup>

14 Հակոբյան Վ., Երկեր, Գ, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2007, էջ 86:

15 Նոյն տեղում, էջ 87

«Երկնային պատիճ» դրամատիկական պոեմը, որ գրվել է արցախյան գոյամարտի տագնապալից օրերին, արկածային մի տեսիլք է «պարետային ժամի» ոստիկանի և ազատատենչ մարտիկի դիմանիր կամքի հակառակության: Բանտ է, վանդակի մեջ փակված է Արևիկ հայուիին, նրա ազատությանը հետամուտ է Հայկի խորհրդավոր հայտնությունը. ապա՝ մայրը, որ հայրենիք է խորհրդանշում, ոգի է ներշնչում իր նահատակ զավակներին, թե «դեռ չի եղել, որ Արցախը պարտվի».

*Որբան խոցված, արևաքամ,  
Մեկ է, Արցախը  
Դի խոնարիվելու  
Եվ չի ընկնելու Արցախը երբեք...  
Զրիեղեղ է նոր, հրո հեղեղ է  
Եվ անչափ ծանր՝  
Տապանը լոյի:  
Չորավիգ եղեք հայոց լեռանը  
Հայոց լեռան հետ ամուր բերդ կացեք...<sup>16</sup>*

Միանգամայն տպավորիչ է Վ. Հակոբյանը ներկայացնում Մաշտոցի աստվածային առաքելությունը «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» պոեմում: Երկատված է Հայաստան աշխարհը. մի կողմից «պարսկաց քրմերի վառած ատրուշաններն են», մյուս կողմից՝ Բյուզանդիայի գերությունը, չկա միավորող ուժ և ազգային ինքնությունը խորհրդանշող գաղափար: Արցախի փրկությունը Մաշտոցի առաքելության մեջ է, հայոց այրութենի և դասական լեզվի մեջ, քանզի՝ «Միայն հայրենի գիրն է ու լեզուն, ուր հայրենիքը կանգուն է հավերժ»: Արցախը հայոց առաջին գավառներից մեկն է, որ յուրացրեց մաշտոցյան գիրը և լեզուն ու իր պատմությունը ներձուվեց հայոց պատմության ընթացքին: Մաշտոցն ուղղություն տվեց հայոց պատ-

<sup>16</sup> Նոյն տեղում, Էջ 110:

մությանը, լեզվի ու հավատի հայտնությամբ ոգի ներշնչեց ազգային գոյությանը և անպարտելի մնաց թշնամական հորդաների ներխուժման հանդեպ.

*Բայց... միևնույն է  
դեռ ոչ մի թրից  
դեռ ոչ մի սրից հայր չի պարտվել:*<sup>17</sup>

Իր բանաստեղծական շարքերում, պոեմներում ոգեկոչելով հայ ազգի փառավոր ու հերոսական ժամանակները, պոետը ժողովրդի մեջ արթնացնում է մաքառման ոգին, մղում նրան ազատ ու անկախ ապրելու սխրանքների: Բանաստեղծը կամրջում է հայրենիքի անցյալը՝ ներկային: Եվ դա անում է նպատակադրված. «...Ես ցանկացա պատասխանել մեր ժողովրդի պատմությունը խեղաթյուրողներին,- գրում է Նա, -բռնոր նրանց, ովքեր «աչք են տնկել» մեր հող ու ջրին, մեր խաչքարին»<sup>18</sup>:

Արցախյան ազատագրական շարժման նախօրեին, երբ ազերական իշխանությունները ձեռնամուխ էին եղել Լեռնային Ղարաբաղի պատմական հուշարձանների յուրացմանը կամ ոչնչացմանը՝ իրենց սև գործը թափով առաջ տանելով (նրանք օգտվում էին գորբաչովյան «պերեստրոյկայի» ընձեռած թողտվության պայմաններից), հայ մտավորականների շրջանում բողոքի ալիք բարձրացավ: Իսկ հետո արդեն ծնունդ առավ ՍՍԿԿ Կենտկոմի քաղյուրոյին, Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովին ուղղված արցախցի մտավորականների դիմումը՝ Արցախը մայր Հայաստանին միացնելու պահանջով: Այն սկսվում է Աղրբեջանի կառավարության կողմից հայկական մշակութային ժառանգությունը գողանալու մասին բողոքով. «Հայտնում ենք Ձեզ, որ Աղրբեջանում վաղուց արդեն տարվում է

<sup>17</sup> Նոյն տեղում, Էջ 170:

<sup>18</sup> Հակոբյան Վ., Երկեր, հատոր Ե, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2008, Էջ 543:

հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը աղբբեջանական ձանաչելու կուրսը»<sup>19</sup>: Ահա թե իոզենոր, բարոյաքաղաքական ինչ մթնոլորտ էր տիրում Արցախի հասարակության մեջ: Եվ հենց գաղափարական պայքարի այս պայմաններում էլ Վ. Հակոբյանը գրեց իր «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» առաջին մեծակտավ գործը, որով հեղինակը պատասխանում է նաև պատմությունը խեղող ազերական պետական մեթեսայի գաղափարախոսներին: Ստեղծագործությունն, անշուշտ, ծրագրային է: <Եղինակը գեղարվեստական ինքնատիպ միջոցներով ու բարձր մակարդակով կերտած իր այդ պոեմում խոսում է այն մասին, թե Արցախում ինչպես է Մեսրոպ Մաշտոցը բացել առաջին հայերեն դպրոցը՝ այն ժամանակ, երբ ազերաթուրքական տարրը դեռևս գոյություն չուներ իրականության մեջ: <այնց այրութենը մեր ժողովրդին փրկել է շատ ու շատ արհավիրըներից: Եվ հենց մեր դպրության ոգու մեջ պիտի տեսնել մեր ազգի հարատևության գաղտնիքը: Այս գաղափարն է ընկած պոեմի հիմքում. «Պոեմը,-գրված է գրքի փոքրիկ առաջարանում,-որը ծնվել է արցախյան համազգային շարժման խիստ լարված ժամանակաշրջանում, բնականաբար, պատասխանում է <այնց Արևելից Կողմանքի պատմությանը վերաբերող մի շաբթ հարցերի»<sup>20</sup>: Ի դեպ, դեռևս ձեռագիր վիճակում, պոեմի առաջին ընթերցողը եղավ Ամենայն Հայոց Կաթողիկոս, Երջանկահիշատակ Վազգեն Առաջինը, որի հովանավորությամբ և ուղեկցող խոսքով էլ հայկական վայելչագրությամբ լուս տեսավ այդ գործը: «Զայն մը հնչեց Արցախի հայոց լեռներեն,- գրում է Վազգեն Առաջինը:- Ինձ այդպես է թվում, որ այսօր Վարդան Հակոբյան բանաստեղծի այս ոգեշունչ խոսքերով ավելի շոշափելի դարձավ Արցախը մեզ համար, ավելի մոտիկ, ավելի անմիջա-

<sup>19</sup> <ակոբյան Վ., Երկեր, հատոր Դ, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Կաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2008, էջ 297:

<sup>20</sup> <ակոբյան Վ., Մեսրոպ Մաշտոցն Ամարասում, Ստեփանակերտ, «Արցախ» հրատարակչություն, 1990, էջ 5:

կան, ավելի հարազատ, ավելի անբաժան մեզանից, մեր հոգուց, մեր երազանքից: Ես շնորհավորում եմ մեր տաղանդավոր բանաստեղծին: Տաղանդավոր բառը օգտագործեցի ոչ պատահական կերպով: Իսկապես նրա մեջ խոսում է հայկական հավիտենական Արցախը»<sup>21</sup>: Անշուշտ, տեղին է նկատված՝ հավիտենական Արցախը, հայկական մի անառիկ եզերը, որի պատմությունը՝ սկզբից մինչև մեր օրերը, հերոսական դրվագների մի ոսկե շղթա է հիշեցնում: Եվ այդ ոսկենությունը նրա անպարտելիության մեջ է տեսնում բանաստեղծը, իսկ անպարտելիությունը՝ գիր ու տառի, ոգու մեջ: Եվ՝ ոչ միայն: Հաղթանակի ապահովումը ստուգապես մեկ այլ, ոչ պակաս կարևոր պայման է առաջադրում, դա ձեռքին միշտ թուր ունենալն է, հայոց հավլունի թուրը, որովհետև թրի ու գրի միասնությունն է, որ հայրենիքը պահում է անառիկ:

*Մեր սուրբ դպրահոր արարած գրով,  
մեր դարբինների կուած սրերով  
պիտի նորոգենք  
ու նորոգվենք,  
արդարագրենք  
գիրը մեր ազնիվ Հակատին դաշված...<sup>22</sup>*

Ասում են՝ մարդ որտեղ ծնվում է, իր հոգեկերտվածքի մեջ անպայման կրում է այդ տեղանքի, քնության, հողի ներքին ու արտաքին նկարագրի էական կողմերը: Արցախցիների պարագայում ժողովրդական այս իմաստությունն արժանավոր ձևով է քննություն բռնում, ինչպես ասում են: Արցախական հողի ամրությունը, լեռների վեհությունը, ձորերի խորությունը, ձմեռվա խստությունն ու գարնան մանուշակյա նրբությունը կա Վարդան Հակոբյանի կերտած կերպարների մեջ, անկախ նրանից՝ հողի մշակ է հերոսը, երկրի պահապան, զորական, դպիր, թե՛ հովիվ... Հակոբյանի գրական ներ-

<sup>21</sup> Նոյն տեղում, էջ 1:

<sup>22</sup> Նոյն տեղում, էջ 148:

կապնակի գույները հարուստ են, և նա կարողանում է ստեղծել խիստ կոլորիտային կերպարներ: Եվ, որ ամենագլխավորն է, Վ. Հակոբյանի ստեղծագործություններում, ինչպես, ասենք «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» պոեմում, գլխավոր շեշտը նա դնում է ոգու հայկականության վրա, ազգային հատկանիշների վրա, որոնք դարերի ժանապարհ են անցել ու թրծվել հազար ու մի արհավիրքի մեջ: Ժամանակին հետաքրքիր դիտարկում է կատարել անվանի գրականգետ Սևակ Արզումանյանը. «Իմ համոզմամբ, ավանդույթներից ամենագլխավորն ազգային ոգու պահպանման գեղագիտական սկզբունքն է, որը Վարդան Հակոբյանի պոեզիային տալիս է առանձնակի փայլ ու հմայք: Այս առումով նա իր սերնդակիցների մեջ չունի հավասարը, իսկ դա այն չափանիշն է, որով բանաստեղծը երկարակեցություն է ապահովում իր համար մայրենի գրականության անդաստանում»<sup>23</sup>:

Իր «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» պոեմում բանաստեղծը հետաքրքիր հետևողական է հասնում գեղարվեստական համոզիչ պատկերի մեջ.

*Հայոց աշխարհի ոսխները նեռ  
երբ արշավել են մեր սուրբ հոռի վրա,  
ոչ թե միայն մեզ,  
այլև մեր ծառը,  
այլև մեր քարը,  
այլև մեր վանքը,  
մեր հոգու պես ջերմ  
մեր հողն են անգամ զարկել-թրատել.<sup>24</sup>*

<sup>23</sup> Սոլոմոնյան Տ., Տաճարի Հանապարհին կամ մենարանի ովստավորը, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Կաչագան Բարեպաշտ» հրատարակություն, 2007, էջ 13:

<sup>24</sup> Հակոբյան Վ., Մեսրոպ Մաշտոցն Ամարասում, Ստեփանակերտ, «Արցախ» հրատարակչություն, 1990, էջ 114:

Թե՛ պատմական անցյալը մարմնավորելու, թե՛ գեղարվեստական միջոցների ու ձևերի առումով բոլորովին նոր մակարդակով է Վարդան Հակոբյանը Ներկայանում իր «Տաճարն Աստծո» պոեմում, ուր նա առաջադրված գաղափարների ու խնդիրների ազգային հենքի վրա բարձրացնում է համամարդկային հարցեր՝ վիպերգի համար գլխավոր հերոս ընտրելով մարդուն, որը և Աստծո Տաճար է: Գրականագետ Ս. Սարինյանը գրում է. «Ստեղծագործական մի խկական սխրանք է Վարդան Հակոբյանի «Տաճարն Աստծո» վիպերգը՝ անկրկնելի ոչ միայն իրու մտահղացում, այլ որպես ժանրային ձևույթ: Տիեզերքի, պատմության մի գեղեցիկ բանահյուսություն է դա, որ դիցաբանական արխետիպերի և պատմության դարերի վրա ուրվագծում է Արցախի լեգենդը, ուր Գերագույն Ոգին Ճշմարտության, Փրկության, Ազատության, Հավիտենության խորհրդով զորավիգում է արցախցու հավատը... Հիրավի այդպես, քանզի «Աշխարհում գեղեցիկ ու չքնաղ շատ աշխարհներ կան, բայց ոչ մեկը Արցախ չէ: Արցախի սերը՝ տաճար է աստվածային»<sup>25</sup>:

Վարդան Հակոբյանի մտածողության նորարարական շունչն այս երկում խիստ նկատելի է՝ թե՛ կերպարների ստեղծման, թե՛ ժանրային ձևույթի, թե՛ գաղափարական խնդիրների լուծման և թե մի շարք այլ առումներով. նա պոեմում դիմում է գրական գրեթե բոլոր ժանրերի կիրառմանը, սակայն՝ յուրովի, որը և նրա լեզուն դարձնում է ավելի հարուստ ու պատկերավոր, կերպարները՝ ամբողջական: Արցախի համար արյունոտ ու ծանր օրերի ծնունդ է այս վիպերգը: Ազատության համար մաքառում, արյուն է տախս մի ժողովուրդ՝ իր բարձրիկ ու լուրթ լեռների մեջ, դիմում է աշխարհի մեծ տերություններին՝ արդարության հասնելու համար, ձեռք է մեկնում, բայց...

Եթե

*բոլոր սարերից ելած կանչերին*

<sup>25</sup> Հակոբյան Վ., Մենարան, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1996, էջ 4:

Ընդառաջ չի գալիս խաղաղությունը  
երազված,  
ուրեմն  
կանգնած են վայրկյանները ժամանակի:  
Եթե ես մեկնում եմ ձեռքս  
և ոչ ոք չի բռնում այն,  
ուրեմն՝  
աշխարհում ոչ մեկը չի բռնում  
ոչ մեկի ձեռքը.<sup>26</sup>

Փիլիստիվայական ընդհանրացման հիմքում մարդասիրությունն է: Եվ հենց այդ զգացումով է արցախցի գինվորը զենք վերցնում, նետվում մարտի մեջ, որովհետև դա է նրանից պահանջում «խաղաղությունը երազված»:

Պոեմի չորս մասերից յուրաքանչյուրի համար Վ. Հակոբյանը բնարան է ընտրել, որտեղ խոսք է գնում այն պատմական անցքերի ու իրադարձությունների մասին, որոնք գեղարվեստական մարմնավորում են գտել գրողի գրչի տակ: Այսպես, «Հուկունքն Շամիրամա» մասում գրողն արծարծում է նաև Արցախ աշխարհի՝ որպես հինավորց հայկական հողի, վաղնշականության մասին՝ հիշեցնելով պատմական կոնկրետ փաստեր: «Հին Հայաստանի կուլտուրան» (Խ.Սամվելյան) գրքի երկրորդ հատորից է պոեմի այդ մասի բնարան ընտրել Վ. Հակոբյանը. «Անշուշտ, այդ ուլունքը, իբրև ավար, խոջալլուի հին շրջանն է բերվել որևէ տեղական թագավորի կամ իշխանի ձեռքով, որ մասնակցել է Ասորեստանի դեմ մղված արշավանքներից մեկին, ամենայն հավանականությամբ՝ Ադադ Նիրար և ի թագավորության ժամանակ և կամ, որ ավելի քիչ հավանական է թվում, նրա թագավորելուց հետո»<sup>27</sup>: Եվ պատմական իրադարձություններին ու կոնկ-

<sup>26</sup> Հակոբյան Վ., Երկեր, հատոր 9, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2007, էջ 173:

<sup>27</sup> Նոյն տեղում, էջ 203:

րետ իրողություններին դիմելով՝ բանաստեղծը լուծում է արդիական խնդիրներ, որոնք ուղիղ գծով առնչվում են արցախյան ազատամարտին: Վաչագան Բարեպաշտ արքայի կերպարում ներկայացվում են Արցախի գորության ժամանակ արյուն տվող հերոսական մարդիկ, որոնց մեջ մարմնավորված է ժողովրդական իմաստությունը.

*Անցյալն, այո, պիտի ապրել  
ու վերապրել,  
բայց՝ ներկայի հաշվին՝ երթեք,  
այլապես մենք կկորցնենք,  
ձեռքից կտանք և ... ապագան<sup>28</sup>:*

Արցախի պատմության դասերում ուսանելի շատ բան կա և անհերքելի է ձշմարտությունը. «Ես Դադիվանքի քարակերտ խաչն եմ, ինձ հնարավոր չէ պարտության մատնել»<sup>29</sup>: Պատմության այդ դասերում փայլում է Վաչագան Բարեպաշտի հայտնությունը՝ Այր-ի հաղթանակը թագավորական երկրում: Սակայն, թերևս, մի բան մնաց չկուահված, որ հազար հինգ հարյուր տարի հետո Բարեպաշտին ուղղած նամակում հուշում է Վարդան Հակոբյանը: Ճիշտ է, որ դարեր շարունակ Բարեպաշտի մասունքները սուրբ լուս են արձակում Զրվածիքում և Աստծո տեսիլներն ամեն օր իշխում են Արցախ աշխարհի ձիգ գմբեթներին, բայց

*քեզանից հետո տվին երկիրը,  
Վաչագան արքա,  
տվին մաս առ մաս,  
տվին մազ առ մազ,  
ծախեցին հաճախ  
ու «ոտքի կոխան դարձրին ամենքի»,  
ամեն քոչվորի*

<sup>28</sup> Նոյն տեղում, Էջ 229:

<sup>29</sup> Նոյն տեղում, Էջ 253:

և Վարարակնը  
ողբ է Զրվշիք<sup>30</sup>...

Եվ Արցախի պատմության դարերի փորձին գիտակ բանաստեղծը ափսոսանքի խոսք է ուղղում Բարեպաշտին, թե «ինչո՞ւ, ինչո՞ւ... մոռացար հաճախ, // որ // այդ բողբոջուն գրերի կողքին՝ // դրանք պահելու, փրկելու համար, // թողնել // պատկերը լարված նիզակի, // Նիզակն Առանի»<sup>31</sup>: Այս դասն է, որ ուսուցանում է բանաստեղծն ազատամարտի ելած արցախսիներին:

Գրականագետ Սոկրատ Խանյանը՝ անդրադառնալով Վարդան Հակոբյանի «Տաճարն Աստծո» պոեմին, նշում է, որ այնտեղ միահյուսված են պատմությունն ու առասպելականությունը, բնության կախարդական անակնկալներն ու բանաստեղծական արվեստի գունագեղությունը: Արժնորելով երկը, նա գրում է. «Տաճարն Աստծո» պոեմը հետաքրքիր է կոմպոզիցիոն և սյուժետային յուրօրինակ կառուցվածքի տեսակետից: Նրանում բացահայտվել են բանաստեղծի պատկերավոր մտածողության երանգները, շարժուն վիճակներ և փիլիսոփայական խորք ունեցող էպիզոդներ ստեղծելու կարողությունը: Այն արցախյան շաժման հետ կապված համահայկական ցավն ու ակնկալությունները պատկերող միակ ծավալուն գործն է, որի մասին գրականագիտությունը դեռևս կասի իր խոսքը»<sup>32</sup>:

Վարդան Հակոբյանի արցախապատումի փիլիսոփայական համակարգումը կարելի է համարել «Քրիստոսի ծաղիկները» ասքը: Այստեղ Արցախն է տիեզերական համակ անդրադարձներով: Դա մի յուրատեսակ անհատական էպոս է, անկուսական անցումներով, նախերգանքների արձակ դադարներով, որի գաղափարը հանգում է «աշխարհի ամենամեծ սերը» որոնելուն՝ տիեզերական թոհութուի

<sup>30</sup> Լոյն տեղում, Էջ 255:

<sup>31</sup> Լոյն տեղում, Էջ 257:

<sup>32</sup> Խանյան Ա., Մարտնչող գրականություն, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2012, Էջ 153:

մեջ բզկտվող ժամանակներում»: Սա բանաստեղծի իդեալի որոնումն է և ամբողջ ասքը բեկված է բանաստեղծի ներգգայուն վերապրումներին, նույնքան և փիլիսոփայական դատումներին՝ «Սև սամումը եղեռնական մոլեզնում է Արցախս սուրբ լեռների մեջ»<sup>33</sup>, պահի այս ցավագին հայացքի միջով անցնում է «հիշողության աչքը մեր, որով տեսնում ենք ապագան», և նահատակների խորհրդով հասկանում, որ «Արարատի բարձրությունը պետք է չափել Արովյանի քայլերով միայն»<sup>34</sup>:

Զայն հայրենականի անձնական արձագանքները լսելի են նաև «Պոեմ իմ մասին կամ 24-ն անց 81 րոպե» մենախոսությունում: Կենսագրական ուրվագծերում հայտնվում է նախ հայրենիքը՝ իր ծննդից առաջ և հետո.

*Ինձ ծնունդ տալուց հետո միայն  
դառնություններ ես պարզել, հայրենիք:  
Հայոց պատմության թանաքը չչորացած, այն  
կրկին դառնում է ներկա, մեր  
պատմությունը չի անցյալանում<sup>35</sup>:*

Ուրեմն պետք է գոյության համար դիմագրավել, իսկ դիմագրավելու համար «պետք է պարզապես ուժեղ լինել», քանզի «ի վերջո մորթելուց ոչրական է մորթվելը», և եթե «ժամանակին հատվեր թաթը թալեաթների», ապա հայոց մայիսը կգար «ավելի վաղ, քան Ապրիլը եղեռնական»: Պետք է հավատարիմ լինել պատմության դասերին և ամուր կառչել հայրենի հողին, քանզի լրել արյամք հեղված հողը, նշանակում է անարգել նահատակների հիշատակը, իսկ «մենք այնքան ենք հեռացել մեզնից, որ մեր աչքերում Փոքր Մհերն արդեն այլմոլորակայինի կարգավիճակ ունի»:

<sup>33</sup> Հակոբյան Վ. Թրիստոսի ծաղիկները կամ դադարներ կտրուկ շրջադարձներով, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2001, էջ 62:

<sup>34</sup> Նոյն տեղում, էջ 107:

<sup>35</sup> Նոյն տեղում, էջ 474-478:

Ուշագրավ է, որ ամենուրեք Վ. Հակոբյանն արդի իրադարձությունները դիտում է անցյալի անդրադարձով: «Արցախյան գոյամարտը,- գրում է նա,- մեր լինելիության հաստատումն է ու վերադարձն է մեր արմատներին: Այն խորհրդային ու օտարալեզու օրորոցայիններով շղարշված մեր արյան արթևացումն է: Իսկ հայորդին աշխարհի որ ծայրում էլ գտնվի՝ հայրենի հողի վրա կախված ամենափոքրիկ վտանգն անգամ զգում է իր մեջ ապրող ու գիտության կողմից դեռևս չբացահայտված բջիջներով, ոտքի ելում»<sup>36</sup>:

Պատմության ուսանելի դասերի հետ անհրաժեշտ է նաև ունկնիր լինել կյանքի ու ժամանակի հարափոփոխ երևոյթներին: Արցախյան արդի շարժումը շատ բան փոխեց նաև մեր պատկերացումներում և այս տեսակետից անկարելի է շրջանցել հասարակական հեղաքեկումների անխուսափելի հետևանքները, որոնց մեջ դարձյալ նույն պատճառն է՝ որը և, ի վերջո, միշտ «անցնում-դառնում է հետևանք»<sup>37</sup> ըստ Հեգելի փիլիսոփայական տրամաբանության: Ժամանակի հեղաքեկումները փոխեցին գործող շատ օրենքներ ու կենսաձևեր, սովորություններ ու բարոյական նորմեր: Նոր ընթացք ստացավ մեր պատմությունը: Այստեղ էական է արևմտականացման հանգամանքը, որ մերժում էր կոմունիստական գաղափարախոսությունը, իսկ այժմ դարձել է մեր գոյակերպի հիմնական սկզբունքներից մեկը<sup>38</sup>:

Վարդան Հակոբյանը ոչ միայն պատմությունն է արդիականացնում, այլև պատմականացնում է արդիականը: Եվ այս համադրության մեջ միանգամայն որոշակի է նշմարում իրական ու տրամաբա-

<sup>36</sup> Հակոբյան Վ., Երկեր, հատոր Ե, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2008, Էջ 168:

<sup>37</sup> Հեգել Ֆ., Փիլիսոփայության ներածություն, Երևան, Հայաստանի պետական հրատարակչություն, 1964, Էջ 166:

<sup>38</sup> Հակոբյան Վ., Երկեր, հատոր Ե, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2009, Էջ 438:

նական լուծմունքը: Գերությունը հավերժական կացություն չի կարող լինել և անխուսափելի է ազատագրումը, քանզի «մեր պահանջներն արդարացի են» և հասել ենք մի սահմանի, երբ լոելն ու ներելը անհնարին են:

Վերջում արժե դիտարկել բանաստեղծի տառապանքը պատերազմի «ստեղծագործական» ազդակներում. «Պատերազմը իր ամեն ինչով հանդերձ (այդ թվում միստիկական զգացողությունները), ինձ անասելի հիասթափությունների առաջ կանգնեցրեց, եկավ մի պահ, ստեղծագործական առումով, որ, թող ներվի, ուղղակի վանում էին ինձ բառից: Բանաստեղծությունը, իիրավի, դարձել էր «այլասերումը լուրջան»: Այս ամենը զուգորդվեց աննախադեպ ցցումներով: Մի չքնաղ սերունդ նահատակվեց պատերազմում: Այն, ինչ կարող էր սահմոկեցուցիչ լինել անգամ գրականության մեջ՝ որպես «նյութ», թող ներվի, առօրյայում դարձել էր սովորական»<sup>39</sup>:

\*\*\*

Պատմության թեման Սոկրատ Խանյանի արցախապատումի գլխավոր մոտիվներից է: Այս առումով առանձնանում է նրա «Արցախի արծիվը» պոեմը: Իններորդ դարի իրադարձություններն այստեղ Ս. Խանյանը փորձում է ցույց տալ մեր ժամանակում ծավալվող դեպքերի ու անցրերի դիտակետից, Եսայի իշխանի, Հովսեփի կերպարների մեջ ներկայացնում է երկրի նվիրյալներին, որոնք ամեն ինչ անում են հայրենի եզերքի պաշտպանության համար:

Սոկրատ Խանյանի գրչին են պատկանում նաև երեք վավերագրական պոեմներ, որոնց թեման առնված է արցախյան պատերազմի իրադարձություններից. «Նահատակ լուսո», «Միեր» և «Արցախուիի»: «Նահատակ լուսո» պոեմը նվիրված է Մոնթե Մելքոնյանի արցախյան սիրագործությանը: «Դոեմը կենսագրական կառուցվածք

<sup>39</sup> Նոյն տեղում, Էջ 608:

ունի և պատկերում է նրա կերպարի ձևավորման ընթացքը, հայցըների կազմավորումը և հայրենիքի հանդեպ նվիրումի հոգեբանական ձևավորումը:

Գևահատելին այն է, որ հերոսի հոգեբանական ձևավորումը մշտապես ուղեկցվում է պատմության հուշերի վկայությամբ: Այդպես եղավ Ճակատագրի շեղումը.

Նա պիտի ծնվեր Սասնա լեռներում,  
Վարագա վանքում մկրտվեր մի օր,  
Մշո վարդերը ջահել ձեռքերում  
Միրո մնդեղի երգեր մեղմօրոր,  
Նարեկա վանքում Նարեկը կարդար,  
Սուրբ Կարապետի օրինանքը լսեր,  
Արբեր Անիի վեմերով Ճարտար,  
Աղթամարում իր հրճվանքը կիսեր,  
Մհերի դռան Մհերին կանչեր...<sup>40</sup>

Սակայն նա աշխարհ եկավ Կալիֆորնիայում, ուր ապաստանել էր պապը՝ փրկվելով թուրքական բռնությունների մահաբեր հալածանքից: Ապա հասակ է առնում, լինում Եվրոպայի մտավոր կենտրոններում, շրջում Արևելքի ու Արևմտաքի քաղաքներում, արյան կանչի հրավերով շրջագայում Հայաստան աշխարհի հիշարժան վայրերով և մտորումների հետքերով խորհում հայրենիքի պատմական Ճակատագրի դժվարին անցումների մասին: Երազում պապի հետ շրջագայում է Սասունում և լսում նրա աղոթքը, «թե սա մեր երկիրն է, այստեղ է մեր պապերի հայրենիքը»: Եվ թոռանը՝ կտակում է պապը՝ հիշողության մեջ մշտապես պահպանել հայրենիքի փրկության վսեմ գաղափարը, հորդորում, թե՝ «չասես Մելքոն պապի թռոն ես՝ մինչև չփրկես հայրենիքը թո»:

<sup>40</sup> Խանյան Ս., Ընտիր երկեր, հասոր երրորդ, Ստեփանակերտ, «Սոնա» հրատարակություն, 2010, էջ 210:

Մոնթեն լավ գիտեր հայոց պատմությունը և նրա էջերում թիշ չեն հաղթանակի ու հզորության դրվագները, հերոսական դեմքերը՝ Արտաշես, Տիգրան Մեծ, Բագրատունիներ և այլն: Եվ սակայն ինչ առեղծվածային են նրա պատմության ձեղքերը, ազգի միասնության տրոհումը, որ ողբերգության երանգ պիտի տային նրա հանձարի գուշակությանը՝ Խորենացու «Ողբը», Նարեկացու «Մատյանը» և այլն: Ուրեմն ինչո՞ւ և ինչպես տեղի ունեցավ այս շեղումը: Բայց էականը մնում է Մոնթեի երդումը՝ անպատճախան մնացած հարցերի մղջավանջում:

Օ՛, ոչ, - վճռում է Մոնթեն արիակամ,  
Քանի ավերված մեր երկիրը կա,  
Քանի կա ցրված իմ ժողովուրդը,  
Սուրբ է պայքարի զենքի խորհուրդը:  
Թուրքիան ինչքան էլ մեր հարցը խաչի,  
Մեծ եղեռնը նա պիտի Ճանաչի<sup>41</sup>...

Խանյանը ձգտում է ըստ ամենայնի ամբողջական ներկայացնել իր հերոսի կենսագրական ուղին: Ազատվելով փարիզյան բանտից, հայկական գաղտնի բանակի զինվորը հետամուտ էր ազգային իր երազանքի իրականացմանը: Արցախում բռնկված ազատագրական պայքարը նրան գրավում է Նվիրումի վեհությամբ, և նա, թողնելով գիտության հեռանկարային ասպարեզը, մեկնում է Արցախ և հերոսաբար մասնակցում պատմական Արցախի ազատագրման պայքարին.

Հավատա դու ինձ, վիրավոր Արցախ,  
Հեռվից քո գիրկն եմ եկել ինքնակամ:  
Իմ երակները գետերն են քո խենթ,  
Կարկառ ու Վարանդ, Խաչեն ու Թարթառ,  
Իմ բարձունքները սարերն են քո սեզ,

<sup>41</sup> Նոյն տեղում, Էջ 222:



Արարատ ու Քիրս, Դիզափայտ, Մուավ:

Իմ երազները թևերն են հայոց,

Թևերիս մեկը դու ես հաղթական...<sup>42</sup>

Բանաստեղծը Ներկայացնում է Նրա հաղթական մարտերը Գյուլիստանում, Մարտունիում, Մաճկալաշենում, Զրաբերդում, Աղդամում և այլուր, պայքարի դրվագներն իմաստավորում Մոնթեի խոհերով՝ կյանքի ու մահվան, ազատության ու նվիրումի, ազերական վանդալիզմի և թուրքական ֆաշիզմի սպառնալիքի մասին: Մոնթեի կերպարին առանձնակի հմայք է տալիս Նրա սերն Սեղայի հանդեպ: Քնարական այս անտրակտը սյուժեն լրացնում է կերպարի անձնական-հուզական աշխարհը Ներկայացնող գեղեցիկ նրբազգացողությամբ: Հայրենասեր մարտիկի առնական կեցվածքի մեջ խլրտում է զգացմոնքի նուրբ թրթրիում: Արժե Ներկայացնել մեկ ակնթարթ՝ սիրո խոստովանությունից.

Մոնթե.

Այնպես ն լիներ, լիներ այնպես ն,

Որ խոնարիվեր հոգիս քո դեմ,

Սիրոս քեզ հետ մտներ եղեմ

Ու մատաղվեր գառնուկի պես:

Սեղա.

Այնպես ն լիներ, լիներ այնպես,

Որ բուրվառեր հոգիս քո դեմ,

Որ լուռ վառվեր հոգիս քո դեմ

Ու խնկարկվեր իմ սիրո պես:<sup>43</sup>

Անկատար մնացած սերը ողբերգական երանգ է տալիս սյուժեի ավարտին, բայց հենց այս ողբերգության մեջ է վեհանում Մոնթեի

<sup>42</sup> Նոյն տեղում, էջ 226:

<sup>43</sup> Նոյն տեղում, էջ 248:



կերպարը՝ որպես ազնվական հոգի, ուժի և գեղեցկության տիպար և հայրենիքի ազատության պայքարի նահատակ։ Նա իր մահով հաղթանակ բերեց, քանզի խորհրդանիշ եղավ ազգի գոյության և չակնկալելով փառք ու համարում, եկավ և ձուլեց հայրենի սրբազնության հողին։

Խանյանի «Մհեր» և «Արցախուիին» պոեմները, եթե կարելի է ասել, անսյուժե են, այսինքն՝ զուրկ են պատմական ատաղձից և, ըստ ձևության, հեղինակային խոսքի կառուցվածք ունեն։ Մի բան, որ իմաստ է տալիս հերոսների վարքի ձևավորմանը, դա պատմության դասերի հիշատակումն է։ Ընդհանուր այս գաղափարի մեջ Խանյանը նշմարում է արցախյան ազատամարտի հաղթանակը։

\*\*\*

«Ոեքվիեմ» պոեմում Ռոբերտ Եսայանը հայրենի Արցախի գոյապայքարի պատմահոգեբանական աղերսները դիտում է Հայաստան աշխարհի ճակատագրական անցումներով, թերևս փոքր-ինչ վերացրկված ցնորքի երանգով և նկատելիորեն խտացված հառաչանքի թողությամբ։ Պոեմն սկսվում է կանխակալ մի հարցով.

Հայաստան,  
քաղաքականությունդ  
թիգ առ թիգ կուլ է գնում  
Նավթային ախորժակին  
Կասպիական ձկան,  
ու՞ր է Թուր-Կեծակին,  
որով պիտի որոշվեր սահմանագիծը  
իրականության...<sup>44</sup>

Ասպարեզը մնում է «պատմության ծաղրից ելած խառնամբուխին», որ թուրք-ադրբեջանցի է կոչվում և որի սմբակների տակ

<sup>44</sup> Եսայան Ռ., Ասուպների եղերք, Ստեփանակերտ, Լ'Հ ԳՄ «Վաշագան Բարեպաշտ» իրատարակություն, 2008, էջ 33։

կոխկրտվում են խաչքարերը, արքայական դարպասները, ոսկետառ մագաղաթները և «այրվում այն ամենը, ինչ հայկական է»: Զարդերը փոխանցվում են արյան կոչերով՝ Համիդից Թալեաթից Բաղիրով, և ամենուրեք մահվան հրդեհներ են ավեր ու թալան, ոիվային կրքերի բորբոքում, որ թուրքի համար հաջուքի է վերածում հայի ուրվականների նախճիրը:

Բանաստեղծի երևակայությունը թևածում է պատմության ու ժամանակների խորհրդավոր անցումներում, մեծարում հայոց հանձարի հիշատակները: Եվ «ապագայի ոտնաձայների» արձագանքներից բացվում է «ծաղիկը տարածության», «խղճի վիհերից բարձրանում է իրեշտակը հույսի», ծառանում է Աշխարհ կոչված փիլիսոփայական անեզրությունը, ուր «քաղաքական խաղերն ավարտվում են միշտ Էլ փոքր ազգերի տեղահանությամբ կամ թնաջնջմամբ... Նայած թե խոշոր տերությունների շահերի հողմը որ ուղղությամբ է մարտավարելու»: Ու վերստին՝

պատմության վիհից ելած խառնամբոխ,  
որ խաչքարեր է փշրում ու թաղում  
ժամանակների որմնախորշերում,  
շարդում մարմարե դեմքը հավատի,  
հիմա այրում է քանքար կերտողին,  
զանգվածին տեսչի թևեր տվողին...  
Մորմոքների վիհ, լուսի պատարագ,  
կարոտների ծիր և անհունի կանչ...  
Հայաստան...<sup>45</sup>

Մտքի և զգացմունքի լարումները բանաստեղծի հուզաշխարհում վերածում են տեսիլային ուրվապատկերների, որոնք իմաստավորվում են խոհամիտ ասույթներով՝ «գոյության տեսնից ժայթռող արցունքերը հավատի խաչքարեր են», «Երազը ապագայի ցողոտ Ճա-

<sup>45</sup> Նոյն տեղում, էջ 34:



Նապարիներն են», «արյան կաթիլներից ելում է եկեղեցին, Զանգի դողանջներով վերադառնում է աքսորյալ խիղջը»:

Պատմության հուշերը այլաբանորեն ստվերագծում են եղելություններ, ինչպես աքսորյալների ձիչերը, բուսատիրության կապանքները, որոնք ավարտվում են Առաջնորդի մահով: Եվ այժմ բանաստեղծը հատում է խղջի սահմանները և նախնիների ոսկորները՝ որպես շիվեր, տևկում ազատության հողում: Ցրիվ մտքերը եղելություններ են այլաբանում, և հանգրվանում է բանաստեղծի հավատը հավերժական գոյության մեջ:

*Դու մնում ես միշտ դարերին հենված  
օրինված տառով,  
ձիչով ծնվողի...  
Խրամատներով ամրապնդիր քո  
խաղաղությունը,  
պատմության ձիչից արթնացած երազ,  
երկիր Հայաստան...<sup>46</sup>*

\*\*\*

Հատկանշական է, որ ժամանակի գրեթե բոլոր բանաստեղծները դիմել են ոեքվիեմին: Իր ոեքվիեմն ունի նաև Նվարդ Ավագյանը, փոքր-ինչ մելամաղձոտ, կանացիորեն սենտիմենտալ և երկգոյն վերապրումներով: Պոեմը կառուցված է ութ ձայնային արձագանքներով՝ «Փրկիր ինձ», «Կրկնիր ինձ», «Գրկիր ինձ» և այլն, որոնցից թերևս վեցերորդ ձայնն է («Պատվիր ինձ») հուշում սիրո, կարոտի հղումները և իմացյալ մահով նահատակված զինվորի երդումը. «Սահմանն հայրենյաց գենքով են գծում»:

*Ու՞ն է պետք մարդու իր հողից զրկված.  
Մենք չէինք կարող*

<sup>46</sup> Նոյն տեղում, էջ 44:



ԴՐԱ  
Դեմքներս շրջել մոտեցող հողմից,  
Արցախն է դարձել Սասուն ու Տարոն...  
... Երբ վտանգվում է ցեղիդ պատիվը  
Պիտի կայացնես վճիռող շիտակ<sup>47</sup> ...

Զայների անուրջներում մահն է՝ անվերադարձ ու թերևս՝ անսփոփ, սակայն կա մի պատնեշ, որի հանդեպ չեզոքանում է մահվան կակիծը և ներզգայում այն մայրական սիրո, հավատարիմ կնոջ և նահատակ զինվորի անդարձ հուշերում, որ ամոքում է լացը և թափանցում բանի մեջ.

Թող երգի լույսով օծվի <այկա տան  
<արատևության ոգին սրբավանդ.<sup>48</sup>

Իր պոեմները Նվարդ Ավագյանը համատեղել է «Հայրենահավաք» հասկացության տակ և նշանավորել այն ընթերցողին հղած ուղերձով.

Քայիր, ես քեզ պիտի տանեմ  
Լացից դեպի համբերություն,  
Ցավից դեպի հանգստություն,  
Մահից դեպի հավերժություն:<sup>49</sup>

Եվ եթե «Բանալին» և «Տիրոջ հետ» պոեմներում վիճակի գիտակցումն է՝ փրկության աղոթքն առ Աստված, ապա նոյնքան որոշակի է բանաստեղծի հայացքը, հակամարտ ուժերի իրավունքի և արդարության արժեքների ձանաչումը՝ վերին սահմանում: Երկրի վրա մոլեգնում են արյան ծարավ սև բնազդները, այս անօրեն երկրում հարվածում են թուրք խուժանի մաղձուտ պրկումները, սումգայիթյան և ախճիրների մոխրակույտը կցրի քամին, մեր ծվատված սրտերում շշնաշել ենք՝ Նժենի, թշնամին միայն դավեր է նյութում, և մեր ձեռքը չսովորեց արյուն առնել նրա նման, որեմն՝ օգնիր մեզ,

<sup>47</sup> Ավագյան Ն., Ծանր լոյս, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2004թ., Էջ 138:

<sup>48</sup> Նոյն տեղում, Էջ 143

<sup>49</sup> Նոյն տեղում, Էջ 107:

Տեր, որ պահենք մեր տեսակը աստվածային.

*Մենք չենք խոսում ամպագողող, լիր մեր ձայն,*

*Տեր, վերջապես և մեր առջև բացիր մի դուռ,*

*Որ հավիտյան ծառադ մնանք,*

*Որ այս ՑԱՎԻՑ խելագարված՝*

*Տեր, մի օր քեզ... չմոռանանք.<sup>50</sup>*

«Տիրոջ հետ» պոեմը յուրօրինակ տարեգրություն է գոյապայքարի տարիների, 1988-ի մեծարումից մինչև 1997-ը՝ մաքառման դժվարին անցումներով, նահանջներով ու հաղթանակներով և տակավին չվերջափորված տագնաապներով:

Անհատը և պետությունը՝ պատմության հանգույցում. այսպես կարելի է ընկալել «Կեսարապատում» պոեմի գաղափարը: Չուգահեռի վրա են Հին Հռոմը և Հայոց պատմության վկաները: Հռոմի Ճակատագիրը և պատմության սուրբեկտի վարքը՝ Կեսարի, Ներոնի, Կալիգուայի, Սուլլայի կոչմամբ: Բարբերի անկում, դաժանություն, ոչնչացման կիրք, դավաճանություն, և կամքը պետությունից վեր դասելու անձնապաշտություն, որ գուշակում է, թե տիեզերական կայսրությունը պիտի կործանվի. «Հռոմի անկումը դատ չէր, //Դատաստան էր վերին»<sup>51</sup>:

Հայոց պատմության Ճակատագրում են Արտաշեսը, Արտավազդը, Արշակ Բ-ն, Պապը, Աշոտ Երկարը:

Հայոց կորսված արքայական գահը վերջապես իր տեղը գտավ Արցախում, և պատմության հուշերում փայլեց Արտաշես արքան, որի դասերը «ականջի օղ են» յուրաքանչյուր հայրենասերի համար: Եվ կա գիտակցումը, որ օտարի հողում քար դնելու անեծքը տրոհում է ազգի ամբողջությունը և «Հարատևումը տրված է նրան, // Ով իր ի վերուստը պահել գիտի»<sup>52</sup>:

<sup>50</sup> Նոյն տեղում, Էջ 111:

<sup>51</sup> Նոյն տեղում, Էջ 144:

<sup>52</sup> Նոյն տեղում, Էջ 149:

Իզուր էր Արտավազդի տրտունջը, թե «Ավերակների վրա ես ինչ-պես թագավորեմ»: Ամբողջ ազգը սգաց Արտաշես արքայի մահը՝ անդառնալի կորուստը հայոց աշխարհի, իսկ Արտավազդը, որ ընդունին էր, չարությամբ օտարեց թագավորական ավանդույթը.

Բանականություն պահեիր սթափ՝  
Եվ կառավարման ձարն ու հնարը  
Պիտի տեսնեիր նրա պես հստակ.  
Գործեիր պիտի նրա պես ազնիվ,  
Ազգը պահեիր հացիվ ու կեցիվ,  
Բայց... թագը գլխիդ ծանրացած հազիվ՝  
Դու հորդ պատվին գոռ հավակնեցի ի: <sup>53</sup>

Աստծո անեծքն է, թե դրդումը հոգու սատանայական դևի, որ, ըստ ավանդության, գամում են նրան շղթայակապ տառապանքի... Երևույթը բանաստեղծին հուշում է բարոյականը. «Թող իշխանության հավակնորդները // Թո բախտից քաղեն դաս իրենց համար»:

Պուեմում Նվարդ Ավագյանն առանձնացնում է Արշակ Երկրորդին, Պապին, Աշոտ Երկաթին, ըստ ավանդույթի բնութագրում նրանց կերպարները՝ ուժեղ և թույլ կողմերով, առանձնացնում է Պապին, ափսոսանքով նշում նրա արքայական հանձարի նորոգումներն ու անկատար մնացած երազանքները և ժամանակների հեռավորությունը միացնում հայոց Ճակատագրի անկումներով.

Ավան, Պապ արքա, շատ բան չի փոխվել  
Թո հեռու, անցած ժամանակներից,  
Ազատ և անկախ ապրելու համար  
Արյամբ վճարելն օրենք է նորից,  
Դարը հիմա էլ՝ պղտոր գետ վարար,  
Մենք՝ նրա անթիվ ալիքների դեմ՝  
Կովող գլաքար... <sup>54</sup>

<sup>53</sup> Նոյն տեղում, Էջ 151:

<sup>54</sup> Նոյն տեղում, Էջ 155:



Պոեմն ավարտվում է «Նավը ճանապարհին» վերջաբանով, որտեղ բանաստեղծը խորհուրդ է կարդում, թե անհայթ մնալու համար պետք է թիկոնք ունենալ «Մեսրոս ու Մուշեղ և գործի այրեր կուռ ու համախումբ»: Միայն այդպես գալիք դարձ բարի կիխի և հաղթանակները չեն լինի ապարդյուն.

*Դաս քաղենք կյանքից ի շահ մեր շահի՝  
Ի իսկ զենքերով խսիենք թշնամուն:*<sup>55</sup>

\*\*\*

Սումգայիթյան եղեռնի զոհերի հիշատակին նվիրված պոեմում («1988, փետրվար 27-29») Արիս Արսենին անսպասելի կասկածանքը փարատում է «անցած հուշերի արթնացումով, թե գայլը մնում է գայլ, և «այդպես եղել է բոլոր դարերում, բոլոր դարերում»<sup>56</sup>, բոլոր դարերում ավերվել են քարերն ու դարերը հայոց և թուրք-ադրբեցանցին վայրի մոլուցքով արհավիրք է եղել հայերի գլխին և թող սա վերջինը լինի, վերջին ոճիրը:

Հետաքրքիր հղացում է Արսենիի «Լոռության րոպե» պոեմը: Նվիրելով այն հայրենի Կոճողուտ գյուղի նահատակներին՝ հեղինակը անուն առ անուն գրանցում է յուրաքանչյուրի կենսագրական տեղեկանքը և լրացնում այն նահատակի նվիրական երդումի խոսքով: Այսպես խոսեց Արթուր Թադևոսյանը.

*... Եվ հավերժության խորհուրդն է, ահա,  
Մեզնից առաջ են լեռներն այս ծնվել,  
Ու մեզ հետ ապրում, կանգուն են հիմա,  
Մեզնից հետո էլ դեռ պիտի ապրեն  
Դարերում գալիք, հավիտյան անմահ:*

55 Նոյն տեղում, էջ 158:

56 Արսենի Ա., Երկերի ժողովածու, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2013, էջ 115:



...Մենք մահկանացու, բայց անմահացանք  
Մահով իմացյալ...<sup>57</sup>

Բայց նահատակների կենսագրությունը շարունակվում է: Վերջին նահատակի հրաժեշտի խոսքը, թե «կգամ», մնում է անպատճան: «Դեկար սակայն», ասում է բանաստեղծը, բայց և՝ «Եկար հուշաբարի տեսրով»: Անդարձ ցավի մրմուները ձուլվում են լուրջան դուռեւների խորհրդավորությանը և կանգուն հուշաբարերն արձանագրում են հավատը, որ կայուն լինի խաղաղությունը:

Արիս Արսենիի պոեմներում զգալի են ազգային ժակատագրի դառնագին վերապրումները, բայց առույգ է հնչում արյան կանչի անպարտելիությունը հայոց պատմության դասերում.

Ու... որոշեցին սպանել Էլի,  
Սպանել, որ ես դեռ... հայ եմ այսօր,  
Բայց ես չմեռա՛,  
Ինչպես չմեռա բոլո՞ր դարերում<sup>58</sup>...

\*\*\*

Արցախի պատմության դրվագների գեղարվեստական մի ամբողջ շղթա են կազմում Արտեմ Հարությունյանի քերթվածները՝ «Լամակ Նոյին», «Հուդայի արձակուրդը» և «Հեռուստապոեմներ» գրքերում: Այստեղ ամբողջ 20-րդ դարն է հայոց ազգային շարժման համաշխարհային առնչությունների ոլորտում: Ամեն ինչ սկսվում է «Լամակ Նոյին» ուղերձից: Նոր ջրհեղեղ է համակել աշխարհին և բանատեղծը տագնապով դիմում է նահապետին. «Նոյ, եթե կարող ես, Արցախը նույնպես// վերցրու լաստիդ վրա: Նոյ, ես դարաբաղցի եմ և հուսով եմ //իննդրանքս չես մերժի, // որպես ապուապերիս պապերից մեկը, //ես նկարդ տեսել եմ պապիս հին տան պատին, //կանաչ

<sup>57</sup> Նոյն տեղում, էջ 125:

<sup>58</sup> Նոյն տեղում, էջ 115:

դրախտում՝ Շուշիում, //որ հիմա ազատության Տապանն է տիեզերքում, // չնայած ջրհեղեղը վաղուց է չըվել»<sup>59</sup>:

Ապա բանաստեղծը թախանձում է Նոյին՝ իրեն «վերցնելու Քսանմեկերորդ դարի անձնակազմի համար» և հիշեցնում, որ դեռ կարող է նրա հետ Ճամփա ընկնել «ատոմային ջրհեղեղից հետո»: Բայց իր կենսագրության ժամանակը 20-րդ դարն է, ոչրագործ դար՝ աղետներով լեցուն, որի թվականներից հառնում են Հայաստանի պատմության տեսիլները: Արժե այս տեսակետից վերլուծել «Հայաստան՝ նորից անկախացող երկիր» պոեմը:

*Աստծուց այնքան հեռու և այնքան մոտ  
Թուրքիային,  
զգում եմ ինչ-որ վտանգ կա մեր շուրջը,  
անձրևոտ օդը գիտակցում է դա բոլոր  
զգայարաններով...<sup>60</sup>*

Վտանգի այս տագնապը նման է Ճակատագրի, իսկ ազգային ժողովում պահմտողի են խաղում քաղաքական ուժերը՝ նոյնացած մաֆիոզ խմբերին: Պոեմը բանաստեղծի հարցումն է առ Հայաստան՝ պատասխան տալով բազում ինչուներից ժողովուրդը հոգնել է կուսակցությունների հետ պահմտողի խաղալուց, «քո զավակները դրված են երազի ժայռոտ տեղանքում», դարձի հուսերն ապարդյուն են, իսկ տնտեսական հիվանդությունը կազմակերպված մարդապանություն է թուրքիայի և Ադրբեյջանի կողմից:

*Երբ Թուրքական բորենին  
թեզ աքսորում էր անհայտություն  
և 1915-ին ցեղասպանված դիակներից  
սարեր էին բարձրանում,  
թեզ ոչ ոք չեռք չմեկնեց.*

<sup>59</sup> Հարությունյան Ա., Նամակ Նոյին, Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 1997, էջ 46:

<sup>60</sup> Հարությունյան Ա., Հուդայի արձակուրդը, Երևան, ԳՄ հրատարակչություն, 2003, էջ 460:



*միայն մահվան չոր անապատ  
և համակենտրոնացման բարբարու  
Ճամբար...<sup>61</sup>*

Կենսագրական իր «դեգերումները» բանաստեղծը հարստացնում է Հայաստանի հետ զրոյց - մտորումներով, հիշեցնում նրան անցյալն ու ներկան և նրա քաղաքական քարտեզի վրա Նշմարում անցանկայի ստվերներ. տոտալիտար խեղկատակ Բրեժենի, ստալինյան տարիների 37 միլիոն մատնիչ մատերիալներ՝ հարևանը հարևանի, եղբայրը եղբոր դեմ և դեռ հիմա Էլ «Ստալինի վերածեփված գաջքարե-բրոնզե ոտքերը կանգնած են մատնության թաց պուրակում»<sup>62</sup>: Ժամանակին սարսափով էինք նայում Ստալինի բեղմորութի մեջ կորած Ճիվաղ դեմքին, իրեշը կարծես սրբվեց մոռացությամբ, բայց հիմա հայտնվեցին այլ Ճիվաղներ՝ Մարքսի կացրած մորուքով, բայց բռնակալ մորուքների դարն ավարտվել է և սկսվել է «սափրված ստորոտյան դարը»: Հարցումներն անսպառ են և հանգույցներն ավելի՝ Արցախ, ցեղասպանություն, Արշիլ Գորկի, Չարենց, Բակունց և լուծելի կամ անլուծելի անջրպետներ, բայց բանաստեղծի երևակայությունը թոփչք է կատարում դեպի անցյալը, որի մշուշից հառնում է «Վրեժով լցված... հինավորց Հայաստանը, այնքան հեռու թուրքիայից և այնքան մոտ Աստծուն»:

Արտեմ Հարությունյանի ոճին առանձնահատուկ է բանավեճը: Իրականությունը նա դիտում է իդեալականի ու առօրեականի համադրության մեջ և անթաքոյց ուղղամտությամբ իրական-անքնականին հակադրում է իր իդեալը: Այս հակադրության սրությունը նրա ոճին հաճախ հաղորդում է գրոտեսկային երանգ: Այս տեսակետից բնորոշ է «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում...» պոեմը, որը քաղաքական սատիրա է՝ ուղղված ՀՀ կուսակցության հակազգային գործելակերպի դեմ.

<sup>61</sup> Նոյն տեղում, Էջ 180:

<sup>62</sup> Նոյն տեղում, Էջ 182:



Բազմած ոսկու նուրբ շողերին  
ստի թևով թռչելով,  
ՀՀ-Ները հրաշտվելով  
ներս խուժեցին հյուրանց.<sup>63</sup>

Պարողիկ այս սկիզբը (Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմի նախերգանքի ոճով) գրողական հայացք է, որի դիտակետից ուրվագծվում են կուսակցութան առաջնորդի քրմական կեցվածքն ու կամակատարների հավակնութ ձիչերը: Սրանց հավակնությունները՝ վերստին տիրանալու իշխանական դիրքերին, առիթ են դառնում վերիիշելու ազգակործան այն արհավիրքները, որոնք պատճառ դարձան պետական ու քաղաքական այլասերման: Դրակուլան՝ ՀՀ-ական հրեշի ուրվականը, սպառնում է վերստին ազգը մատնել խավարի, աղքատության, արտագաղթի, Արցախը Թուրքիային վաճառելու արհավիրքին, որի հանդեպ բանստեղծը պատվար է հոչակում իր ազգասիրական երդումը.


Իսկ ես դարաբաղյան իմ ձիչն եմ բարձրացնում  
Ճեր աշխարհի յուղոտ, ինքնարավ, հափրացած դեմքերի վրա,  
Ես ասում եմ Քիրսն ու Մասիսը նոյն բարձրությունն են,  
Նոյն ազգի ըմբոստ, նախշուն Ոգիները,  
Ուր հայ մարդու անմեղ արյունն է թափվել  
և մակարդվելով դարձել Հայոց հող...<sup>64</sup>

Պոստմոդեռնիզմը լիակատար ազատություն է տալիս Արտեմ Հարությունյանին՝ մերժելու այն ամենը, ինչով կառավարվում էր անցած ֆորմացիայի գրական, հասարակական ու գաղափարական նորմատիվը, և այն ամենը, ինչ շահադիտորեն նենգափոխում է արդի քաղաքակրթության իրավական կողեքսները:

<sup>63</sup> Հարությունյան Ա., «Եռուստապեմներ՝ «Ծուշի» և «Բաբելոն» հյուրանոցների աշտարակից, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2010, էջ 124:

<sup>64</sup> Նոյն տեղում, էջ 137:

Ընդհանրացնելով հարցի դրվածքը աշխատանքի այս հատվածում կարող ենք ասել, որ արցախյան շարժումն ազատագրական պայքար լինելով հանդերձ, միաժամանակ ինքնաբացահայտման ու ինքնաճանաչման գիտակցական հայտնություն եղավ: Դա առիթ հանդիսացավ Արցախի պատմության, ֆիզիկական ու հոգևոր հարստության բացահայտման, արցախյան բարբառի, բանահյուսության և մշակութային այլ ոլորտների ուսումնասիրության, որոնք իմաստավորեցին արցախյան պայքարի հաղթանակն ու անկախ պետականության կազմավորման գործընթացը:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ինչպես հայտնի է, 1921թ. Խորհրդային Միության պետական կազմավորման շրջանում, Ստալինի նենգամիտ դերակատարությամբ Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղն անջատվում են Հայաստանից և բռնակցվում Ադրբեյջանին. ժամանակի ընթացքում Նախիջևանը հայարափակվում է արմատապես: Իսկ Լեռնային Ղարաբաղը, ընդդիմադիր լինելով գաղութացման քաղաքականությանը, պահպանում է իր ազգային ինքնությունը: Գաղտնիքն այն է, որ Նախիջևանի հայությունը չուներ ազգային մշակույթ, մինչդեռ Ղարաբաղում գործում էին ազգային մշակույթի ուղղություններ՝ մամուլը, հրապարակախոսությունը, գրականությունը: Այս փաստով ևս նշանակալիորեն ընդգծվում է ղարաբաղյան գրական միավորման դերակատարությունը:

2. Հայ գրողների ղարաբաղյան միավորումը ձևավորելու գործում նշանակալից էր Գրիգոր Ներսիսյանի նախաձեռնությունը: Նա արդեն Ճանաչում ուներ որպես տաղանդավոր բանաստեղծ և իր ստեղծագործությամբ ուղղություն տվեց արցախյան պոեզիային: Ներսիսյանի գործունեությունն ընդհատվեց 1937-ին, երբ նա զոհ դարձավ ստալինյան բռնությանը: Հետագա տարիներին Արցախի գրական միավորումը մեծ դժվարություններով շարունակում է իր գործունեությունը՝ թաթով Հուրյանի, Միքայել Հարությունյանի, Բոգդան Զանյանի, Բագրատ Ովուբարյանի ղեկավարությամբ: Խրուչչովյան ազատականացման տարիներին Արցախի գրական կազմակերպությունը հանդես է գալիս մարզի մտավորականության շարժման ավանդադրում և որոշակի քայլեր է կատարում Ղարաբաղը Հայաստանին միացնելու ուղղությամբ:

3. Ազգային ազատագրական շարժման այս միտումները գործնական բնույթ են ստանում գորբաչովյան «պերեստրոյկայի» նշանաբանով: Եվ Խորհրդային Միության ազգային միավորումներից առաջինն Արցախն է արձագանքում «վերակառուցման» ծրագրին: Արցախիները՝ ազգային ինքնորոշման իրավական հիմունքով, հարց են բարձրացնում աղբեջանական գաղութատիրությունից ազատագրվելու համար: Սկսվում է պայքարի նոր շրջան: Ազգային շարժման առաջատար դիրքերում էր պոեզիան, որ նախորդ տասնամյակներին ստեղծել էր Հայրենիքի կերպարը որպես հավերժական արժեք և ազատության խորհրդանիշ: Այս խմաստով Արցախի ազգային շարժման պատմական ուղեգծում նշանակալից է ղարաբառյան մոտիվը Գ. Ներսիսյանի, Թ. Հովրյանի, Ա. Գրաշու, Բ. Զանյանի, Գ. Գարիբելյանի, Հ. Բեգլարյանի, Վ. Հակոբյանի պոեզիայում:

4. Արցախի ազատագրական պայքարը համազգային էր իր նշանակությամբ և դրան արձագանքել են հայոց բանաստեղծության երևելի դեմքերը՝ Սիրլվա Կապուտիկյան, Համո Սահյան, Վահագն Դավթյան, Հրաչյա Հովհաննիսյան և ուրիշներ: Սակայն մեր աշխատության մեջ անդրադարձել ենք Արցախի բանաստեղծներին, ցուց տալու համար, թե Արցախն ինչպես է ընկալել ազատագրական պայքարը և ինչ նոր երանգներ է հայտնաբերում ազգային ազատագրական պոեզիայի պատմության մեջ: «Բանաստեղծի և բանաստեղծության ձայն հայրենականը» գլխում անդրադարձել ենք ազատամարտի արցախյան պոեզիային, նրա գեղարվեստական ու գաղափարական առանձնահատկություններին, պատկերային ու լեզվական միջոցներին՝ գիտական ուսումնասիրության նյութ դարձնելով առաջատար բանաստեղծների (Գ. Գարիբելյան, Հ. Բեգլարյան, Վ. Հակոբյան, Բ. Զանյան, Ա. Հարությունյան, Լ. Ավագյան, Մ. Ցախշունց, Յու. Սահակյան, Ռ. Եսայան և այլն) ստեղծագործությունները:

5. Ազգային ազատագրական շարժումը հասարակական մտքի քննության առաջ դրեց հայոց պատմության վերագնահատության հարցը: Լևոն Տեր-Պետրոսյանի արտահայտությունը, թե «պատմությունը կեղծ գիտություն է», հիմք հանդիսացավ <<Ծ-ի տեսաբաների համար ժխտելու հայոց պատմությունը՝ բնութագրելով այն որպես կեղծիքի, անգրագիտության, սխալների ու մոլորությունների հավերժական շրջան: Այս տեսությամբ բացասաբար է գնահատվում հայ Եկեղեցու դերը, ինչպես նաև հայոց դիվանագիտական կողմնորոշումը Ռուսաստանի նկատմամբ՝ հօգուտ թուրքական կողմնորոշման:

Արցախի պատմագիտական միտքը մերժում է հայոց պատմության վերաբերյալ ժխտական տեսակետները և պատմության դրվագներում հայտնաբերում մնայուն արժեքներ, որոնք ուսանելի դասեր ունեն ազգային ինքնության և ազատագրական պայքարի հաստատման համար:

«Պատմության դասերը» գլուխը նվիրված է Վարդան Հակոբյանի, Հրաչյա Բեգլարյանի, Սոկրատ Խանյանի, Նվարդ Ավագյանի, Արտեմ Հարությունյանի, Ռոբերտ Եսայանի, Արիս Արսենիի պոեմների վերլուծությանը:



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱԽ

1. Աղաբարյան Ս., XX դարի հայ գրականության զուգահեռականներում, Երևան, «Սովետական գրող», հրատարակչություն, 1984, 524 էջ:
2. Ավագյան Ն., Ծանր լուս, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2004թ., 240 էջ:
3. Ավետիսյան Զ., Գրականության տեսություն, Երևան, «Նախի» հրատարակչություն, 1998թ., 224 էջ:
4. Ավետիսյան Զ., Գեղարվեստական մտածողության հետքերով, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1985թ., 160 էջ:
5. Արիստոնել, Պոետիկա, Երևան, Հայպետհրատ, 1955թ., 253 էջ:
6. Արսենի Ա., Երկերի ժողովածու, գիրք առաջին, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս», հրատարակչություն, 2012թ., 264 էջ:
7. Բախտին Մ., Դոստոևսկու պոետիկայի հիմնախնդիրները, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2010թ., 272 էջ:
8. Բեգլարյան Հր., Արցախ-Լամե, Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2000թ., 658 էջ:
9. Բեգլարյան Հր., Քնար Ղարաբաղի, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2004թ., 560 էջ:
10. Բեգլարյան Հր., Արցախ-Լամե, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Կաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2005թ., 648 էջ:
11. Բեգլարյան Հր., Արցախ-Լամե, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Կաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2006թ., 642 էջ:
12. Բեգլարյան Հր., Արցախ-Լամե, գիրք տասներորդ, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Կաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2014թ., 680 էջ:
13. Բերտրան Ռ., Փիլիսոփայության պրոբլեմները, «Զանգակ-97» հրատարակչություն, Երևան, 2004թ., 124 էջ:
14. Բյոռնս Ռ., Ոտարորիկ առջիկը, Երևան, «Իրավունք» հրատարակչություն, 2007թ., 112 էջ:
15. Բրոդսկի Ի., Տեղատարափի շաշունը, Ստեփանակերտ, «Ոգի-Նախի» հրատարակչություն, 2011թ., 336 էջ:
16. Գաբրիելյան Գ., Ողջակիզված կյանք, Ստեփանակերտ, ԼՂՀ Հրատաւուկում, 1994թ., 47 էջ:
17. Գաբրիելյան Գ., Մուսա լեռան...երկու որդին, Ստեփանակերտ, Ստեփանակերտի պոլիգրաֆ ձեռնարկություն, 1995թ., 52 էջ:

18. Գաբրիելյան Գ., Արցախյան նվագարան, Երևան, «Հանգակ» հրատակչություն, 2002թ., 200 էջ:
19. Գաբրիելյան Գ., Ընտրանի, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատակչություն, 2007թ., 256 էջ:
20. Գուրգեն Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում, Ստեփանակերտ, «Վաշագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2007թ., 367 էջ:
21. Գրաշի Ա., Ծիածանի յոթ երգը, Երևան, «Հայպետհրատ», 1961թ., 527 էջ:
22. Գրաշի Ա., Արի գնանք Ղարաբաղ, Երևան «ՎՄՎ Պրինտ» հրատակչություն, 2012թ., 432 էջ:
23. Դաստուսկի Ֆ., Կարամազով Եղբայրներ, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1983թ., 464 էջ:
24. Դերիկյան Վ., Չսկսված և չավարտված պատերազմը, Երևան, «Հանգակ» հրատարակչություն, 2014թ., 432 էջ:
25. Եսայան Ռ., Ասուաների եզերքը, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Վաշագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2008թ., 480 էջ:
26. Եվլուշենկո Եվգ., Երրորդ հիշողություն, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1974թ., 188 էջ:
27. Զարյան Ն., Երկերի ժողովածու, հատոր առաջին, Երևան, «Հայպետհրատ», 1962թ., 569 էջ:
28. Էրեյան Հ., Եղիշն Զարենցի պոետիկան, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1986թ., 452 էջ:
29. Էլիոթ Թ., Մեոյալ Երկիրը, Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 1991թ., 159 էջ:
30. Էկո Ու., Գրառումներ «Վարդի անվան» էջերին, Երևան, «Անտարես» հրատարակչություն, 2014թ., 143 էջ:
31. Էմին Գ., Երկերի ժողովածու, հատոր 2, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1985, 320 էջ:
32. Թոփչյան Ալ, Բաղի սահմանները, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1978թ., 240 էջ:
33. Իշխանյան Ռ., Երրորդ ուժի բացառման օրենքը, Երևան, «Ազատ խոսք» հրատարակչություն, 1991թ., 206 էջ:
34. Խահակյան Ա., Հայումկի Երգեր, Երևան, «Արևիկ» հրատարակչություն, 2012թ., 120 էջ:

թյուն, 1990թ., 320 էջ:

35. Իսահակյան Ավ., Վարպետը և Արցախը, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2008թ., 128 էջ:

36. Խանյան Ս., Ընտիր Երկեր, հատոր 3, Ստեփանակերտ, «Սոնա» հրատարակչություն, 2010թ., 480 էջ:

37. Խաչատրյան Հ., Գրական տեղեկատու, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1986թ., 624 էջ:

38. Խորենացի Մ., Պատմություն հայոց, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1968թ., 342 էջ:

39. Կաղանկատվացի Մ., Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1969թ., 320 էջ:

40. Կանկե Վ., Փիլիսոփայություն, Երևան, «Զանգակ-97» հրատարակչություն, 2001թ., 304 էջ:

41. Կանտ Ի., Պրոլեկոմեններ ապագա ամեն մետաֆիզիկայի, Երևան, «Սարգսի Խաչենց» հրատարակչություն, 2000թ., 194 էջ:

42. Կապուտիկյան Ս., Ծիածանի հարյուր յոթ գոյնները, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1983թ., 236 էջ:

43. Հակոբյան Վ., Երկեր, հատոր Ա., Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2006թ., 688 էջ:

44. Հակոբյան Վ., Երկեր, հատոր Բ., Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2007թ., 464 էջ:

45. Հակոբյան Վ., Երկեր, հատոր Գ., Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2007թ., 480 էջ:

46. Հակոբյան Վ., Երկեր, հատոր Դ, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Վաչագան Բաբեպաշտ» հրատարակչություն, 2008թ., 656 էջ:

47. Հակոբյան Վ., Երկեր, հատոր Ե, Ստեփանակերտ «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2008թ., 648 էջ:

48. Հակոբյան Վ., Մենարան, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1996թ., 435 էջ:

49. Հակոբյան Վ., Երգը որպես հանդիպման վայր, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2009թ., 272 էջ:

50. Հակոբյան Վ., Փակիր աչքերդ՝ չերևաս, Երևան, «Ակտուալ Արվեստ» հրատարակչություն, 2011թ., 136 էջ:

51. Հակոբյան Վ., Քրիստոսի ծաղկները կամ դադարներ՝ կտրուկ շրջադարձներով, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2001թ., 114 էջ:
52. Հայ գրականության ազգային առանձնահատկությունները, Երևան, <<ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2003թ., 320 էջ:
53. Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան, Հեղինակային հրատարակություն, Երևան, 2011, 644 էջ:
54. Հարությունյան Ա., Նամակ Նոյին, Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 1997թ., 345 էջ:
55. Հարությունյան Ա., Հուդայի արձակուրդը, Երևան <ԳՄ հրատարակչություն, 2003թ., 460 էջ:
56. Հարությունյան Ա., Հեռուստապեմսեր «Ծուշի» և «Բարելոն» հյուրանոցների աշտարակից, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2010թ., 654 էջ:
57. Հարությունյան Ա., Ընտրանի ամերիկյան և անգլիական պոեզիայի, Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 2000թ., 570 էջ:
58. Հեգել Գևորգ-Վիլհելմ Ֆրիդրիխ, Փիլիսոփայության ներածություն, Երևան, Հայպետհրատ հրատարակչություն, 1964թ., 290 էջ:
59. Հուրյան Թ., Լուսապատճեն, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1982թ., 96 էջ:
60. Ղազարյան Հ., Արցախի բանաստեղծական արվեստի լեզուն և ոճը, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2007թ., 176 էջ:
61. Ղահրամանյան Կ., Արցախ. Խեղաթյուրված և անտեսված հարցեր, Երևան ԴԱԼ հրատարակչություն, 2013թ., 216 էջ:
62. Մաթևոսյան Հ., Սպիտակ թղթի առջև, Երևան, «Հայագիտակ» հրատարակչություն, 2004թ., 368 էջ:
63. Մաթևոսյան Հ., Ես ես եմ, Երևան, «Ուսկան Երևանցի» հրատարակչություն, 2005թ., 518 էջ:
64. Մահարի Գ., Չարենց-Նամե, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1968թ., 103 էջ:
65. Մանդելշտամ Օ., Մեգանում, Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 1992թ., 216 էջ:
66. Մարգարյան Ս., Պատմության ժամանակը, Երևան, «Սփյուռք» հրատարակչություն, 2000թ., 212 էջ:

67. Մարգարյան Ս., Գրական գուգահեռներ, Երևան, «ԳՄ հրատարակչություն», 2009թ., 248 էջ:
68. Մուրադյան Ա., Հովհաննես Շիրազ, գիրք Ա, ԵՊՀ հրատարակչություն, 2012թ., 576 էջ:
69. Յախշունց Մ., Առեղծվածներ, Երևան, «Նաիրի» հրատարակչություն, 1998թ., 421 էջ:
70. Յախշունց Մ., Երկնամերձ Երկիր, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2007թ., 400 էջ:
71. Ներսիսյան Գ., Վերջին երգից առաջ, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2013թ., 176 էջ:
72. Նիցշեն Ֆ., Այսպես խոսեց Զրադաշտը, Երևան, «Վան Արյան» հրատարակչություն, 2002թ., 368 էջ:
73. Շիրազ Հովհ., Հատընտիր, Երևան, «Հայպետհրատ» հրատարակչություն, 2012թ., 344 էջ:
74. Շտայներ Ո., Ազատության փիլիսոփայություն, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատարակչություն, 1998թ., էջ 197:
75. Շտիկյան Ա., Հայ նոր գրականության ժամանակագրություն (1851-1865), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1983թ., 538 էջ:
76. Պեշիկբաշյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1987թ., 563 էջ:
77. Զանյան Բ., Հեռացած հեռուներ, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2007թ., 240 էջ:
78. Զրբացյան Էդ., Գրականագիտության ներածություն, Երևան, 1996թ., 352 էջ:
79. Զրբացյան Էդ., Գեղագիտություն և գրականություն, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 1983թ., 440 էջ:
80. Զրբացյան Էդ., Մախչանյան Հ., Գրականագիտական բառարան, Երևան, «Լուս» հրատարակչություն, 1980թ., 352 էջ:
81. Ռեմբր Ա., Բանաստեղծություններ, Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 1991թ., 192 էջ:
82. Սալահյան Հ., Դասականներ և ժամանակակիցներ, Երևան, «Հայստան» հրատարակչություն, 1971թ., 594 էջ:
83. Սարդարյան Կ., Պատմություն և իրականություն, Երևան, «Պարբե-

րական» հրատարակչություն, 1991թ., 144 էջ:

84. Սարդարյան Կ., Անցման շրջանի օրինաչափությունները և հայ քաղաքական միտքը, Երևան, «Ամարաս» հրատարակչություն, 1997թ., 72 էջ:

85. Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գիրք 1, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1988թ., 536 էջ:

86. Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գիրք 2, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1989թ., 568 էջ:

87. Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գիրք 3, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2002թ., 651 էջ:

88. Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գիրք 4, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2004թ., 636 էջ:

89. Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գիրք 5, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2009թ., 552 էջ:

90. Սարինյան Ս., Հայոց ազգային գաղափարաբանություն, Երևան, «Զանգակ-97» հրատարակչություն, 2005թ., 328 էջ:

91. Սարինյան Ս., Ի հեճուկս, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2006թ., 352 էջ:

92. Սարինյան Ս., Գեղարվեստական գրականության պատմությունը, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1979թ., 364 էջ:

93. Սահակյան Յու., Վեց գրքից, Ստեփանակերտ, «Սոնա» հրատարակչություն, 2011թ., 164 էջ:

94. Սողոմոնյան Տ., Տաճարի ճանապարհին կամ մենարանի ոլխտավորը, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2007թ., 112 էջ:

95. Սողոմոնյան Տ., Վարդան Հակոբյանի պոեզիայի գեղագիտական համակարգը, Ստեփանակերտ, «Սոնա» հրատարակչություն, 2011թ., 128 էջ:

96. Սողոմոնյան Ս., Ժամանակակից հայ բանաստեղծներ, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1967թ., 514 էջ:

97. Սուրխամթյան Հ., Հոմերոս Շեքսպիր, Երևան, Պետական հրատարակչություն, 1935թ., 582 էջ:

98. Անակ Պ., Երկերի ժողովածու, հատոր 5, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1974 թ., 414 էջ:



99. Վալերի Պ., Ոգու քաղաքականությունը, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատարակչություն, 2005թ., 289 էջ:

100. Տեն Հ., Գեղարվեստի փիլիսոփայությունը, Երևան, Պետիրատ, 1936թ., 534 էջ:

101. Ուելլեք Ռընե, Ուորրեն Օսթին, Գրականության տեսություն, Երևան «Սարգիս Խաչենց» հրատարակչություն, 2008թ., 514 էջ:

102. Ուիթմեն Ու., Խոտի տերևները, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2012թ., 160 էջ:

103. Ովուբարյան Բ., Արցախյան գոյապայքարը, Երևան, «Գիր Գրոց» հրատարակչություն, 1994թ., 300 էջ:

104. Քալանթարյան Ժ., Անդրադաներ, Երևան, «Զանգակ-97» հրատարակչություն, 2003թ., 232 էջ:

105. Օրտեգա-Ի-Գասեթ Խ., Մշակույթի փիլիսոփայություն, Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 1999թ., 192 էջ:

106. Ֆոլշեյդ Դ., Մեծ փիլիսոփայություններ, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատարակչություն, 2002թ., 168 էջ:

### Թերթեր և ամսագրեր

1. «Ազդակ», 2004թ. 8 մայիսի, Բեյրութ:

2. «Արցախ» հանդես, 1994, N 3-4:

3. «Գրականագիտական հանդես», 2005, Ա (Գ)

4. «Գրականագիտական հանդես», 2005, Բ (Դ)

5. «Եղիցի լուս» թերթ, 2008թ., N5, էջ 3:

### Կայք էջեր

1. [www.rospisatel.ru](http://www.rospisatel.ru) Илья Плеханов снято самоцензурой.

2. Granish.org.

3. Chekhov.am

4. Militera.lib.ru



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....	3
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
3. ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԱՉԱՏԱՄԱՐՏԻ ԱՐՑԱԽԱՅԱ ՊՈԵԶԻԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՐԿԱԳԻԾԸ.....	17
4. ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԲԱԼԱՏԵՂԾԻ ԵՎ ԲԱԼԱՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԶԱՅՆ ՀԱՅՐԵՆԱԿԱԼԸ.....	47
5. ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ.....	121
6. ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	160
7. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	163

ԱՄԱԼՅԱ ՎԱՀԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԶԱՏԱՄԱՐՏԻ  
ԱՐՑԱԽՅԱՆ ՊՈԵԶԻԱՆ  
Գրականագիտություն

Խմբագիր՝	Վարդան Հակոբյան
Սրբագրիչ՝	Օֆելյա Գրիգորյան
Էջադրումը՝	Մարինա Ավանեսյանի
Կազմի ձևավորումը	Մերի Դրավյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16:  
Ծավալը՝ 10.75 տպ. մամուլ: Տպաքանակը՝

Տպագրվել է «Դիզակ պյուս» հրատարակչության տպարանում  
Ստեփանակերտ, Հ. Հակոբյան, 25